




9. ՏԱՐԻ 1964
ՀՈԿՏԵՄԲԵՐ 10

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բւգին
 ամսագիր
 գրականություն
 եւ արտեստի

Վարիչ Խմբագիր
 Կ. ՍԱՍՈՅԻ
 Խմբագիրներ
 Ե. ԳՅԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

Խմբագրություններ
 ԱՆԴԱՍՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԻ
 Տ. ՈՍԿՈՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

Խմբագրություն չափ
 ED. BOYADJIAN
 B. P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային թիվ 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՒՆ

- ԵԴ. ՊՅԱՋԵԱՆ
- Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- Յ. ԳԵՂԱՐԻ
- Հ. ՔՈՋԱՐ
- Վ. ԹԷՔԵԱՆ
- Մ. ՆԱԻԲԱ
- Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
- Լ. ՄԿՐՏՋԵԱՆ
- ԵՂ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
- ԵԴ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
- Ն. ՊԵՇԿԵՐԱՇԼԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բագին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Գ. ՅԱՐԻ, ԹԻԻ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՄԱՐՈՒՄ

ԳԼՈՐԻՔ

*ՍԱՐԳԻՐ, ԱՆՐԱՆՐ,
ԴՐՈՒՄ ԴՐՈՒՄ ԱՆ ԿԵՆԵ*

Ահա ձեզի բաց նամակ, ահա ձեզի ցույց երգ,
Մարգե՛ր, մարգե՛ր, դուք մանր ու կեղծ,
Հագնախնդո՛ւ:
Դառն սրտի, կիզուող սրտի,
Եւ հագնի, որ ձեր ժամգինն ու բարբոսին մէջ կը փտի՝
Ահա ձեզի արդ լեզի բերք:

Սրտիս խորունկ տեղերէն, - վերքի աշխարհ եւ լոյսի -,
Կը շղեմ արդ ես ձեզի
Կրակ յայզի
Իմ կարմիր ճիւղն աչսոր,
Ջղայնութիւնս կարմիր,
Խօսքս բոսոր...

Սեւ հայեացքին տակ ձեր հիմա
Իմ խոհերու ճշմարտութեան կաթսան կ'եռայ:
Հեռո՛ւն, հեռո՛ւն,
Մէջը ինկած տիեզերքի աստուածախոր անհուններուն,
Հսկայական բա՛ն մը կու լայ
Ընդդէմ մարդու մութին ներկայ...

Ձե՛մ ուզեր ձեզ...-

Պատմութեան մէջ, սկիզբէ՛ն իսկ կը բանա՛ւ էջ՝

Մեղքի՛ անշէջ:

Կը բացուի էջ՝ սեւ անցեալի,

Արցունքով լի ամիժեալի, հալածեալի,

հաշտեալի՛:

Կը բացուի էջ՝ բռնակալի անհաշտեալի,

Անտանելի՛...

Ձե՛մ ուզեր ձեզ...-

Սկիզբէ՛ն իսկ մարդ կայ տխուր,

Ու մարդկային ցա՛ւ ընդհանաւր,

Ոնիր անլուր:

Կայ դեռ մատնիչ՝

Այնքան առատ, այնքան կիզիչ:

Կայ մայրամուտ՝

Հոգի՛ յաւնճող:

✽

Մարդե՛ր, մարդե՛ր դուք մամր ու կեղծ,

Եղեմին մէջ իսկ ձեռագեղծ՝

Ձեր հասցէին,

Սա օրերու քաղաքատարին ամստերին,

Ծրա՛ր ծրա՛ր ես կը յամճեմ

Բաներ տխուր, բաներ մսե՛մ:

Ես կը յամճեմ՝

Ատելութի՛ւն:

Սեւ հակակրամք:

Ես կը յամճեմ քունաւոր բառ՝

Թշնամարար:

Օրերու մութ քաղաքատարին,

Ցաւաւ, ոխերիմ,

Կը յամճեմ ես

Հին երազներ՝ եղած երկէզ:

Բանաստեղծի գիր ու խօսքի արեւին տակ,

Դարեր՝ կ'անցնին, մոյճ ստանակայտ բազմաթիւնը դուք կը մնաք:

✽

Մարդե՛ր, մարդե՛ր, դուք մամր ու կեղծ

Ու յաւէտ եղծ՝

Մո՛լք էք յաւէտ,

Անկեցաւէտ:

Ունիք հոգի, չնչի՛ն, չնչի՛ն,

Շնորհակալ ինչպէ՛ս ըլլալ Արարիչին:

Խաբեցիք յար, դուք սէրը ձեր,
 Ամառ ձմեռ՝
 Ընկերը ձեր, երդիքը ձեր,
 Սրկի՛րը ձեր:
 Զիտեղիակի՛նք, —
 Զի խաբեցիք հո՛ւր ու երկինք:
 Հեռո՛ւ, հեռո՛ւ.—
 Կրնաք բերել ճշմարտութեան լուսամուտիս՝ մահերգուկ քու:
 Խօսքերուն դէմ բանաստեղծին խոր ու իրաւ,
 Կրնաք բերել մութ կռիւնչի միլիոն ազուս:
 Ըմբոստութեան կամ ազօքքի չունիք պապակ,
 Ունիք դուք լոկ մեծ վաճառքի խոր ախորժակ:
 Ականջիս մէջ աղմուկ էք չար,
 Այլ երբե՛ք ձայն, լուրջ, անաչառ:
 Կուզէք կերտել երկրի վրայ ոչ թէ տանար,
 Այլ հիմնել հոն միշտզգային սուտ ու դաւի մթին կաճառ:

Գիտեմ, գիտեմ,
 Աստուածը ձեր ճամբեցիք ետ,
 Զեք տուններէն, տաճարներէն,
 Մտքի վայրէն, սրտի՛ վայրէն:
 Ճամբեցիք զայն, պաղ, անաղմուկ,
 Անտանիլի իբրեւ տաղտուկ:
 Անոք որդի՛ն.—
 Զխաչեցի՛ք սակայն զայն դուք,
 Զգոնեցի՛ք ոսկէ հորթին:
 Հիմէմ ի վեր ցուրտ Հերովդէս եւ սեւ Յուդա՝
 Գրիչն արդար բանաստեղծի,
 Թող ձեր վրայ ինչպէ՛ս գրայ:
 Հսկայական բա՛ն մը հեռուն ինչպէ՛ս չլայ,
 Մարդուն դէմ հին, մարդուն մերկայ:

Մռցա՛ք թէ դուք չէք լոկ մարմին,
 Այլ մանր ԲԱՆ՝ մարմնէն անդին:
 Մթնաթաքաւ չէք միայն կաւ,
 Այլ Աստուծոյ շո՛ւնչ մը հարկաւ:
 Մանուկ էիք բարի՛ բարի՛
 Ինչո՞ւ եղաք մարդ մը ապա, մութ, վատարի:
 Անեցաւ ձեր մորքը միայն,
 Մնաց հոգին դատա՛րկ, ունա՛յն:
 Մեծ գազախար մեծա՛ւ մասամբ չպեղեցիք,
 Հաշիւնե՛ք լոկ խորացուցիք:
 Պէտք էր ձեզի շէղ մարդու խոն ու խռովք,
 Այլ ձեր հոգին՝ հոգիի գէ՛մ ժայթքեց նզովք:
 Դուք ձեր «նս»ի դքոշին տակ, կորսա՛մակ՝
 Ուխտեր ըրիք կողոպուտի, ուխտեր սուտի,
 Ու զինովցաք:



ձիգ ըրի՜ք յար հազար ու մէկ,
Ստորնութիւն միլիոն ու մէկ՝
Գիրցնելու քսակը ձեր, կալուածը ձեր
Համբանքներու եւ տարածքի մինչեւ քիւեռ:

Այսօր այստեղ, գիրի մը մէջ ընդհանրական,
Նամակի մէջ բաց ու արդար,
Կոքակեմ ձեզ՝ —
Հագույ քանի, ու մեծութեան, ու բարձունքի հակառակորդ,
Զարիքներու միշտ հին լուզարդ:
Վարմանքը ձեր՝ կոպիտ, անգութ,
Մառնահողմի նման դաժան՝
Կուլէ անվերջ ջերմն ու բարին այս աշխարհին:
Ունի՜ք աչքեր նախանձաքէժ
Եւ քերանքեր՝ բամբասանքի պղտոր ջրվէժ:

Բազմութիւն է՜ արդար մտքի, արդար հոգւոյ,
Թէ՛ ձեզմէ դուրս միշտ գերօ խիղճ ու մի՛տք գերօ:

Եղա՜ք ճշմիւ ու նստաւ մինչեւ այսօր,
Սուտէն դէպի դրամ մեկնող գիծ մը պղտոր:
Խոնաւ շուկայ, խոնաւ խանութ,
Ու խիղճ մը մութ, ու խիղճ մը բութ:
Հանն կայ ձեր շուրջ, հա՛նն բազմաթիւ,
Եւ հաննի չափ կեղտաւ հաշիւ:

Բարիքի դէմ կզպուած է՜ եւ ապահով՝
Ազատութեան հազար նիգով ու երկաթով:
Անքափա՛նց է մարքը ձերին,
Ուրիշներու խիղճ ու լացին:
Աշխարհը ձեր չունի երբեք ծով ու անտառ,
Սարեր մաքուր, արեւ պայծառ.
Զունի խոլալ, գինավութիւն ու գաղափար,
Տիեզերքի հրաշքին դէմ իրական բառ:

Աշխարհը ձեր անբնութիւն՝
Դրա՛մ է լուկ, դրամատո՛ւն:
Օրացո՞յցը ձեր ողջ կեանքին,
Ներկա՛յ օրուան ու գալիքին՝ —
Հաց ու կարագ.
Արա՛գ արա՛գ
Սուրացող կառք,
Դուրս ժայթքող նստք,
Բարձրացող շէնք ,
Սառառնող շահ:

Կծկած հոգի, կծկած լեարդ եւ մտածում,
Առտու, կէսօր եւ իրիկում,
Մարդ խաբելու, մարդ տանջելու, չճացնելու՝
Կ'ընէ՞ գիտումս սերտագուրիւն:
Ձանիք երբեք վեհ երազի աղօթագիրք,
Ունի՞ք լոկ միւթ կուտակելու անաղաւ կիրք:

Մարդը ըստ ձեր մեծ կարծիքին,
Հարկաւ, հարկ է քծնի, խաբէ,
Լօլիկին հետ եւ լօլիկի մամ քանին,
Անճը կապէ, կապէ հոգին:
Պէտք է շոյէ, շոգոքոքէ,
Հետզհետէ օճանման դէմք մը կերտէ:

Ձեր բարեւին մէջը համ կայ չար մաղթանքի,
Ձարտասանուած քէժ անէծքի:
Հանայքն է ձեր, վեհ, գերագոյն
Թերթը բանալ, մահազդ կարդալ,
Մերձաւորի մահով այդպէս հանգստանալ:

Կը յարմարի որումքը ձեր
Ե՛ւ մօր մարգու ե՛ւ մարդու ծեր.
Կը յարմարի՝
Կեանքը խաբող ամէն պարի:
Մա՛րդ է՞ք միթէ, քէ գրեթէ:
Մեքենայ որ կեանք կը քանդէ:
Մագաղթի դանակ չէ՞ք դուք
– Հաստու, կտրուկ –,
Ճշմարտութեան պարանոցին:
Ձգտեցի՞ք, ամէն դարու, սուրբը խելօք,
Անտարքնելու, մուք, անողոք:

Ազօ՞քքը ձեր, ամառ, ձմեռ,
Ըսի՛ արդէն, հարկ է կրկնել.
– «Հա՛րալ անձրեւէ, Տէ՛ր, պորտիս շուրջ,
Երջանկութեան իբրեւ երազ, միակ անուրջ:
– «Խոհանոցիս՝
Կարագ ու միս.
– «Անկողինիս՝
Բրդէ վերմակ,
Նւ ամօր տակ
Գումարուելու կիրք ընդունակ:
– «Բոլոր մարդոց շահը բոլոր,
Անի՛ւ կլոր՝
Գլու՛ք գլու՛ք,
Իյնայ շահուս փոսին մէջ մուք, անդնդախոր:
– «Նկա՛ւզ, մկա՛ւզ ինծի դրամ՝ –
Սի՛րսս կու տամ:

- Շաբաթ՝ քաղաքի խնձի դրամ՝ -
 Հագի՛ս կու տամ:
 - ՀՀովհոննեբով, տափաստանով, մուրակով խնձի դրամ, -
 Սերբյոն ամբողջ ասղենակամ,
 Դրախտին հետ անդենակամ՝
 Այլո՛ց կու տամ...

••

Մարդե՛ք, մարդե՛ք դուք մանր ու քնդծ
 Ու չարաստեղծ՝
 Ամէ՛ն տեղ էք եւ գործի մէջ ամէ՛ն տեսակ:
 Գացած էք մերք համալսարան,
 Եղած բժիշկ, իրաւաբան, աստուածաբան ու գիտնական:
 Գրող էք մերք, մերք խմբագիր,
 Նկարիչ մերք ու մերք երգիչ խորհրդատիր,
 Արդար դատի դէմ դատաւոր,
 Եկեղեցւոյ դէմ պաշտօնեայ,
 Դպրոցին դէմ դպրոցավար,
 Մանուկին դէմ դաստիարակ:
 Բժիշկ էք մերք՝ դէմ բուժումի, բժշկութեան,
 Երկրաչափ մերք՝ ընդդէմ չափի եւ ուղղութեան:
 Եւ դե՛ռ, եւ դե՛ռ,
 Արուստագէտ՝ դէմ արուեստի՝

Մարդե՛ք, մարդե՛ք,
 Պէտք է պատռել դիմակը ձեր,
 Դաժան, անէր:
 Դժբախտ ըրի՛ք ամէն քաղաք,
 Դժբախտ ըրի՛ք ազգ ու աշխարհ:
 Ծախեցի՛ք խիզ, ծախեցի՛ք գիր,
 Ծախեցի՛ք խաչ,
 Մարդեր պզտիկ, մարդեր մթին, մարդեր ամբողջ...:

Ե՛ր. ՊՕՅԱՃԵԱՆ



Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

Ներքարասիրեն ԿՈՒՋԵՄ

— Փափա, փրստ, փափա...
— Ձայնդ կտրէ, Անի, պառկէ կ'ըսեմ, ձգէ որ քնանանք, հասկցա՞ր։
Այս քանիերորդ անգամն էր որ Անիին խնդհալը կը բարկանար այսպէս, պարտադրելու համար խաղաղութիւն մը, կարենալ իրարու կապելու համար ամենազեղեցիկ տեղ մը ընդհատուած քունի մը երկու ծայրերը։
Մութ էր տակաւին։ Ոչ մէկ բան դուշակել չէր տուած առաւօտը, ոչ մէկ նշոյլ, ոչ մէկ գոյն, ոչ իսկ ծեր Թաննոսին ծեր աջազաղը՝ աւելի խել քան աւելի։ Թաղին ճշմարիտ պատուհասը։ Ուրիշ տակաւին յայտնած չէր առաւօտը, բացի այս չար, այս չարամճի խրտու՝ մէն, որ սկսած էր խռովել Անիին պզտիկ անկողինը, ժամանակէ մը ի վեր եւ որ կը լեցնէր սենեակը անվարճան բզզիւնով։
Խենթ խռովք մըն էր, որ համակած էր Անին, իրիկնամուտի պահէն սկսեալ եւ որ չէր բաժնուած իրմէն ողջ գիշերը։ Մածուկ տալնապ մը կարծես՝ որ անկիւնի պզտիկ անկողինին քովերը թուխ նստած էր ամբողջ գիշերը եւ որ կ'եռար չիմա հազար ու մէկ հնարադիտութիւններով, եւ որ ոչ մէկ արգելք կը ճանչնար այլեւս։
— Կը բաւէ, Անի, կը բաւէ, պառկէ, կ'ըսեմ քեզի։ Ոչինչ տակաւին կրնար զբաղել անկիւնի խրտու՞մը։ Հայրը ի գուր կը բարկանար, նոյն խորամանկութիւններն էին միշտ, նոյն բզզիւնը անկիւնի պզտիկ անկողինին մօտ։ Թորանջումները

չէին վերջանար հոն, անկիւնին մօտ, չէին վերջանար հառաչանքները ահագնապի պէս հնչող։ Հազի գէշ տաղնապ մըն էր երբեմն սենեակին խաղաղութիւնը խանգարողը կամ քմահաճ եւ անիմաստ պահանջներ էին։
Եւ այս պզտիկ ժամերը որ օրը կը սկսին ոչ մէկ դուրս ունին դործաւորի մը համար, հաշուաւորած քուն մը կը շարունակէ իրեն եւ քիչ մը հանգիստ, եթէ արժանի եղած է անոր։ Վայ դործաւորին, որ արթուն է այս ժամերուն, որոնք կը տարուբերին դիւերուան եւ ցերեկուան միջեւ, միշտ պատրաստ փոխելու, նոյնիսկ իրենց դո՞շը։
— Փափա, փափա...
— Ա՛լ կը բաւէ, Անի, շատ եղաւ այլեւս, լաւ տփոց մը պիտի ուտես, գիտցած ըլլաս։
— Կը չափազանցես այլեւս, փափա, արտնայ մայրը քովէն, օ՛րը դուրս յանդիմանելու խնդ աղջիկը, մոռցա՞ր արդեօք որ այսօր իր տարեդարձն է։
— Տարեդարձ, տարեդարձ, ջղայնացաւ հայրը, գնա այդ բաները դործատեղին ըսէ, տեսնելու համար թէ կաթիլ մը քրտինք կը խնայե՞ն քեզի։
— Գործէդ դատ ուրիշ խօսք չունի՞ր, կը մտածես միայն յոգնութեանդ մասին, քիչ կը մնայ որ մեզ ամէնքս մը խորճես քրտինքի բաղնիքներու մէջ։
— Հանգիստ թողէ՛ք դիւս, հանգիստ։
— Բայց գիտցած եղի որ լուրջ բան է տարեդարձ մը, չարամանկեց մայրը, չա՛տ լուրջ բան՝ եօթը տարեկան աղջը-

նախի մը համար: Ձեկատեցի՞ր որ օրերէ ի վեր ուրիշ բանի մասին մտածած չու- նի, չե՞ս տեսներ որ կաթոյի մը կ'ուրա- խանայ: Երբեք երեխայ չե՞ս եղած դուն, երբեք տարեդարձ չե՞ս ունեցած:

— Ահաւասիկ որ ոկար քարոզներու, յարեց հայրը, ահաւասիկ քեզի ձեռքը միշտ միջոցը կը գտնեն ինծի հակաճա- ուելու, մինչեւ անգամ փոքրերու առջեւ: Շարունակէ շփացնել զինք, շարունակէ, տեսնենք ո՞ր կը հասնինք:

— Ե՞ս, չփացնե՞լ, — հեղեց մայրը: Ես եմ կարծես որ տեղի կու տամ իր բա- լոր քահանայներուն, որ կը ներեմ իր բոլոր անկարգութիւններուն: Ես եմ կարծես որ ժամանակս զինք շոյելով կ'անցընեմ, կը հնարեմ հանճարե՞ղ եր- գիւր, գլուխ-գործո՞ց մեղեդիներ... «Ան- նիկա, Մաննիկա, Կապիկա»:

— Օ, դուք, կնիկներդ, ընդգնացաւ հայրը, ձգեցէ որ քնանամ, հանդիմ, իրաւունք չունիմ:

Իրաւունք ունէր, անկասկած: Բայց այս պահուն, անգամ մը արթննալէ ետք, դացէք հասկցուցէք զիմացի անպիտան աքաղապին, որ պտրտականութիւն տը- ւած է ինքզինքին անպարէզ կարգալու- ող աշխարհին խաղաղ շփոթի իր ձայ- նով: Կայ տակաւին առաջին ոտնաձայ- ներուն ազմուկը, վարը, փողոցին մէջ, անցնող առաջին կտուր, կան առաջին ան- ցորդներուն բոլորովին առաջին շշուկնե- րը: Եւ մանաւանդ երբ արշալոյսը կը յարձակի ասպնիկներուն, թափելով ա- նոնց վրայ երկինքին ամբողջ կաթը, ա- սոնք մարդս կը ձգե՞ն որ քնանայ:

— Փափա, պղտիկ փափա...

— Թող զիս այլեւս, Անի, թող...

— Բայց ի՞նչ կայ այստեղ, ոյս ի՞նչ աղմուկ է, ի՞նչ պիտի ըսեն զրացիները: Մեծ մայրն է հիմա, որ չարքը զ'ամբողջունէ: Ան կու դայ, խարխափե- լով, քնաթաթախ, իր հոտէն քաշկրու- տելով Անտրէն եւ Սամին, երկու պղծ- տիկ կղբալըները Անիին: Երկու պղտիկ սառանաներ, որոնք մեծ թօրը հետ կը քնանան քովի սենեակին մէջ եւ որ կը հետեւին հիմա իրեն, ինչպէս թափօրի

մը պիտի հետեւէին, պաշտօնական ըզ- դատաւորումով եւ աչքերնին շփելով:

Այս բոլորը կը տարածուին հայրա- կան անկողին վրայ եւ հոն կը տեղա- ւորուին իրենց ուզածին պէս:

Եւր թանկութիւն աքաղաղը, արթնե- ցող փողոցը եւ հիմա ալ մեծ մայրը, չը- փոթ մըն է այս ամէնը ի նպաստ Անիին. խոչալական պահն է վերջին դրոշին՝ թռչկոտելով անկողինէ անկողին, ահա- ւասիկ որ կը թափ վերջապէս հօրը ան- կողին վրայ: Հոն կը հանդիպի պղտիկ ընդդիմութիւններու: Բայց անձնատու- թիւնը չ'ուշանար: Գանի մը քմայք եւս՝ եւ խեղճ հայրը ոչ մէկ դիմադրութիւն ցոյց կու տայ այլեւս: Եւ պղտիկ շարա- ճընին, կ'ամբողջացնէ իր յաղթանակը, թափանցելով ամբողջովին հօր անկող- նին մէջ:

— Գիտե՞ս, փափի, կ'ըսէ փաղաքուշ ձայնով մը, պիտի քնանանք մէկ անգամ եւս, պիտի արթննանք եւ պիտի ըլլայ իմ տարեդարձս:

— Արդէն եղաւ, արթնցանք, ըսաւ հայրը արտնայացող ձայնով մը, ալ պէտք չկայ քնանալու, այսօր է տարեդարձդ:

— Օ՛, ճիշդ է, ճիշդ, բայց ե՞րբ այ- սօր: Կը լսե՞ս մեծ մայրիկ, այսօր, այ- սօր:

— Բայց այո, պուպրիկս, ճիշդ այ- սօր, դպրոցէն ետք, ըսաւ պառաւը, եր- գեցիկ ձայնով մը: Եւ քանի՞ նուէրներ պիտի ստանայ իմ պուպրիկս, քանի՞ շարունակեց ծափահարելով: Եւ... եթէ խելօք է, այնքան դեղեցիկ անակնկալ մը, այնքան, այնքան դեղեցիկ... որ- քան դո՛ւ պիտի ըլլայ իմ սիրունիկս, որքան...:

— Բաւ է, բա՛ւ մեծ մայր, ինչ լա- տախօս ես:

— Հերիք է, մեծ մայր, հերիք, աղ- մըկեցին միասնաբար Անիին հայրն ու մայրը, ընդմիջելով պառաւը:

— Բայց ես ոչինչ չըսի, ըսի միայն անակնկալ, միայն անակնկալ... Բոլոր սոսիթները լաւ են սակայն, որ ամէնքդ վրաս իյնաք, վերջացուց վերգոված:

Խնդիրն այն է որ Անին հոգի կու

տայ թիւի ժամացոյցի մը համար։ Ան տեսած է հատ մը իր ընկերուհիին քով, եւ անկէ ի վեր, ժամացոյց մը դադարած է իր աչքին առարկայ մը ըլլալէ եւ ե-դած կեղող մտասեւեռում մը։

Իր վերջին տարեդարձին, ուժեղ ընտանիքը աշխատած էր դինք ազատե-լու համար այդ յաճախանքէն։ Իւրա-քանչիւրը հանճարեղ գիտե՞ր յղացած էր ժամացոյց մը Անիին աչքին վարկաբե-կելու համար։ Մանաւանդ հայրը՝ որ ժամացոյցին հանդէպ մասնաշատուկ խորշանք մը ունէր։ Ինք որ մեծ գծուա-րութեամբ ժամերը կը շահէր, իր եւ ի-րենները՝ ժամացոյց մը իրեն համար ու-րիշ բան չէր եթէ ոչ զժոխքի գործիք մը, հնարուած, դիւմամբ, անհանգր-սացնելու համար խեղճ գործաւորները, յարչարելու համար զանոնք։ Վտանգ մըն էր, գոր պէտք էր հեռացնէր։

Մնաց որ իր վերջին տարեդարձին, Անին չէր գիտե՞ր տակաւին ժամացոյցին նայիլ։

Բայց հիմա որ դոց սորված է ժա-մացոյցի բոլոր շրջանակները, որ գիտէ դերը բոլոր սլաքներուն եւ գիտէ ցոյց տալ ամենապղտիկ կոտորակները, ամե-նամանր վայրկեանները՝ ծնողքը չի գի-տե՞ր ինչպէս խուսափիլ։

Գիտեցին ուրեմն այն միակ միջո-ցին, որ խեղճերուն յատուկ է, յաղթա-հարելու համար նման գծուարութիւն-ներ՝ — խնայողութիւն։ Հայրը կըճատեց սիկարէթի իր բաժինը։ Մայրը՝ առտնին ծախքերը։ Մեծ մայրն անդամ մասնակ-ցեցաւ հասարակաց գատին, չեա գի-տե՞ր որ սաստանայէն խնայած իր օղտիկ լումաներով։

Պզտիկ Անիին այս եօթներորդ տա-րեդարձին, կըցան հաւաքել ճիշդ այնքան գումար, որով պիտի կարենային ժամա-ցոյցի մը տիրանալ։ Ոչ առաջնակարգ հաս մը անշուշտ, բայց ճիշդ այնքան գումար՝ որով կարելի ըլլար փարատել Անիին մտասեւեռումը, երազը իրակա-նութեան վերածելով։ Ժիշդ քառասուն օսկի էր որ մէկ կողմ դրած էին։ Անե-րեւակայելի գումար մը՝ հաւաքուած

դահեկան առ դահեկան, զոր կամաց կա-մաց վերածած էին 3 կոտր տասնոց եւ 2 հինգնոց օսկիներու։

Եւ այդ առտու, մինչ հայրը գործի զգեստները կը հագնէր, այդ գանձն էր որ կինը իրեն վստահեցաւ, թանկագին նշխարի մը պէս։

— Մանաւանդ մի՛ մոռնար, պատուի-րեց իրեն դրան առջեւ, իրիկունը գործէ արձակումիդ։ Գնէ իրեն այն մէկը որ տեսնեք, ժամագործի ապակեփեղկին մէջ, անցեալ շաբաթ։

Հայրը գրպանեց իսկոյն դրամը եւ անապարեց դուրս։ Եւ անգամ մը փողո-ցի մէջ, զգաց տարօրինակ քաղցրութեան պէս բան մը, ուժեղ չուրիւնը ողողող։ Զրաց ինքզինք երջանիկ՝ ճամբիտ աշ-խարհակալի մը պէս։

Ժամացոյց մը, ժամացոյց մը, իր պզտիկ Անիին համար. տարօրինակ որ այլեւս զայն չէր տեսեր, տարօրինակ՝ որ այդ առարկան իրեն եւս թանկագին կը թուէր։

Կ'երթար զայն գնելու անմիջապէս, եթէ վտահ ըլլար որ վաճառատունը բաց պիտի գտնէր եւ եթէ չվախնար ծի-ծաղելի թուելէ ժամագործին։ Պանիրի կտո՞ր մըն է ժամացոյցը բոտածը, կա-րենալ գնելու համար զայն այդքան կա-նուխ։

Անպիտան ժամացոյց։ Բայց ինչ ուրախութիւն պիտի պատճառէ իր պըղ-տիկ Անիին, կը շարունակէ հրճուել հաց-րը, ինչ վիթխարի հրճուանք։ Հրճուան-քին մէջ պիտի խեղդուի։

Մինչ այդ սակայն, ինքն է որ վը-տանդուած է այդ հրճուանքով խեղդը-ւելու, որովհետեւ հակայական գետ մը սկսած է թաւալիլ ճամբուն ամբողջ եր-կայնքին։ Գեա մը՝ երջանկութեան, ա-նանուն հրճուանքի, որ ծնունդ կ'առնէ ժամագործին ցուցափեղկէն եւ որ կ'ո-ղողէ ամբողջ քաղաքը, տիեզերքը ամ-բողջ։

Երջանկութեամբ յորդուն, հայրը կը փութայ գէպի հանրակառքի կայանը եւ երկու քայլ անգամ մը, կարծես դադա-նի շարժակէ մղուած, մեռքը մեքենա-

բար կ'ուղղուի գէպի գրպանը, ուր պահուած է մեծ գանձը: Ոչ, անտարակոյս, գրամ չէ որ հոն կը գտնուի, այլ կախարդական բան մը: Մեծ, հրաշագործ այդ պոփի գրպանին մէջ: Մոգական գաւազան մը՝ որ պիտի կրնար ժպտեցնել երկրագունտը ամբողջ:

— Ա՛, ահաւասիկ հանրակագրու: Կը փախցնէ այդ մէկը: Բայց ինչ փոյթ այս առաւօտ, այս ուրախութեան հեղեղին մէջ: Ահաւասիկ երկրորդը, նոյնքան լեցուն, նոյնքան զգուշի, որքան առաջինը: Ընդդէմ ըսած, ոչ մէկ համակրանք կը ներշնչեն իրեն Պէյրութի հանրակագրու: Նուազողոյն ոչ մէկ համակրանք, հակառակ անոր որ միակ միջոցն է որ կրնայ օգտագործել աշխատանքի երթալու համար: Երկարականութիւնը չէ որ շարժման մէջ կը դնէ սատանային այս կառքերը, այլ մեղքերն են եւ մեղքերուն ամէնէն ծանրերը: Կեղան ու զըռնահոսութիւնն են՝ գիծերու վրայ դըրուած: Ապականութիւնն է որ կը փոխադրուի կայան առ կայան, գիծին մէկ ծալքէն միւսը եւ պիտի յանգէր գոյնքին սրտին, եթէ չըլլային գիծերը:

Ահաւասիկ երրորդ մը: Բայց այս անգամ յաջողեցաւ միւրճուիլ եւ բանալ իրեն համար տեղ մը լարծուն մարմիններու կոյտի մը մէջ, հանրակագրին ճիշդ հետեւ: Ոտքի կենալու տեղ մը միայն՝ տաք, զարշիւի, սեղմուած, ճընչւած՝ ընդմէջ կպչուն միտերու:

Գործաւորներ են բոլորն ալ, որոնք աշխատանքի կ'երթան: Ձախին խոշոր մարդուկ մը՝ վայրացնող ծաւալով, որ մինակը երեք հոգիի տեղ է գրաւած: Ալլին՝ պոփիկ ծերուկ մը, բացակայ երեսոյթով, աչքերը մշուշոտ: Ուրիշ մը խոշոր մարդուկին հետեւ, որ կը քնանայ տակաւին ոտքի, իր դրացին բարձի տեղ գործածելով:

Եւ հոս, դէմ դիմաց, այս յաղթանդամ երիտասարդը, որ կը ճգմէ գինք իր ամբողջ ծանրութեամբ: Լաւ հագուած մարդ մըն է ասիկա, ամբողջ, փողկապուած, կիրակիի մը համար կարծես, դէմքին վրայ օրալիք ծածածոութիւն

մը, լուսանկարի ժպիտ մը: Այս երիտասարդը կը պանեցնէ գինք, առանց որ կարենայ ըսել թէ ինչու: Ներկայութիւն մըն է առնուազն, որ շատ գէշ կը ներդաշնակուի գործաւորներու այս կառքին մէջ:

Բայց այս առաւօտ, պոփիկ Անիին հօր հոգը չեն մարդոց այս բոլոր թըշուառութիւնները: Ինք կը խորհի որոշ ցուցափեղկի մը վրայ, շողողուն ցուցափեղկի մը, որուն մէջ կայ ժամացոյց մը: Ինք կը խորհի իր պոփիկ Անիին, առախարհեան որ պիտի ունենայ:

Պոփիկ Անին, իր ծննդեան օրը: Կը յիշէ տակաւին հրեշտակի պոփիկ փոփիլը, որ ճանչցած էր անմիջապէս մարանոցին մէջ, ոչ ոք իրեն բան մը չըսած: Այդ պոփիկ, անուշ փոփիլը, որ գերած էր գինք առաջին իսկ ակնարկին եւ որ միայն իր ազնական կրնար ըլլալ: Եւ աւելի ուշ, տունը, կը յիշէ, քաղցր, պոփիկ արարած մը, որ կը գեղերի սենեակէ սենեակ եւ որ իր բոլորովին նոր քայլերով կը տարածէ տունին մէջ նոր յոյս մը կարծես: Անուշ, պոփիկ էակ մը, որ կը լեցնէ տունը հրաշալի երգի մը պէս:

Կը մտածէր այս բոլոր բաներուն մասին, աստե՛ն աստե՛ն շօշափելով գանձը պարունակող գրպանը, մինչ հանրակագրը կը սուրբար, ուսմանին ցնցելով գործաւորներու իր բեռը: Եւ ամէն ոք կը սեղմուի, կը զարնուի քովինին, կը կախուի ուր որ կրնայ, հաւասարակշռութիւնը պահելու համար:

Դարձուածքի մը, հօր ձեռքը հանդիպեցաւ կիրակնօրեայ հագուստներով մարդուն ձեռքին, որ կու գար յենարան փնտռել ճիշդ իր գրպանին վրայ: Միւսը կը ժպտէր միշտ, կարծես չգմեղանալու համար: Հայրը ժպտեցաւ իր կարգին, ըսելու համար որ նեղուելու բան չկար: Բայց քիչ մը աւելի հեռուն, կառքին յանկարծական կանգ առնելուն պատճառով, օգտուելով իրարանցումէ մը, դըրպանը կրեց ուրիշ նոր յարձակում մը: Եւ այս անգամ, կայծակնային սուղումէ մը ետք, նոյն անիծեալ ձեռքը գուրս ե-

լաւ դրպանէն, ամբողջ գանձը պարպե-
լով:

Խեղճ հայրը հազիւ կ'անդրադառնար
կացութեան, երբ միւսը արդէն կը պատ-
րաստուէր դուրս ցատկել: Հազիւ ատեն
ունեցաւ կառչելու դողին հագուստին:

Հանրակառքը մեկնեցաւ: Իրենք զբը-
տորուեցան գետին:

Ինքզինք ազատելու համար, միւսը,
հարուածներ կը տեղացնէր: Զօրաւոր էր
ցուլէ մը, զգուէրին:

Հարուածները կը տեղային՝ ան-
գութ, վայրագ, բայց խեղճ հայրը կառ-
չած կը մնար մարդուն: Փակած էր ա-
նոր, ինչպէս նաւաբեկեալ մը՝ լստա-
փայտին: Ոչ մէկ օշոնով պիտի չձգէր որ
փոխի:

Կ'իյնային, կ'ելլէին, նորէն կ'իյնա-
յին: Գողը կը հարուածէր անզաւար,
մինչ ամբոյս մը հաւաքուած էր իրենց
շուրջը եւ գիրենք կը դիտէր անսարքե-
օրէն:

— Ոստիկան մը, ոստիկան մը, —
պնդեցին քանի մը հողի ամբոյսին մէ-
ջէն:

Եւ ոստիկանը, որ կարելի չէ գտնել
հոն ուր պէտք ունինք իրեն, հասաւ վեր-
ջապէս ազատարարի մը քալուածքով:
Երբեմն երկու հաս կը գտնենք Պ... քա-
ղաքին մէջ, կը գտնենք հարիւր հատ,
երբ ոչ մէկ պէտք ունինք, այս համազ-
գեսաւոր... նմոյններէն:

— Քաշուեցէ՛ք, քաշուեցէ՛ք, ճամբայ
տուէք ոստիկանին:

Եւ պարոն ոստիկանը, յաղթականի
հովերով մէջտեղ ելլելով, սկսաւ հրա-
մաններ արձակել, պրոպալով, կանչուե-
տելով: Եւ քանի որ երկու հակառակորդ-
ները կը շարունակէին անդիտանալ իր
ներկայութիւնը եւ քանի որ ամէնէն զըժ-
բախտը կը մերժէր իր որսը ձգել, մեր
հռչակաւոր ոստիկանը, ոչինչ գտաւ լա-
ւազոյն, քան յարձակիլ խեղճ մարդուն
վրայ եւ վայրագօրէն հարուածել զայն:

Բարի մարդիկ միջամտեցին եւ ա-
ղատեցին խեղճը զինք շարշարող դահիճ-

ներու ճիւղներէն, — դողէն եւ ոստի-
կանէն:

Անիկին խեղճ հայրը: Դժուարու-
թեամբ կը շնչէր, երեսը ցեխոտած էր,
չըթները կ'արիւնէին եւ չէր դադար
կրկնելէ լուռ ընդ մէջ մատնացոյց ըն-
լով իր լաւ հագուած հակառակորդը:

— Դրամ... դրամ... դրամ գող-
ցաւ այս մարդը...

Բայց անպիտան գողը որ երեւի լա-
ւապէս սորված անմեղ ձեւանալուն ուր-
ուեստը, մտահոգուած էր լոկ իր հա-
զուտ կապուստով: Անխաւաքութիւն հո-
վեր կու տար ինքզինքին, գեղեցիկ հա-
զուստներուն փոշիները կը մաքրէր, փող-
կապը կը շտկէր եւ հանդարտօրէն դառ-
նալով զէպի ոստիկանը:

— Պարոն ոստիկան, իրական պարոնի
մը շնչով, — այս մարդը որ կը տեսնէք,
փորձեց զիս կողոպտել:

Եւ խեղճ հայրը ամբողջովին լուա-
րած, կը կախազէր յուսահատ:

— Պ... պարոն ոս... ոստիկան, կը
ստէ, կը ս... ստէ, ի... իմ դրամն է իր
զրպանին մէջ: Ժամացոյցը, ժ... Ժա-
մացոյցը. օ, Աստուած իմ, Աստուած իմ.
Բայց այս ոստիկանը: Ինչպէս հասկնալ
այս անիծեալ ոստիկանին: Մարդկային
կերպարունք մըն է միայն, ժայռով կա-
ղապարուած:

— Ոստիկանատունը, ոստիկանատու-
նը, — կ'ըսէ ան, — այդ բաները հոն ը-
սէք:


— Բայց պարոն ոստիկան, հարկ չը-
կայ ոստիկանատան, սկսաւ աղաչել հայ-
րը, իմ դրամն իր զրպանն է, — Յա-
նոց, Չ հինգնոց, հոն զրպանը, քառազե-
ցէք...

Բայց ժայռի այս դանդաղածը որ այս
ոստիկանն է, չ'ուզեր ոչինչ հասկնալ:
Շուտով պաշտօնակիր մը կը կանչէ իր
սուլիչով եւ երկուքը միասին, ձերբա-
կալելէ ետք հայրն ու կարծեցեալ պա-
րոնը:

— Քալեցէ՛ք, ուստ, շարժեցէ՛ք:

Ժ. Ա.

(Շար- յաջորդ քիւով)



Դեռ կը ֆալե՛մ,
 Լըժուսներու սեպ շաւիղէն,
 Դիշերն ի վեր, անհունն ի վեր,
 Մինչ տարօրէն՝

ճիւղե՛ր, ճիւղե՛ր,

Ջիւղերու պէս տրկուած ծառեր
 Հովերում դէմ, գիրկը մութիւն
 Կը ցալարուն ցաւով մ'անհուն...
 Բայց կը ֆալե՛մ ես դիւքավար:
 Ծայրը ճամբում
 Լուսածորան աստղը պայծառ
 Մըկաններու կու տայ վըտիտ՝
 Կեանքի աւիշ, յա՛րդ ու վընիտ:
 Մինչ անիւներ կը դառնան ետ,
 Կառապաններ ուղեկարայս,
 Պայքած արտով ու բոճերով
 Այլ ճղմարեկ՝

Կ'իյնան անշուշտ...

Բայց կը ֆալե՛մ ես անխըռով:
 Կ'ստանեմ հոգէն

Արեւառու արիւններու բայրը՝ բարկ
 Խունկ,

Սէգ այծեամենք՝ կարօտատանջ

Կու գան ըմպել շուրը բիւրեղ

— վընիտ արցունք —

Ունահետէն հին տարբերու,

ՆՈՐ ՍՍԵՐՈՒՆԴԻՆ

Ու ոսկորներ սաւառաքել արծիւներու
 Հովի բերնին դարձած շեփար՝
 Կը բթբռացնեն հ'րգ ռազմագոռ,
 Ու կը ցանեն, սուրբի շող՝
 Լայսեր կամանչ, փոսփորաշող...

Ա՛հ, կ'աղաւորմայ գիշերը հո՛ն,
 Ուր լուսագարդ
 Կեանքի — Մահուան կայ հարսնետոն.
 Կը հնչեցնէ սիրտն՝ երգեհան՝
 Խորհուրդ խորիւն հրգ մ'անհամաչ,
 Ժայք-ժող արեւան մէն մի կաթիլ
 Կ'ըլլայ արեւ՝ լուսանաճանչ
 Ամառաւորեան գոգն հրկնի բիլ:

Թող ծովանայ մըշուշն արծաթ,
 Ու անդունդէն՝

Սոված գայլեր ոռման անեղ...
 Արահետէն ցուրտ ու անհարք՝
 Ես կը ֆալեմ ամա՛ւր, անշե՛ղ.
 Պիտի հնձնմ շո՛ղ, ճառագայթ...
 Մինչեւ սատած մատներս փամայք
 Քաղեն հըպարտ
 Յաւերժայտ աստղը բիւրեղ՝

Քալե՛մ, ֆալե՛մ միմչեւ գազաք:

Յ. ԳԵՂԱՐԿ



«Բազմիցի նախանցեալ թիւի - Օ-
գոստոս - նշմարներու բաժնին մէջ, Վեր
տան զտաւիլը» խորագրին տակ տնդրա-
դարձած էինք Հրայեայ Քոչարի Ուսու-
ցիչը անուն մէկ պատմութեան, Հա-
մարիով այդ գրութիւնը գրողին եւ հո-
գիին եւ գրականութեան բացառիկ ար-
տայաբանութիւնը: Մեր այդ պատիկ նըշ-
մարին մէջ, ի դէմս Վեր տան հայ գը-
րականութիւնը կը հասկնայինք անշուշտ
եւ կ'ուզէինք «Զտաւիլը» համարել այդ
գրականութեան վրայ անկողնին էջ մը
աւելցնող Հրայեայ Քոչարը:

Մտաւորն վէպերու, պատմութեան
բուն, քննադատական յօդուածներու եւ
ակնարկներու մեծ քանակութիւն մը ու-

նի Հրայեայ Քոչար իր ետին, կարդաց-
ուած, թարգմանուած, վերհրատարակ-
ուած հեղինակ մըն է, բայց իր գործե-
րուն մէջ մեզի դժուար եղած է տեսնել
անխառն խառնուածքը: Ուրիշներէն փոխ
առնուած ոգիի մը շատագոյն էր, իր
«պապերի ոգին» հարուածող խո'րթ մը,
Բացառիկներէն չէր, շատերէն մէկն էր,
որակաւոր միջակութիւն մը՝ իր անցեալ
գործերով ու անցեալով: Հանրապետու-
թեան անկումէն ետք՝ Հայաստանի մէջ
յայտնուած արձակագիրներէն կ'անշա-
ռէին ու կը շտապէին ընթերցողի մը
բնականաբար:

Բակունցը («Մթնածոյ», «Մեւ ցելե-
րի սերմնացան»):

Թոթովենցը («Կեանքը հին հոգի-
մէկական ճանապարհի վրայ»):

Մ. Արմէնը («Հեղուար աղբիւր»):

Վ. Անանեան («Ուշացած խոստովա-
նութիւն»), Վանկապարտէղի զաստիա-
րակչութիւնը):

Ս. Դաւանց («Պոզիւղան»):

Գ. Մահարի (յետադարձի կարգ մը
արձակ էջեր):

Ս. Յանգատեանը («Միւրթար սպա-
րապետ»):

Այս դէմքերուն հետ չէր դասուեր
Հր. Քոչարը եւ անոնց անուններուն դի-
մաց դրուած գործերուն համագոր ո'չ
մէկ էջ կը յիշատակուէր իրմէ:

Ի մեծ ուրախութիւն յայտնենք, որ
այսօր, իր նոր գործերով բացառիկ ար-
ձակագիրներու խումբին մաս կը կտրմէ
այլեւս ան եւ անհաւանական չէ, որ հայ
գրականութիւնը յատկացնէ անոր միա-
յուն պատուանդան մը: Մեր նախնե-
րու թիւով խօսած ենք իր «Ուսուցիչը»
պատմութեան մասին: Այսօր տեղանի
վրայ ունինք ուրիշ գործ մը իրմէ, «Սո-
վետական գրականութիւնը» ամսաթիւերին
մէջ (Յունիս) տպուած եւ անոր եօթն-
նասունը հինգ էջերը գրաւող վէպ մը,
«Նահապետը», որուն մասին թէ՛ Հայաս-
տանի եւ թէ՛ Սփիւռքի թերթերը սկսան
անմիջապէս խօսիլ, անոր յայտնաբերած
գեղեցկութիւններուն պատճառած ան-
համբերութեամբ: Հայ գրականութեան

զոյգ թեւերուն վրայ, մօտաւոր անցեալին մէջ, դժուար է յիշել արձակ դօրծ մը, որ այնքան կեանք բովանդակէր, թարմութիւն, ջերմութիւն բովանդակէր, հայկականութեամբ ու մարդկայնութեամբ յազեցած ըլլար, որչափով որ կը բովանդակէ ու յազեցած է Հր. Քոչարի գրական այս յորդումը:

Վնասապետին գլխաւոր հերոսը ինքն է՝ Նահապետը, Վնայ ծովու ափերէն, Արտամեսցի: «Հարուստ գերդաստանի մեծ հայր, մեծանուն, մեծապատիւ»: Մեծ եղբունը ասկնուվրայ կ'ընէ գինք սակայն:

Շրջանի զայմազամը ի փոխարէն Նահապետի բրած լաւութիւններուն՝ կ'առաջարկէ անոր, որ մօտուլման զառնայ, «որ քա տաւն ու գերդաստան կայծակ չգարկի, չվառի, չաւերի»: Նահապետը կ'անդրադառնայ անմիջապէս ու կը պատասխանէ՝ «Եստեղ, որ քեզի առաջ տեսն, տէր կայմակամ, եմ աշխարհ որ երթամ» ի՞նչ պատասխան պիտի տամ: Ես հայ քրիստոնէայ եմ, առաջ, հայ էլ պիտի մեռնամ, իմ կրօնք, իմ ազգ ու պատմութիւն չեմ ուրանայ»: Իր կրօնքին, ազգին ու պատմութեան համար թուրքը վճարել կու տայ իրեն մարդկային բարձրագոյն սակը: Կը կայսեր գինք տան սիւնին, կը գնդակահարեն հինգ տղաքը, երկու աղջիկը կը փախցնեն, կը զաւունահարեն կիներ եւ ապա կ'արձակեն. «Հրաման կայ քա կեանքը իմայիլ, գնա ուր ուզում ես...»

Եօթը զաւակներուն ու կնոջ ու ազգին սպանդին եւ հայրենիքի աւերումին ակամատես եղած մարդ մըն է, երբ հազար ինքնաբերական թուականին կը հասնի Արագածի լանջին դիւզ մը եւ կ'առանձնանայ դիւզի ծայրին առանձնացած տնակի մը մէջ: Մարդոց հետ չի խօսիր, հարցումներու չի պատասխանել: Կը մնայ անծանօթ մը շրջապատին, մինչեւ որ, օր մը կը յայտնուի քրոջ ամուսինը, թրքական ջարդերէն առաջ էջմիածնի կողմէրը ապաստանած Ափրոն, որ կը պատմէ Նահապետի կեանքը գիւղացիներուն, սրտակցութիւն մը տալով

ծելով իրարու միջեւ: Աշխուժ, մարդաւոր, սրտապնդելու, վերականգնելու հըզօր տենդով օժտուած անհատականութիւն մըն է Ափրոն: Ինք եւ կիներ՝ Անթառամը կ'որոշեն ի կեանք վերադարձը՝ նել Նահապետը: Նախ կարգի կը դնեն պարտէզը, տունը եւ ապա կը տանին իրենց գիւղը եւ հոն՝ կ'ամուսնացնեն զայն իր ողբերգութեան յար եւ նման ողբերգութեան մը երթարկուած կնոջ մը՝ Նուարարին հետ: Նոր անկիւնադարձ մը իր կեանքին մէջ: Կը սկսի մշակել հողը: Կիներ ծնունդ կու տայ երկուորեակներու: Մէկը մանչ, միւսը՝ աղջիկ: Առաջուայ լուսկեաց ու մօայլ մարդը չէ այլեւս: Հիւր կ'երթայ, հիւր կ'ընդունի: Կ'ապրի: Իր տնկած ծառերն ու նոր երեխաները կ'անին միասին: Տարիները կ'անցնին ինքզինք վերադառնելու այս երջանիկ ճիւղին մէջ: Վրայ կը հասնի պատերազմը: Որդին պիտուորական ծառայութեան կը կանչուի: Կը վերադառնայ պատերազմէն: Կ'ամուսնանայ: Կ'ունենայ զաւակ: Նահապետը իր թոռը տեսնելէ ետք կը մեռնի ամենայն խաղաղութեամբ, ութսուն տարեկանին:

Այս սկիզբին ու ընթացքին ու վախճանին վրայ կառուցած է Հրայիայ Քոչարի վէպը, աւանդութիւններու, բարքերու, յիշողութիւններու եւ ժողովրդական իմաստութիւններու կենդանի հիւսուածքով մը:

Կայծակնահար այլ վերընձիւղած կաղնիի մը վերանորոգ պատկերը կը յիշեցնէ ու գրել կու տայ Քոչարին Նահապետին պատմութիւնը: Այդ խորաբնույտ կաղնիին հայ ժողովուրդը կը խորհրդանշէ հարկաւ եւ Նահապետն է անոր ծրարական մէկ ոտքը: Ամբողջական արտայայտիչ՝ վերադարձ իւրաքանչիւր Հայու ներքին ապրումներուն: Հոն ապրող եւ հոն ապրող Հայերուն: Անցեալին վրայ հակող եւ անցեալը ներկային մէջ կիրարկող Հայերուն: Կեանքին կառուցող եւ ցեղային իրենց ստեղծագործ ոճը կեանքին պարտադրող Հայերուն: Ժառանգական սրբութիւններուն վրայ գուրգուրացող եւ ժառանգութիւն

մը ձգելու տենդով ապրող Հայերուն։
Վէպին շրջապատը եւ միւս տիպարները նուազ լահեկան չեն։ Երեք չորս հատը մանաւանդ։ Ծերունի Մովսէսը, Ախրոն, Քաւոր, Յակոբը, Անթառամը, Կռապաշտ Նճոն։ Իւրաքանչիւրը ներկայացուցական կողմով մը կը նպաստեն գործի մթնոլորտին, ուժականութեան, հարգատուութեան, կեանքի ճոխացման։ Ծերունի Մովսէսը.— Էմ աղբրից որ քար է եկեք, Նահապետ, պիտի միշտ էլ գայ, չկորուի։

Ափրոն.— Ինչ հոգի վրայ որ կ'ապրեմք, պարտական եմք, որ էշ հոգ զարդարեմք։

Քաւոր Յակոբ.— Երբոք Արտամետի խնձորի կուտ տամ, տանի փրկի Արտամետի խնձոր։

Անթառամը.— Մատաղ էգնեմ Սերաբի, Հայրայի, Հրայրի, Ժիրայրի, Գեորգի, Անդրանիկի, Մարտիի, Սուէի, Ջէյրամի գերեզմանի հոգներում... Էդ ի՞նչ գուլում էր, ագի՞ր ախպէր...։

Կռապաշտ Նո.— Աստուած որ քարէի քուր կ'որշնի, հայտ գտքան կ'անիծի, էշ Աստծուն չաղօքիմ, ես կռապաշտ իմ... Ես կռապաշտ Նեմ իմ...։

Իմաստութիւնը, շինարարութիւնը, ժառանգականութիւնը, սղերդութիւնը, ընդվզումը։ Գոմարենք իրարու վրայ եւ կ'ունենանք հայ ժողովուրդը դարձեալ։

Անհատականութիւն կազմող այս արամադրութիւնները, երբեմն, կը յայտնուին ուրիշներու մօտ։ Ողբերգուն կը դառնայ հարսնետոհ, կռապաշտը՝ քրիստոնեայ, յեղափոխականը՝ աւանդապաշտ, չափաւոր մարդը՝ յեղափոխական։ Ամէնքը կ'ապրին իրենց մօտաւոր անցեալը, հոգեպէս կը փոխադրուին հնադրեան երկրի, յեղափոխական մը թնոլորտին մէջ, տեւական արամադրութիւն մը ունին ազգը պահելու ելած կրտսերին հրեղէն պատմութիւններ ունեցողքիւ։ Յեղափոխականներու եղբայր է Նահապետը։ Փիղայրներու մօտ ապրող մարդ է Ծերունի Մովսէսը։ Փիղայրի եղած է կռապաշտ Նճոն ու իր կի-

նը՝ Վարսամ փիղայրներու պահապան օգնականն էր երկիր...։

Նահապետն է խորհրդածողը։

«... Իսկ Արտամետում չպանեցին, չթաքցրին երացանքը, չլսեցին Սերաբին ու Հայրային ու կռտարուցին... լաւ կը լինէր, որ կռուէին ու սպանուէին կռուի մէջ, քան թէ սրի քաշուէին։

Ծերունի Մովսէսը։

«Փռքիկ գուլիը ուտրի վրայ օրօքելով՝ Մովսէսը պատմում էր Արաբայի եւ Աղբրի Սերաբի կռիւներից... Պատմում էր Բարկաթի ու Առնի կռիւների մասին։ Ինչպէս Առնեմում հաւաքուած հայեր քարտալան մի ամբողջ գումը կռտարեցին։ ... Որտեղ գէմք պահեք էին, փրկուան, որտեղ անգէմ էին՝ կռտարուան...։

Նահապետն է, որ կը պատմէ դարձեալ։

«Արտամետի այգիների, Վանայ ծովի, իրենց երկրի օդի ու քրի մասին, կըռիւների ու կռտարածների, հայդուկների քաշութեան եւ քաշերի նահատակութեան մասին։

— ... Կը յիշե՞ս, Անթառամ, որ սասնայ Գեորգի նահատակելուց յետոյ Սերաբ գիշեր եկաւ տուն, ինչպէս կուլար...։

Կը յիշեն այսպէս անցեալը, կ'ապրին զայն, այսուհանդերձ կ'աշխատեն ու կը պարզարհն Արազածի լանջը, կ'ուճին, սերունդ կը հասցեն ու իրենք զերգոյն թողձանք կը կտակեն դարձեալ։

— ... Կը ցամկանամ, որ ժուլով, ժամանակով արժանանա՞մ օնք հայրերի երկրին, տիւնա՞մ մեր Վանայ ծով, ու մեր Սիւփանայ սար, մեր Արծիլ ու Արտամետն։

Պատմական տուեալ ժամանակաշրջան մը ընդգրկած եւ միջավայր մը ընտրած վէպի մը մէջ, ուր կը խօսուի ազգի, հայրենիքի, յեղափոխութեան ու ազատութեան մասին՝ Դաշնակցութիւնը պիտի լծուցուէր բնականաբար եւ ինչինքն օրհներգուէր հարկոււ։ «Դաշնակցականները Հայաստանը կտրել էին Ռուսաստանից, օգնող չկար։ Եւ անշուշտ կտր հրաշաճօ՞ր ինչինքն՝ զԵմինը խաղա-

զուրիւմ է տաւեր... Լեւոնի բաղնիքն էլ ազատութիւն է քերիւր...»:

Աստիճակ եւ պարբերաբար այսպիսի ուրիշ բաներ ներմուծած է Քոչար իր վէպին մէջ: Առանց սակայն շրջանները պրոլետարիատ: Առանց շատ լորձուներ թափելու: Մենք այս մասին չենք ուզեր երկար խօսիլ, միայն թէ Վանայ ծովը ու Սիփաւայ սարը ու Արծկէն ու Արտամեալը նոյն այդ Լեւոնի «Դէպի տուն» պատգամին հետեւանքով թուրքին ձգած ու նահանջած մարդերու շրջաններուն տուտ կը թլուին այդ փառաբանանքները եւ կը տկարացնեն վէպը աւելորդ տուրքերով: Բարեխաւար շատ չէ այս բաժինը ու եղածը ըմբռնելի է: Քոչար արագ անցած է նման խնդիրներու մօտէն եւ ուժերը կեդրոնացուցած է մայր երակին վրայ, որ հայութիւնն է, տեւաբար հաւածուած, խոցուած, խաչուած, այլ նոյնքան անգամ յարուժիւն առած, յուսահատիլ չգիտցող, լաւատես, իր հոգին ու շրջապատը ստեղծագործ իր շունչով կենդանացնող աշխարհաչէն հայութիւնը: Քիւմուրի թշնամու բնութիւնն է, շինել մեր պարտքն է: Աշխարհ այսպէս է ստեղծուել, նախապետ, ես ու դու վերկայ ենք, որ այդպէս է...»

Նոյն վկայութիւնը կրնան տալ մեր գարունն ապրող բոլոր Հայերը, աշխարհի չորս ծագերուն: «Քանզեւ թշնամու բնութիւնն է, չինել մեր պարտքն է»: «Նահապետը» վէպն է գիտելներու ու տրեւան ու կրակի վրայ կոխելով անցած, քոյր, մայր, դասակ՝ ետին ձգած, այլ այսօր աշխարհի բոլոր երկիրներու ծաղկումին իր մասնակցութիւնը բերող իւրաքանչիւր Հայու:

Անկտրելի է առանձին քանի մը խօսք չլուծել անցեալը ներկային մէջ բերելու եւ յաւերժութեան յանձնելու մեր բնազդին ի խնդիր Քոչարի ստեղծած խնձորենիի սեմալին մասին: Վէպին քաղցրագոյն ու կենսայորդ բաժինն է խնձորենին, անցեալէն բերուած ու ներկային մէջ իր կենդանութիւնը տարածող է՝ ն սրտատուչ եւ է՝ սրբազան արարողութիւնը.

— Ա՛ն, նախապետ, տար փրկի Ար-

տամեաի խնձոր... Թուրքեր կացնենք ատիւր են, կը կտրեն մեր խնձորի ծառեր... արուն կիգայ արմատներին, կուլան ծառեր, կը մեռնեն ճիւղեր, փրկի էնոնց կեանք, նախապետ... Յայտ էա վրայ ի մնացէ... առ էսա կուտեր, տա՛ր, փրկի՛ր...»

Նահապետը կ'առնէ, կը տանի կը փրկէ: Արտամեալի խնձորենիներուն հետ կը վրկէ նաեւ խնձորենիին կապած Արտամեալներուն աւանդութիւնը: Մնած ամէն մէկ երեխայի համար Արտամեալի հին մէկ սովորութեան համաձայն խնձորենի մը կը տնկեն: Նոյն աւանդութիւնը կը կիրարկէ Արազածի լանջի իր նոր գիւղին մէջ: Հէս մեծ քաղաքիւմ չեմ արեր, ես չեմ կանայ քրկիր ու Երգ փրկեմ, իմ պարտքն ու ուխտն էլ թող էդ գործն էլնի...»: Ու կը կատարէ իր այդ ուխտը, այն տունէն, որ երեխայի ծայն մը ելլէ՝ դրան առջեւ կը տնկէ խնձորենի մը: Մտով ու կանայութեան անձանթ Արազածի լանջին տարածուած այդ գիւղը տարիներու ընթացքին կը կանաչեայ, ապրեցնելով հինը, թեւ տալով նորին: Նորին արմատը մխրճելով հինին մէջ, հաւատարիմ մնալով կեանքի բնական հոլովոյթին, անոր դարձագման անյիշիլ օրէնքներուն: Հին արմատէ մը եկած եւ նոր հողի մը վրայ ծլարձակած խորհրդանշական այս խնձորենիին՝ կեանքը լեցնելէ ետք՝ իր կենսատու հմայքը կը տարածէ նաեւ մահուան վրայ ու մահէն անդին: Մտով հող բերող եւ ծառամշակութիւնը գիւղին մէջ վարակիչ դարձնող Նահապետը կը մեռնի եւ իր զոհադալի շուրջը, քանի տղաներն ու աղջիկները, պատանիներն ու երեխաները գալիս էին ամէն մէկի ձեռքին՝ խնձորենու ծաղկած մի ճիւղէն: Թափօրը կ'ուղղուի դէպի գերեզմանատուն: «Թաւում էր, քէ հսկայական, ծաղկած մի այգի շարժուում է տնդից՝ տարածուելու ամբողջ աշխարհով մը...»:

Ահաւասիկ այսպէս, ընտանիքին ու ցեղին նահատակութենէն խորապէս ցրեցըւած մարդու տիպարին հետ՝ ցեղն է որ կը ներկայացնէ դարձեալ, դժբախտ-

տուեցին իրենց զիմադրաւելու առնական կեցուածքով, իր կեանքի մնացեալ օրերուն մէջ յայտնաբերած ստեղծադործ ուժով, իր մահը պարտաւ իր թեւազրական Հանդէսի մը վերածելու առաքինութեամբ:

Անշուշտ, անցեալին, ներկային, հայութեան եւ անոր անկումներուն ու վերելքներուն, տառապանքներուն եւ լուստեսն կողմերուն, ապրելու տենդին եւ ստեղծադործելու կամքին հետ կապուած խնդիրները այս աստիճան պիտի չտպաւորէին ու խանգարուէին ընթերցողը, եթէ Հեղինակին պակտէին զանոնք կենդանի մթնոլորտի մը մէջ գնելու եւ զարդացնելու աշխուժ տաղանդը: Մեծ է այս դործին մէջ Հրաչեայ Գոշարի գրական ուժը թէ՛ թիփերը ամեցնելու եւ թէ՛ զանոնք ամէն վայրկեան, իրենց բոլոր շարժումներուն ու արտայայտութիւններուն մէջ Հաղորդական զարմնելու տեսակետով: Գոշար խորապէս ուսումնասիրած է ու լաւապէս կը ճանչնայ իր ներկայացուցած կեանքը: «Իրական պատմութիւն էր՝ վիպացած: Եղիլութեամբ մի մասը տեսնելով եմ ես, մի մասը լսելով եմ արժանաւորելով, մի մասն էլ նրեակայելով եմ»: Այսպիսին իրականութեան բաժինը, փորձառութեան բաժինը եւ գրականութեան բաժինը: Ու շարունակութիւնը՝ «Ես այդ վիպացած պատմութեամբ գործող անձնակերպ մեկն եմ»: Կը պարզուի որ վիպասանը Արթուրի եւ Անթառամի որդին է, Նահապետը իր մօրեղբայրն է: Այս յայտնութենէն ետք երբորդ դէմքով ըսկըտած վէպը կը շարունակուի առաջին դէմքով, գրական ճշմարիտ անակնկալի մը չափ հաճոյք պատճառելով ընթերցողին: Պատմութիւնը Հետաքրքրական ընծայելու կերպը Գոշարի ամէնէն շեշտուած առաքինութիւններէն մէկն է արդէն: Ամէնէն առաջ պատմել պիտէ Գոշար, տիպաբանները բնորոշ գիծերով ներկայացնելու վարպետութիւնն էր ունի: Մանօթ է Հայհոյողին, օրհնողին, իմաստաս-

նին եւ անտաշին, ըմբոստին եւ ճակատադրապաշտ խառնուածքին, կառուցողին եւ վրատակին յիշատակով խոցուած մարդուն ապրումներուն, բարքերուն, բուրբառներուն, ոճային ողջ առանձնայատկութիւններուն:

Կարելի չէ այստեղ վէպի իւրաքանչիւր տիպարին կամ յաջողած Հատուածին առջեւ աւելի երկարօրէն կանգ առնել եւ ծաւալել բոլոր արժանիքներուն առթիւ: Մեր միտքը Գոշարի այս տաղանդաւոր գործը ձեռով մը ուշադրութեան յանձնելէ պարզապէս, ծանօթ դրադէտի մը մէջ նոր յայտնուած գրական ուժի մը աւելիւր տալը: Լայրձուն գետններէ վերադարձած եւ Հարազատ միջավայրին մէջ իր ուժերուն լիութեամբ գտած գրագէտն է Գոշար այս գործին մէջ: «Նահապետը» իր գրականութեան պատկն է:

Մեր թերթին միջոցները թոյլատու չեն, որպէսզի կարենանք ամբողջութեամբ տալ «Նահապետը»: Բայց ի վարձատրութիւն Գոշարի գրելին եւ ի վաճառման մեր ընթերցողներուն կու տանք քիչ անդին իր միւս գեղեցիկ գրութիւնը՝ «Ուսուցիչը»: Նոյն նպատակը կը Հետապնդեն երկուքն ալ, Հայութիւնը, թրջնամիրն կողմակերպած խաչելութեան դէմ տեսարար յարութիւն առնող ցեղը, անոր ներգոյակ ուժը, վերականգնելու անդամադրելի գաղտնիքը:

— Բայց հայ ազգ դիմացկուն ի, Նաւաբ, քարի պէս պիմդ ի, ծովի պէս անըսպառ ի: Էդ ինչի՞ց ի, որ էդպէս ի հայ ազգ, քո կարծիք ի՞նչ է Նաւաբ...:

Նաւաբը քօքաւով էր ուսերը, Նաւապետը շարունակում էր.

— Որովհետեւ արդար ի, սիրտ մաքուր ի, աշխատանք կը սիրի, քաղամ չի սիրի, կեանք կը սիրի, մահ չի սիրի... ու էդ պատճառով էլ՝ կը մեռնի՝ յարութիւն կ'առնի, մէկ կը մնայ, մէկը հարիւր կը գառնայ, հարիւրն էլ հազար կը գառնայ:

տեսածս զէմքերից ու կանգնեց մտքիս առաջ: Այնքան կենդանի ու այնքան իրական, շօշափելի, որ յուզմունքից դողացի ամբողջ մարմնով:

Մեսրոպ էր անունը եւ որովհետեւ թուրքերէնի ուսուցիչ էր, Մեսրոպ էֆէնտի էին ասում բոլորը, եւ բազում աշակերտներն ու պաշտօնակիցները՝ գալորցներում ու Պոլսի համալսարանում եւ հասարակութեան մէջ, ուր նա հաւասարապէս ճանաչուած էր թէ հայ եւ թէ թուրք միջավայրում:

— Հարցրու Մեսրոպ էֆէնտիին կարծիքը, — ասում էին իրար հայկական գալորցներում կամ խմբագրութիւններում որեւէ գրական կամ լեզուական հարցի մասին վիճելու ժամանակ:

— Մեսրոպ էֆէնտիին սէօզլու սըր, — յիշեցնում էր ուրեք թուրք լրբարդրող, կամ գրասէր, եթէ իր կարծիքը հաւանութիւն չէր գտնում:

— Եթէ հաւատ չէք ընծայում իմ կարծիքներին, հարցրէք Մեսրոպ էֆէնտիին, — աւելացնում էր մի ուրիշը՝ դարձեալ այդպիսի վէճի կամ առաջիկայի ժամանակ:

— Մեսրոպ էֆէնտիին ասաց...

— Մեսրոպ էֆէնտիին գրել է, որ...

— Մեսրոպ էֆէնտիին պիտի հարցնեմ:

— Մեսրոպ էֆէնտիին հարցրի, բացատրեց, որ...

Անտարակելի, ընդհանուրի կողմից ճանաչուած ու ընդունուած հեղինակութիւն էր, ամէն տեղ՝ հաճելի գրուցակից, բոլոր գրասէրների, լեզուագէտների ու լրագրողների համար՝ խորհրդատու, յայտնի ընտանիքներում ցանկալի հիւր: Հայ ամիրա թէ խմբագիր, թուրք փաշայ թէ յայտնի շահեր, այցելում էին նրան, կամ ետեւից իրենց այցեստոսներն էին ուղարկում, խնդրելով շնորհ անել այսինչ կամ այնինչ օրը, այցելելու իրենց սունը, կամ իրենց ընտանեկան նաւակով գրասանք անելու վոսպորի վրայ: Եւ ամէն տեղ ու ամենուրեք հաճոյքով, խորին բաւականութեամբ ու հիացմունքով ունենւում էին նրա թուրքերէն խօսակցութիւնը, լսում էին նրա գեղեցիկ, նրբին, դասականօրէն ճիշդ առողջամտութիւնը: Յաճախ նա յիշեցրնում էր, թէ արաբական կամ պարսկական ինչ գարժուածքներ, ինչ բառ ու բան էին մտել թուրքերէնի մէջ, ինչով էին նրանք հարստացնում Օսմաններէ ցեղի լեզուն եւ ինչով էին խաթարում նրա գեղեցկութիւնները: Մետրուէ աւարտած արաբի պէս նաեւ արաբերէն գիտէր եւ պարսիկ գիտուն ախունդէ պէս՝ ֆարսերէն:

... Մուրում էր զնացքը մութ գաշտերով: Բոլոր ուղեւորները քնած էին խոր քնով: Միջանցքում միայն ես էի կանգնած, ծխում էի ու ճակատս սառն տպակու վրայ գրած յիշում էի պատմեցութեանս օրերը, աշակերտութեանս տարիները, Կ. Պոլսի մեր ազգային վարժարանում:

Նա մեր թուրքերէնի ուսուցիչն էր եւ մենք, որ նախափերջին դասարանն էինք հասել, գեռ ոչ մի անգամ նրա բերանից հայերէն մի խօսք չէինք լսել: Յարգում էինք նրան, հպարտանում էինք նրանով, բայց չէինք սիրում: Նոյնիսկ ակնածանքով էինք նայում նրան, բայց սիրոյ գագաթունք չէինք տածում:

Դրանք տարբեր բաներ են:

Բարձրահասակ էր, տոհմիկ իշխանի կերպարանքով: Խոշոր-խոշոր, սեւ աչքեր ունէր, միփակամ հիլլենացու դէմք, ուժեղ կամք արտայայտող

ծնունդ, լայն կուրծք, երկար թևեր, մեծ, բայց գեղեցիկ ձեռքեր։ Սև մաշկ-
նից գեղեցիկն այդ սպարապան մարմնի վրայ՝ նրա հոյակապ, կոթողա-
կան, հպարտ գլուխն էր։

Գեղեցիկ տղամարդ էր եւ ի վերուստ օտուտած շատ շնորհներով։
Ինքն էլ գիտէր իր այդ բոլոր արժանիքներն ու առաքինութիւնները եւ շա-
տացնում էր դրանք ու առուել գեղեցկութիւն էր ապրիս իրեն։ Կենսագէտ
լինելով, նաեւ գեղագէտ էր։ Հազնում էր կոկիկ, ընտիր կտորներից վար-
պետ դերձակների ձեռքով կարած հագուստներ։ Փողկապը միւլտ օսլացած,
անարատ սպիտակութեամբ շոյում էր, կօշիկների վրայ երբեք փոշու հա-
տիկ չէր երեւայ։ Գայում էր ոչ արագ՝ զործնական մարդու պէս, ոչ էլ
ծոյլերին ու անբաններին յատուկ դանդաղ քայլուածքով։ Հանդիպողները
յարգանքով հանում էին գլխարկները նրա առաջ, ծանօթ-անծանօթի բա-
րեն ընդունում էր յարգայիւր, հպարտ գլուխը թեթեւ խոնարհելով։

— Մեսրոպ էֆէնտին այսօր ինձի բարեկեց։
— Մեսրոպ էֆէնտին բարեկեցի ես, բարեւո առաւ, առողջութիւնը
հարցրեցի, շնորհակալութիւն յայտնեց։
— Մեսրոպ էֆէնտին մենակ կը գրօնէր այսօր։
— Մեսրոպ էֆէնտին Վոսփորի վրայ տեսայ, սուլթանի որդուն հետ։
— Մեսրոպ էֆէնտին Գրիգոր Զօհրապի ու Դանիէլ Վարուժանի հետ
Բերայի վրայ կը գրօնէր...

Ամէն մէկը հաղորդում էր, թէ որտե՞ղ է տեսել նրան, ո՞ւմ հետ է
տեսել, նրա ի՞նչ խօսքն է լսել, ուրիշներն ի՞նչ են ասել նրա մասին։ Սե-
րնական էին համարում, որ Սուլթանի որդին Մեսրոպ էֆէնտու ընկերակ-
ցութիւնն է փախաբում, որ հայ մեծ դրող, իրաւագէտ ու մէջլիսի ոսկերե-
րան պատգամաւոր Գրիգոր Զօհրապի ու Բանաստեղծ Դանիէլ Վարուժանի
ընկերը, արտակիցն ու բարեկամն է Մեսրոպ էֆէնտին։

Ամէն մէկի բարեկամութիւնը պարզեւ էր միւսին համար։ Մէջլիսի
վէճերից յետոյ, երբ Զօհրապի ճառերը՝ թուրք կնոջ ազատութեան մա-
սին, կատաղութիւն էին յարուցում խաւարամիտ մէլիքսմանի մէջ, գրանը
ծաղկեփնջերով հայ գրողին ողջունելու էին սպասում նաեւ այն վեպերնե-
րի ու փաշաների կանայք, որոնք Զօհրապի մոլի հակառակորդներն էին
մէջլիսի մէջ։ Հայ վիպագիր մէլիքսմանի ամէն խօսքը տպւում էր թեթե-
րում եւ բերններան էր անցնում թրջական մայրաքաղաքի հասարակու-
թեան մէջ։

Բանաստեղծ Դանիէլ Վարուժանն էլ իր ազգի սիրտն էր ու նրա լե-
զուն։ Նրա սիրելի զաւակն էր, նրա հոգու հետ խօսող։

Եւ Մեսրոպ էֆէնտին երկուսի մէջտեղ, հասակով երկուսից էլ բար-
ձրը, սրտով հաւասար ու խոնարհ, քայլում էր՝ մտերմիկ գրոյցներին նը-
ւիրելով թանկագին ժամեր իր բազմազարդ առօրեայից։ Բայց նա ո՞ր լեզ-
ուով է խօսում հայ վիպագրի ու հայ բանաստեղծի հետ զրօսանքների տղ-
պահներին, կամ ընտանեկան սեղանների շուրջ։ Միթէ՞ դարձեալ թուրքե-
րէն, — մտածում էինք մենք ու չէինք պատկերացնում ականաւոր թուրքա-
գէտին հայերէն խօսելիս, որովհետեւ չէինք լսել երբեք, ոչ մի անգամ, ոչ
դասարանից ներս, ոչ էլ դրսում։

— Այդպիսի Հայից ի՞նչ օգուտ ունի հայ ազգը, — ասում էր ունէ
մէկը մեր ընկերներից, երբ խօսք էր բացւում Մեսրոպ էֆէնտու մասին։
— Լաւ չէ՞, որ հայ մարդն ուրիշ-ուրիշ ազգերի մէջ մեծ պատուի ու
յարգանքի կ'արժանանայ։

— Բայց Հայ ազգն ինչ օգուտ ունի այդ պատուից ու յարգանքից:

— Հպարտութիւն չէ՞, որ Մեսրոպ Էֆէնտին, Հայ լինելով, թուրք լեզուի ամէնից գիտական քերականութիւնն է կազմել, թուրք սուլթանի ընտանիքի անդամներին էլ թուրքերէն է ուսուցանում:

— Բայց Հայ ազգն ի՞նչ օգուտ ունի այդ փառքից:

Անվերջ էին մեր վէճերը, ու որեւէ տրամաբանական եղբակացու-
թեան չէինք յանգում:

Մեսրոպ Էֆէնտին իսկապէս Պոլսոյ թուրք համալսարանի դարձն էր, իսկապէս հեղինակն էր թուրք լեզուի քերականութեան ամէնից լուրջ գա-
սադրքի, իսկապէս մաքուր թուրքերէն խօսելու եւ թուրքական առօրեանու-
թեան դասաւանդելու եղել սուլթանի որդիներին: Նաեւ Հայաստան թուրքե-
րէն թերթ էր հրատարակում նա: Ասում էին Հայ տաւերով թուրքերէն
կարգալի աւելի լեւելին է, քան արաբական տաւերով: Մեսրոպ Էֆէնտին
Հայաստան թուրքերէնով տպուող իր թերթի մէջ հրատարակում էր Քրան-
սական, իտալական, ռուս եւ Հայ գրականութիւնից յուլիշ պատմութեա-
նէր, բանաստեղծութիւններ եւ յօդուածներ՝ լուսաւորութեան մասին, ա-
ւանդութիւններ, որ ցոյց էին տալիս, թէ Աստուծոյ ստեղծած բոլոր մար-
դիկ, որ արարելի կերպարանքն ունին, նրա զաւակներն են, եղբայրներն են,
ինչ լեզուով էլ խօսեն եւ ինչ կրօն էլ դաւանեն: Եւ ասում էին, որ նրա
թերթը կարգում էին շատ փաշաների եւ նոյնիսկ մեծ վեզիրի ընտանիքում
եւ թուրք երեսփոխանի կանայք նամակներ էին գրում նրան՝ յայտնելով ի-
րենց երախտագիտութիւնը Մեսրոպ Էֆէնտիի ազնիւ գործունէութեան հա-
մար: Նոյնիսկ թուրք մուլաները լաւ ճանաչում ու խորապէս յարգում էին
նրան: Երթաւանարդ կրօնաւորներին նա արարեւելն եւ պարսկերէն էր ու-
սուցանում, բացատրում էր Ղուրանի խրթին դարձուածքները, սովորեցը-
նում էր Հասկանալ զարսկական հնամենի իմաստութիւնները՝ պարսիկ ձե-
ռագրերը կարդալով եւ իսլամի ազանդների պատմութիւնը: Ասում էին,
որ գլխաւոր կրօնապետը Մեսրոպ Էֆէնտուն սիրելով է, որ բարեացակամ
է Հայերի հանդէպ ու միշտ սուլթանից գթասրտութիւն է Հայցում Հայ ժո-
ղովրդի համար. «Թո այդ Հայտաւորներն օգտակար են տէրութեան հա-
մար, ամենակալ ու հօգի սուլթան», — ասել էր նա, — մեզք է սուր բարձ-
րացնել աշխարհի վրայ, որի զաւակները նոյնիսկ թուրքերին թուրքերէն են
սովորեցնում, իսլամին՝ Ղուրանի առեղծուածներն են մեկնում»...

Ինչո՞ւր ասես չէին ասում Մեսրոպ Էֆէնտուն մասին: Մենք Հպարտու-
թեամբ էինք լսում այդ պատմութիւնները, որովհետեւ այդ երեսփոխան Հայ
էր եւ մեր ուսուցիչն էր, բայց չէինք սիրում, որովհետեւ ոչ մի անգամ
նա մեզ Հեա Հայերէն չխօսեց ու ոչ մի անգամ նոյնիսկ չժպտաց մեզ հա-
յերէն: Ձէինք սիրում, բայց Հպարտ էինք զգում մեզ, որ թուրքական պե-
տութեան մէջ կան այդպիսի Հայեր, մեր ժողովրդի անունն ու համարումը
պահպանող այդպիսի անձնաւորութիւններ: Պատահում էր, որ վէճի էինք
բռնում թուրք տղաների հետ: Հազար իննհարիւր սլթի երեսփոխանից եւ
հազար իննհարիւր իննիսկ՝ Սուլթան Համիտի պահակաւորութիւնից յետոյ
հնարաւոր էին դարձնել այդպիսի վէճերը: Թուրք տղաները, որ մի քիչ
մտքով զարթնած, անիծում էին Համիտեան բռնակալութիւնը եւ իր-թիւնա-
տակամ էին, Հայերին ազատութիւն տալու մտքից բարկանում ու բորբո-
քում էին:

— Դուք Հպատակներ էք, եւ լաւ կը լինի, որ այդ բանը յիշէք միշտ

ու չմոռանաք, որպէսզի յետոյ, երբ զոյջաք, ուշ չլինի, — ասում էին նրանք մեզ:

— Իայց չէ՞ որ եկեղեցիք եղբայրութիւն ու հաւատարութիւն է հըռ-
չակի, — յիշեցնում էինք մենք:

— Մի բաժանուէք մեզնից, ազգային ինքնավարութիւն մի պահան-
ջէք, համարեցէք մեզ օսման Թուրքեր, եւ այն ժամանակ մեզ վրայ էլ կը
տարածուի եղբայրութեան ու հաւատարութեան աղնիւ սկզբունքը, — պա-
տասխանում էին նրանք ու աւելացնում:

— Իսկ եթէ ուզում էք հայ մնալ, մի՛ մոռացէք, որ մենք տիրող ենք,
դուք՝ հպատակներ...

Մենք էլ էինք զարթնել: Զարթնել էինք ե՛ւ մտքով, ե՛ւ հոգով: Այդ-
պիսի խօսքերն էլ բորբոքում էին մեր հոգու կրակը, որի վրայից ժամա-
նակի մեռնէ հեռացրել էր մոխիրները շերտը:

— Մենք հպատակներ ենք, — պատասխանում էինք մենք, — բայց մէր-
լիսում մտքերը լուսաւորւում են հայ գրող ու մտնայուն Զօհրապի ճառե-
րից, եւ մեր մայրերը նրան են շնորհակալութիւն յայտնում, որ պահան-
ջում է ազատութիւն տալ թուրք կնոջը, որպէսզի մեր կրտսեր եղբայրնե-
րը մեզ նման ստրկուհիների որդիներ չլինեն... Մենք հպատակներ ենք,
բայց մենք ենք մեզ համար Բեօշլի ու սարայներ եւ մզկիթներ շինում, հայ
Մեսրոպ Էֆէնտու գրքերով էք դուք մեր լեզուն սովորում...

Մնայարծութիւնը զէնք էր մեզ համար՝ ստորացումներից պաշտ-
պանուելու: Միամիտ ու կործանարար զէնք, որի կրակոցը չէր խոցում հա-
կատակորդին, այլ զրգռում ու կատաղեցնում էր նրան: Զկարողանալով
տիրել մեզ բանականութեան զէնքով, հետապնդում պիտի վրէժխնդիր լի-
նէր զէնքի բանականութեամբ...

... Քաղաքի գիշեր էր: Գնացքը զիւ սուլում էր փոքր կայարանների
հասնելով ու զորդարով անցնում էր առաջ, շուռն առնելու մեծ քաղաքների
մօտ: Ոտքերու արդէն ցաւում էին լուսամուտի առաջ կանգնելուց, բայց
քունս փախել էր հեռու, լատ հեռու: Կենդանացել էր մէջս վաղուց մեռած,
կորած պատանեկութեան աշխարհը: Յարութիւն էին առել հոգուս մէջ նա-
հատակուած հարազատներս ու ընկերներս, եւ իր գեղեցիկ, ինքնավայել
կերպարանքով կանգնել էր մտքիս մէջ Մեսրոպ Էֆէնտին, այնպէս, ինչպէս
վերջին անգամ ծանրաքայլ մտաւ մեր դասարանը...

«Հայ Մեսրոպ Էֆէնտու գրքերով էք դուք մեր լեզուն սովորում»...

Այդ խօսքերն էինք նեւում մենք թուրք տղաների երեսին: Արում
էին, որ Մեսրոպ Էֆէնտին բարկանում էր, լսելով, որ մենք իր գործն ու
գործունէութիւնը Թուրքերի երեսովն էինք տալիս: «Ես ամէն ինչ կ'ընեմ,
որ թուրք ու հայ իրարու հասկնան, համաձայն ըլլան իրարու ու համերաշխ
ապրին, իրարու հետ: Իմ անունով ու գործովս վէճի մտնեն եւ թէկուզ
խօսքով՝ բոկտեն իրարու՝ հակառակ է նպատակիս», — ասել էր նա ինչ որ
ընկերութեան տարեկան ժողովի մէջ: Մենք լսել էինք այդ խօսքերը, մե-
ծերից ու տարօրինակ էինք համարում, որ նա արգելում է մեզ իր անու-
նը զէնքի անկ գործածել՝ պաշտպանուելու համար: «Այդ բանը հակառակ
է նպատակիս»... Ինչո՞ւ պիտի հակառակ լինէր իր նպատակին իր իսկ ա-
շակերտների հպատարութիւնն՝ իրենց ուսուցչի անունով ու գործով: Իսկ
նրա գործերն ամէն տարի աւելանում ու շատանում էին: Պատմում էին,

որ նոր գրքեր է գրել, որոնք շուտով պիտի տպագրուին. «Օսմանեան պիտութեան պատմութիւնը», «Օսման ժողովուրդը եւ անոր բարքերն ու յատկութիւնները»: Այդ երկու գիրքն էլ գրել է հայերէն՝ Հայերի համար եւ երկու գիրքն էլ թուրքերէն՝ Թուրքերի համար. «Հայերը, նրանց ծագումն ու պատմութիւնը» եւ «Հայերն օսմանեան պիտութեան մէջ»:

Ամէն բան, որ ասուում, խօսուում էր Մեսրոպ Էֆէնտու մասին հասարակութեան մէջ, դալիս, հասնում էր մեզ, նրա աշակերտներին եւ դարձեալ առիթ դառնում բուն վէճերի: Հակառակորդները, ճիշդ է, առաջուայ պէս անվերապահ ժխտական դիրք չէին բռնում. «Հայ ազգին ի՞նչ օգուտ ունի»... Բայց հիացմունք ու ցնծութիւն էլ չէին արտայայտում: Թէ ինչ էր տեսում նա մեզից հետո, մեզ անմատչելի շրջանակներէ մէջ, դա մենք չէինք տեսնում, միայն պատմութիւններ էինք լսում նրա մասին, իսկ ինչ որ տեսնում էինք եւ լսում իրենից, չէր շոյում մեր ազգային ինքնատիրութիւնը: Ձեռքած ազգպիտի գրքեր էր գրել նա՝ Թուրքերէն Հայերի մասին ու Թուրքերի համար հայերէն, բայց տաղուայ պէս դասարան էր մտնում, ի՞նչ վսեմափայլ կերպարանով, իր խելոյր-խելոյր սեւ աչքերով նայում էր մեզ ու բարեւում թուրքերէն.

— Մալամ, չոնուֆլարմ...

Կամ՝

— Մապահընըդ խէյր, ուշագլար...

Ինչ էին պէտք մեզ նրա գրած այդ գրքերը, նրա փառաբանուած հրմտութիւնը՝ արարերէնի ու պարսկերէնի: Դուրսնի ու հին-հին քարիխմնրի մեկնութեան մէջ: Գոնէ մի անգամ մեզ հայերէն «Բարի լոյս» ասէր, ասէր՝ «Բարեւ տղաք», լսէինք, որ նրա աչքերը ժպտում են մեզ այն պայծառ, լուսեղէն ժպիտով, որ հեռուից տեսնում էինք նրա դէմքին, երբ Բարայի վրայ դրօնում էր Զօհրապի, Վարուժանի ու Կոմիտասի հետ:

Մեզ համար նա միայն թուրքերէնի ուսուցիչ էր եւ թուրքի պէս միշտ մաշալաղէմ էր մեր աչքում:

— Մալամ չոնուֆլարմ...

— Մապահընըդ խէյր, ուշագլար...

Սրաներիցս արիւն էր գնում: Դրա համար էր, որ չէինք սիրում օսմանեան պիտութեան մայրաքաղաքի այդ երեւելի մարդուն, ինչպէս յարգում էինք նրան՝ հայ լինելու համար եւ յաճախ էլ պարծենում էինք նրա անունով: Մի անգամ քիչ մնաց լսէինք, թէ ինչպէս է նա հայերէն խօսում: Մեզանից մէկը նոյնիսկ լսեց: Բայց միայն մէկը: Խմբով դուրս էինք Վսփոքի ավերը գնալու: Քայլում էինք ուրախ խօսելով: Գարուն էր, օրը յստակ, օդը թափանցիկ: Քաղաքն ուրախ շողշողում էր: Յանկարծ մեզից մէկը շնորհաբար. «Տղաք, Մեսրոպ Էֆէնտին՝ Կոմիտասի, Վարուժանի ու Զօհրապի հետ կը գրօնէ»:

Մեզից առաջ քայլում էին նրանք՝ դանդաղ, հանդարտ: Հակառակ մայթով առաջ վազեցինք, որ դէմքերը տեսնանք: Տեսանք Կոմիտասին, Վարուժանին, Գրիգոր Զօհրապին եւ նրանց մէջ մեր թուրքերէնի ուսուցիչ Մեսրոպ Էֆէնտին, որ հասակով բոլորից բարձր էր: Տեսանք: Հիմա էլ աչքին առաջ քայլում են նրանք միասին, կենդանի, ուրախ, լոյս ու ջերմութիւն, վեհութիւն ու վսեմութիւն տարածելով իրենց շուրջը:

Նրբեք, երբեք, երբեք չեմ մոռանայ այդ սրբազան պահը, երբ նա-

յուսմ էի հայ հանճարի այդ չորս կոթողներին՝ երկիւղածութեամբ, սրտի թրթիռով, սքանչացումով, ինքնամոռացութեամբ: Հիմա էլ, քառասուն տարի յետոյ, ուշ գիշերին, Երեւան-Մոսկուա երկաթուղով սլացող դնացքի մէջ, ճակատս լուսամտի սառն ապակուն հպած, յիշում էի այդ պահերը եւ Հոգիս համակում էր բուռն երջանկութեամբ, որ տեսել եմ Կոմիտասին ու Զօհրապին, Վարուժանին ու Մեսրոպին: Ինքս իմ աչքին բարձրանում, պատմական նշանակութիւն էի ստանում հենց նրա համար, որ սեփական աչքով տեսել էի մեր ազգային այդ փառքերին եւ միաժամանակ տանջահար Հոգիս համակում էր սոսկումով ու ահաւոր պագցումով, երբ յիշում էի նրանց ողբերգական բախտը:

Քայլում էին շորտով՝ բարի հայեացքներով գրկելով մարդկանց, քաղաքը, երկիրը, ծովը, աշխարհը: Գիտէի՞ն նրանք արդեօք այդ ընդհանրին, որ հիացքով իրենց նայող հայ պատանիների մէջ կայ մէկը, որ պիտի ապրի դեռ շատ տառամեակներ ու իր հոգու մէջ մինչ ի մահ պիտի նրանց պատկերները, նրանց ոգին, որ մայրենի լեզուի ուսուցիչ դառնալով եւ ուսուցիչ մնալով իր ողջ կեանքի ընթացքին, այդ պատանին այդօրն իրեն համակած մեծ զգացմունքը պիտի փոխանցի նորանոր սերունդներին, որոնք այդ պահերին դեռ աշխարհ չէին եկել:

... Պննացը կանգնեց ինչ որ կայանում, կարծես յոգնած՝ ծանր շնչելով, ծանր փնչալով: Կառամասոյցը դատարկ էր, լուռ, կիսախաւար: Ուշադրութիւնը գրաւող ոչ մի բան չկար կէս գիշերային այդ անհզոր ու անսահման խաղաղութեան մէջ: Եւ քայլում էի վաղոմի միջանցքում, ըզգոյշ, յուշիկ քայլերով, որ խցերում ոտնածայներս շխուին: Վաղը, ուրեմն, պիտի խնդրեն ինձ որեւէ եղելութիւն պատմելու՝ մայրենի լեզուի նստիւնդանութեան մասին: Երբ բարձրաձայն պատմում ես, մարդկանց գէպերն են հետաքրքրում, եւ գուցէ ինչ կարողանում հաղորդել այն տպաւորութիւնները, որ յարուցել են մէջդ այդ գէպերը եւ այն խորհրդածութիւնները, որ ծնել են նրանք մտքիդ ու հոգուդ մէջ: Ի՞նչպէս պատմեմ ես նրանց, որ տեսայ մեր թուրքերէնի ուսուցչին Կոմիտասի հետ բարեկամաբար թեւ-թեւի քայլելիս, Վարուժանի հետ, մեծ Գրիգոր Զօհրապի հետ, տեսայ եւ յետո՞յ...

... Մեր ընկերներէն մէկն ասաց.

— Տեսնաւ Կոմիտասին հէ՛տ ալ Մեսրոպ էֆէնտին թրքերէն կը խօսի...

Այդ հարցը բոլորիս շուրթերի վրայ էր, նա կանխեց միւսներին: Ուրոշեցինք ետ ընկնել: Մեզից մէկը թող ետեւից կամացուկ մօտենայ լսելու, թէ ինչ լեզուով է Մեսրոպ էֆէնտին խօսում: Ետեւներից անձայն, սուրբի մատների վրայ մօտեցաւ նրանց, այնքան մօտեցաւ, որ մեզ թուում էր թէ կպաւ լայնաթիկունք Մեսրոպ էֆէնտուն: Ու մի քանի ընդէ այդպէս գնալով նրանց ետեւից, յանկարծ շուռ եկաւ ու վազեց մեր կողմը: Ուրախացած էր, մեզ էլ ուրախ լուր պիտի բերէր: Դեռ մեզ չմօտեցած՝ ձայն տուեց.

— Հայերէն կը խօսէր, տղաք, եւ այնպէս աղուճ՛ր հայերէն...

Մենք խմբուցինք շուրջը.

— Ի՞նչ ըսաւ, պատմէ, ի՞նչ ըսաւ...

Յուզմունքից շիկնել էր մեր ընկերը:

— Ի՞նչ լսեցիր, ի՞նչ խօսքեր ըսաւ...

Մի պահ հանգստանալով, որ շունչ քաշի, արագախոս մեր ընկերը հաղորդեց մեզ, որ պարզ լսել է Մեսրոպ էֆենտու խօսքերը: Նա պարզ հայերենով ասել էր. «Նողկանք կը գլխավոր ասէն աղային թշնամանքէ: Ազգերու համերաշխութիւնն իմ երազս է, եւ ուխտած եմ ծառայելու այդ դազափարին ու պիտի չլքեմ իմ ուխտէս»: Զօհրապն տեսել է. «Կը փափաքեմ յաջողիս ազնիւ նպատակիդ ճանապարհին»: Կոմիտասն աւելացրել է. «Ընչմարիտ է Մեսրոպի դազափարը եւ ճանապարհը ճիշդ է, իրար յարգելու համար ազգերը պիտի ճանաչեն իրար, ճանաչելու համար պիտի դիտանան միմեանց լեզուներն ու մշակոյթը, Մեսրոպը ճիշդ է ասում»: Մեր ուսուցիչը Կոմիտասի այդ խօսքի վրայ ասել է. «Քաջալերք է ինծի համար հաւանութիւնդ, Հայր Սուրբ»...

Հետեւեալ օրը մեր դպրոցի բոլոր աշակերտները գիտէին, որ մենք լսել ենք Մեսրոպ էֆենտու, Կոմիտասի, Զօհրապի ու Վարուժանի զրոյցներէրէ մի պատուով եւ լսել ենք, թէ ինչպէս Մեսրոպ էֆենտին հայերէն է խօսել: Բոլորը մեր խմբին երջանիկ էին համարում, մեր մէջ ամէնէն երջանիկը մեր ընկերըն էր, որ լսեց իր ակադէմիկներով: Նա բոլորի նախանձի առարկան էր հիմա:

Բայց ահա, հետեւեալ օրը կրկին մեր դասարանը մտաւ մեր թուրքերէնի ուսուցիչ Մեսրոպ էֆենտին, ինչպէս միշտ՝ պատկառելի, ազդու կերպարանքով, ինչպէս միշտ՝ թուրքալարի մոայլադէմ եւ ինչպէս միշտ՝ արտասանեց բարի լոյսի նոյն թուրքերէն խօսքերը, որ լսում էինք տարիներ շարունակ:

— Մալամ շննուֆլարըմ...

Ու այնուհետեւ միշտ էլ այդպէս.

— Սապանըմըգ խէյր, ուշագլար,

— Մալամ շննուֆլարըմ

Հիմա արդէն սկսում էինք առելութեան նմանուող տհաճ գլխացմունք տանել դէպի այդ արքայատեսք մարդը, որ, ասում էին, ծնունդ է հայ դարբնի ընտանիքում եւ հիմա էլ հայրը դարբնութիւն է անում: Օտարանում էր նա մեզ համար իր յամտութեամբ, իր հաստատած անխախտելի կարգապահութեամբ ու խստապահանջութեամբ: Ձէինք սիրել նրան, բայց բոլոր առարկաներից առաւել լաւ՝ թուրքերէն էինք սովորում, հիմա էլ օտար բ մնում նա մեզ համար, բայց բոլոր ուսուցիչներից առաւել՝ դարձեալ նրանից էինք ակնածում:

Այդպէս անցնում էր ժամանակը: Ամէն օր նորութիւններ էին լինում երբեմնի բիւզանդական կայսրերի, հիմա օսմանեան պետութեան չքեղ ու աղքատիկ, փայլուն ու ազնոտ մայրաքաղաքում: Մէկ՝ եւրոպական նշանաւոր դերասաններն ու դերասանուհիներն էին յայտնուում Վոսփորի ափերին ու ընդհանուր հետաքրքրութիւն ստեղծում, մէկ քաղաքը յուզում էր չզիտես որ սղորիւրից բխած «հաւաստի» լուրերով, թէ արիւնոտ սուլթան Համիտի կողմնակիցները յեղաշրջում են պարսաստում, մէջիսում սուր վէճեր էին լինում հասնելով երբեմն իրար զէնքով սպառնալու, մէկ՝ հանճարեղ Կոմիտասը համերգներ էր տալիս, հմայելով մարդկանց սրտերը, կամ Գրիգոր Զօհրապը նոր ճառ էր ասում մէջիսում՝ դրդուելով արիւնոտ խաւարամիտներին: Տաղնապին յաջորդում էր խաղաղութիւնը, խաղաղութեանը՝ նոր տաղնապի: Ողբերգութիւնն ու հիասթափութիւնը փոխարինում էին իրար ամէն ամիս ու ամէն շաբաթ:

Իսկ դպրոցական մեր առօրեան համարեա նոյնն էր մնում՝ մի քիչ տեղեկութիւններ դիտութիւններէ մասին եւ վարժութիւններ՝ լեզուներէ մէջ՝ Հայոց նոր լեզուի ու դրարարի քերականութիւնը, ֆրանսերէն եւ ան-խուսափելի Մերոպէ Լեֆէնտին ու նրա թուրքերէն ողջոյնները ամէն առա-ւօտ, առաջին դասին «Սալամ շնորհակալութեամբ»...

Այդպէս հասանք մենք վերջին դասարանին, երբ պատերազմը պա-թեց։ Դուցէ միայն նրա համար, որ Ատալաք, Մուսալաք, «Հաւասարու-թիւն», ազատութիւն» հռչակողները կոտորեն, մոլուցեով ջանան ի սպառ ոչնչացնել մեր ժողովուրդին։ 1915-ի դարնանք օսմանեան կայսրութեան հեռաւոր ծայրագաւառներէց տեղահան էին անում ամբողջ գիւղերի ու քա-ղաքների հայ բնակչութեանն ու քլում դէպի հարաւ, դէպի Իրաքի ու Սու-րիայի անապատները։ Ինչպէս յետոյ, պաղանազները ցոյց տուին, վաղուց ծրագրուած ու պատրաստուած ժողովրդասպանութիւն էր դա, պատմու-թեան մէջ չեղած ու չլսուած։ Վաղուց ծնուած ու հիմա դաժանօրէն դուր-ծաղրուող թուրք պետական մտայնութիւնն էր յաղթանակում։ Ամէն օր մէկը միւսից, առաւել սոսկումնայի, աւելի անհաստատի ու աւելի սահ-մընկեցուցիչ լուրեր էին լսում։ Տեղահան ժողովրդին զանգուածաբար սպանում էին տարադրութեան ճանապարհներին՝ ձորերը լցում էին երե-խաների, կանանց ու ծերունիների գիակներով, դետերը կարմրում էին նրանց արիւնից։

Մենք արդէն մանուկներ չէինք եւ հասկանում էինք ժամանակի ա-հաւորութիւնը, վրասնդի անկշռելի չափը, մեր ժողովրդի ու ամէն մէկիւս բախտի ողբերգականութիւնը։

Հիմա հերթը մայրաքաղաքի մտաւորականութեանն էր հասել...

... Եւ տաղանդով, աշուղ, սարսափով, ողբերգականութեամբ լի ան-յուսութեան ալք օրերին կատարուեց այն, ինչ որ պիտի վաղը պատմէի վաղուի իմ ուղեկիցներին՝ ջուրհակահարին, զնդապետին ու սրմնադիրին։

Մի օր վաղ առաւօտ, ծանրաքաղ ու պատկառելի՝ դառարան մտաւ Մերոպէ Լեֆէնտին։ Նրան տեսնելով, մենք սոսկումով իրար նայեցինք, մեր մարմինները փառադուեցին։ Եկել է մեզ թուրքերէնի քերականութիւնը սովորեցնելու։ Թուրքերէն մեզ «բարի առաւօտ» մաղթելու։ Ինձ այնպէս էր թւում, թէ հէնց որ բերանը բացի ու առաջին բառն արտասանի, տեղից վեր կը թռչնի ու եղունգներով կը շանդոսի նրա խոշոր-խոշոր, սեւ ալ-քերը, կը զոռամ, կը ճշամ, ու բոլորս կը թափուենք այդ թուրքամոլ Հայի վրայ, մեր իսկ դասարանում կը խոշտանգենք նրան։

Պատրաստ էի ես այդպիսի վայրենութեան եւ դասարանի միւս ըն-կերներս նոյնպէս։

Ահաւոր էր այդ զգացումը։

Բայց ահա ծանրաքաղ, գլուխը լայն կրծքին հակած, մօտեցաւ, ամ-պիսին Մերոպէ Լեֆէնտին, սովորականից աւելի մոայլ։ Ամպիտը նրա կրծքից ցած էր։ Լուռ մօտեցաւ, կրթնեց նրա վրայ, որ երբեք չէր տեսնւում ու նայեց մեզ։ Նայեց խելազարի հայեացքով, որից բոլորս ստրուտացինք։ Եւ սկսեց խօսել։ Օ՛, զարմանք, նրա շրթունքները հայերէն բառեր էին ար-տասանում։

— Միբիլի հայրդիներ... անուշի՛կ դաւակներս...

Այդ խօսքերը չնչնաց ու շրթունքները դողացին, աչքերը լցուեցին,

կրծքով յենուեց ամպիոնին: Վայելլատես, վսեմաշուք Մեսրոպ էֆէնտին փոքրացել էր կարծես, փոքրացել ու խեղճացել էր:

Նայում էինք նրան եւ թւում էր մեզ, թէ սարսափը գիշատիչ թրուշտնի կերպարանքով սաւառնում է մեր գլխակերելում:

Մեսրոպը չէր կարողանում շարունակել իր խօսքը: Ահաւոր լուսթիւն էր տիրում դասարանում: Թւում էր, թէ բոլորս այդպէս լուռ ու քարացած պիտի մնանք: Վերջապէս մեր ուսուցիչը շտկուեց, ամբողջ փառահեղ հասակով մէկ կանգնեց ամպիոնի առաջ եւ շարունակեց իր կիսատ խօսքը.

— Զաւակներս, — կրկնեց նա դունատուած, — անողորմ է իրականութիւնը մեզ համար... Ազգովին նահատակուելու եւ պատմութենէն հեռանալու, սեւ վտանգն է կտրուելը Հայոց ազգի վրայ: Զաւակներս, Հայոք դիմե՛ք՝ այս գիշեր կայանքի են տոնուեր կոմիտաս, Զօհրապ, Միսմանթօ, Վարուժան եւ բազում այլ... կեռ եւթաղանք պիտի անոնց հանճարեղ դանկերն ալ փչրէ...

Փլուեց ամպիոնին, երկու ամբարձր աչքերը ծածկեց: Մենք որ ժպիտ չէինք տեսել Պրա հայկական աչքերում, նրա հայերէն լացը տեսանք: Դասարանում լսուեցին հեծկլտոցներ: Եւ հեկեկում էի ջղաձիգ ցնցումներով:

Քիչ յետոյ Մեսրոպ էֆէնտին սթափուեց, վշտով եւ յուսաբեկ հայեացքով նայեց մեզ:

Ու խօսեց.

— Հիմա ոչինչ չունենք մենք, դաւակներս, ոչ յոյս ու ապաւէն, ոչ դէնք ու զօրութիւն: Ունենք միայն հայ լիզու եւ հայ դիրք... Պահպանեցէ՛ք, որ չկորնչին, պահպանեցէ՛ք հայ լեզուն եւ հայ դիրքը, եթէ փրկուիք այս եղիւնէն: Եթէ իմ յիշատակս յարգել ցանկանաք, սիրեցէ՛ք եւ դաւոյս սերունդներուն աւանդեցէ՛ք հայ լիզուն ու հայ դիրքը...

Լռեց: Մտադրիւ նայում էր մեզ, մենք շնչանդծ նրան էինք նայում: Հիմա զոպում էր իրեն: Կանգնել էր Հոյակապ մի կոթողի նման եւ կարծես ոչ մի հոգով ու փոթորիկ պիտի չկարողանային տեղից շարժելու այդ կոփածոյ յուշարձանը:

Դարձեալ դողացին շրթունքները, դարձեալ աչքերը լցուեցին, խոր-խորշոր, սեւ աչքերը, ու վերստին խօսեց:

— Մնաք բարեաւ, դաւակներս... Մնաք բարեաւ: Այլեւս երջանկութիւն պիտի չունենամ մեզի տեսնելու...

Դարձեալ հեծկլտանքներ ու հեկեկոց լսուեցին դասարանում:

Այս անգամ, նահատակութեան զնացող առաքեալի պէս, հանդարտ, ալ ձեռքը վեր բարձրացրեց ու կրկին քարացաւ՝ այդ կեցուածքի մէջ:

— Գիտցէ՛ք միայն, դաւակներս, — շարունակեց, զարմանալի հանդիստ ձայնով, — որ ձեր թուրքերէնի խիստ ուսուցիչը խիստ սիրտ չունէր: Անկը սիրէր մեզի եւ բոլոր մանուկներուն, կը սիրէր բոլոր ազգերու լեզուները եւ ամէնէն աւելի՝ Հայոց նուիրական լեզուն: Գիտցէ՛ք, որ ան Հայ էր ծնունդը, հայ ապրեցաւ եւ հայ ալ պիտի մենի հպարտութեամբ: Իսկ դուք՝ շմոռնաք վերջին խնդիրքս՝ ապրեցուցէ՛ք հայ լեզուն եւ հայ դիրքը: Մնաք բարեաւ...

Եւ երբ այդ խօսքերից յետոյ նա ծանրաքայլ ու լուռ դուրս եկաւ դասարանից, հասկացանք, որ դնում էր մեռնելու, որ վաղը, կամ դուշտ հէնց այսօր աշխարհը կը կորցնի այդ մեծ մարդուն:

Թուաց թէ կեանքը մէկէն դաւաճեցաւ, կանգ առան բոլոր սրտերը, որ տրոփում էին, ներս խուժեց մահուան պաշտօնը ու պարուրեց մեր հոգիները...

✽

Պահաջը թափ առած, հեւհեւ սլանում էր ընդարձակ դաշտերով, Բացում էր վճիտ, յստակ, դեղնեցիկ մի առաւօտ: Գինովցածի պէս երեւում էր ներս մտայ վաղու մեր խուցը: Ջուրակահարն ու որմնադիրը հանգիստ քնած էին, զննարկեան անկողնու մէջ նստած ծանր շնչում էր: Ինչ որ հապէր կուշ առեց: Եւ մի բաժակ ջուր բերի նրան: Երկու կում խմեց, շնորհակալութիւն յայտնեց ու բաժակը սեղանի վրայ դնելով, նկատողութիւն արեց ինձ:

— Ինչպէս կարելի է ամբողջ գիշերն արթուն մնալ, ի՞նչ էք անում...

Պառկեցի քնելու: Երեւի զննարկեալ թոյլ չէր տուել, որ ինձ արթնացնեն: Քնել էի մինչեւ օրուան երկրորդ կէսը: Արթնացայ, զննեցի լուացուելու, վերադարձայ մեր խուցը:

— Մի բաժակ օղի տո՛ւմ, — ասաց որմնադիրը, — կը հանգստացնի:

— Շնորհակալ եմ, — պատասխանեցի ես: Ձունէի ոչ խմելու, ոչ ուտելու արտօժակ ու տրամադրութիւն:

— Գունատ էք, — նկատեց ջուրակահարը:

Մի քանի ժամ յետոյ պիտի հասնէինք Մոսկուա:

— Իսկ դուք մտադիր չէ՞ք ձեր պարագը հատուցանելու, մայրենի լեզուի ընկեր դասաւանդելու, — հարցրեց ջուրակահարը:

Գնդապետը նայեց ինձ ժպտալով: Շողքեր ու ջերմութիւն կային այնպիսի ծաղիկի մէջ:

— Կը խնդրեմք, ներողութիւն, — կրկնեց որմնադիրը:

Եւ ես պատմեցի նրանց այն ամէնը, ինչ յիշել էի ողջ գիշերը ոտքի վրայ արթուն մնալով, ճակատու լուսամուտի պաշտպանութիւն դրած:

Երբ աւարտեցի, վաղուցի մեր խուցում երկարատեւ լուսութիւն տրեց: Յետոյ, ծանր շնչելով, զննարկեալ հարցրեց.

— Ձեզ էլ նոյն հարցը տանք. ի՞նչ պատահեց յետոյ Մեքսիկոյէ ֆէնտու հետ:

— Այո, ես էլ պիտի հարցնէի, — ասաց որմնադիրը...

Ու ես լրացրի կիսատ մնացած պատմութիւնը:

...Նշանաւոր թուրքագէտն ընդունելութիւն է խնդրում ներքին գործերի նախարար Թալէաթ փաշայի մօտ:

— Գայլի որջն է դնացել, — ասաց որմնադիրը:

— Այո: Գայլի որջը, ամենակատաղի դայլի: Գնում է Թալէաթի մօտ ու ասում է.

— Ես եկել եմ խնդրելու ձեզի, փաշա, որ կալանքի առնէք ինձի եւ այնպէս վարուիք հետո, ինչպէս բարեկամներուս եւ ընկերներուս հետ վարուեցաք, որովհետեւ ես ալ հայ եմ: Եթէ խնդրեք մերժէք, ինքս ինձ ստորնացած պիտի զգամ...

Թալէաթը, ասում են, խնդրում է նրան նստել եւ սիրալիք հետը խօսելով, ասում է.

— Մենք ձեզ յարգում ու զնահատում ենք, Մեքսիկոյէ ֆէնտու: Եւ չէինք ցանկանայ զրկուել ձեզից...

— Հիմի պատիւ չէ ինձի համար ձեր յարգանքն ու գնահատութիւնն, — ամենազօր Թալէաթին ընդհատելով, պատասխանում է նա, — Հիմի կ'անպատուէք զիս՝ կեանքս ինձի թողնելով...

Թալէաթն այդ ժամանակ սեղանին է պարզում իր գերանաչափ թեւերը, իրար վրայ է դնում իր խոշոր, մոտ թաթերը եւ բռնակալի լայն դէմքին խաղում է միայն իրեն յատուկ դիւական ժպիտը:

Ասում են՝ Թալէաթի այդ կեցուածքը սարսափ էր առնում նոյնիսկ օտարերկրեայ դեսպաններին: Մի օր Մորկենթաուն նրան ասում է.

— Ետ քաշէք ձեր թեւերը սեղանի վրայից, Թալէաթ փաշա, որպէսզի կարողանանք հանդիստ խօսելք...

— Մալում, — ասում է Թալէաթը՝ թաթերը երկարելով դէպի Մեսրոպ էֆէնտին, — Դուք մեծ ծառայութիւններ ունէք Օսման ցեղին, եւ մենք կարող էինք մոռանալ, որ դուք հայ էք, որոնց մենք պիտի ոչնչացնենք մեր ցեղի բարդաւանման համար՝ Աստուծոյ ու մարգարէի հաւանութեամբ... Բայց դուք խնդրում էք, որ չտարբերենք ձեզ միւս Հայերից: Զեր նկատմամբ ունեցած իմ խոր յարգանքը թելադրում է ինձ չմերժել ձեր խնդրօքը, ուղարկել ձեզ Զօհրապ էֆէնտու մօտ, որին առանձնապէս համակրում էի, բայց որպէս օսմանցի, պարտաւոր էի նրան ոչնչացնել: Օսմանցին իմ մէջ գերազանցում է մարդուն...

Թալէաթ փաշան համհարզի միջոցով շտապ իր մօտ է կանչում Պուսոյ ոստիկանապետին.

— Պետրի պէյ, — դիմում է նրան բռնակալը, — Մեսրոպ էֆէնտին վերաւորում է, որ ուրիշ ականաւոր Հայեր չկան արդէն Պուսում, իսկ ինքը ապրում է ողջ առողջ: Մենեին իր համար պատիւ է համարում նա... մի զրկիր նրան այդ պատուից, Պետրի պէյ: Ես չեմ կարող մերժել Մեսրոպ էֆէնտու նման յարգելի մարդուն...

— Օ՛, ինչ մեծահռչակութիւն, փաշա... ձեզի միայն արժանի մեծահռչակութիւն, — ասում է Մեսրոպ էֆէնտին, — օսման պատմութիւնը ձեզի պէս մէկի մը դեռ չի ծներ: Հաւատացէք ինձի, որ դուք իսկապէս բոլորէն գերազանց եղաք, փաշա...

Պատմում էին, որ Մեսրոպ էֆէնտին ուրիշ ծանր խօսքեր է նետել ամենազօր Թալէաթի երեսին եւ այդպիսով արագացրել իր մահը, իր նահատակութիւնը:

Լուսակերտ, 8 Ապրիլ 1964

ՀՐԱՋԵԱՅ ԴՈՉԱՐ



Umsatz des Hauptes

Geht die Art von dem Kopf aus: Hauptknoten. (nach Kopf).
 Hauptknoten ist der Kopf, der Kopf, der Kopf.
 2. von dem Kopf aus: Hauptknoten ist der Kopf.
 In dem Kopf ist der Kopf, der Kopf.

Der Kopf ist der Kopf: Hauptknoten ist der Kopf.
 In dem Kopf ist der Kopf, der Kopf.
 Der Kopf ist der Kopf, der Kopf.
 In dem Kopf ist der Kopf, der Kopf.

Der Kopf ist der Kopf: Hauptknoten ist der Kopf.
 In dem Kopf ist der Kopf, der Kopf.
 Der Kopf ist der Kopf, der Kopf.

Der Kopf ist der Kopf: Hauptknoten ist der Kopf.
 In dem Kopf ist der Kopf, der Kopf.
 Der Kopf ist der Kopf, der Kopf.

1927

Umsatz des Hauptes

Reg. 24 April 1927 Hauptknoten ist der Kopf.

1927-ին «Կ. Բոլսոնոսեմի համար» գրուած Վ. Թէֆէնանի այս նշխարը մեզի տրամադրած է նայնիմէն գրագէտ Կ. Փոլսոնոսեմ: Ձեռագրին լուսանկարչական պատճենին հետ ֆէքսուածը կը հրատարակեմք մոյնութեամբ:

Հաւանակամ է, որ առօրեայ մնացած նման նշխարներ գտնուին ուրիշ գրողներու գիւտին մէջ եւս: Պիտի խնդրէիմք իրենց պարգտանքէն եւ բարեկամներէն, որպէսզի Փոլսոնոսեմի օրինակով, գրական մտնուլին միջոցաւ, օր առօր կամրութեամբ սեփականութիւնը դարձնեն զանազան:



ԾԱՌՈՒՂԻ ՄԸ ՄԱՐՍԷՑԼ

Գիշերին մէջ չորս կարգ ծառ: հաղաղութիւն, լուսնի լոյս-
Քանի՜ տարի անցեր եմ անոնց մէջէն, ներքեւէն.
Հիմա վայրկեան մը միայն իրենց մէջտեղն եմ նորէն,
Ու կանգ առած՝ կ'ունկնդրեմ հեռանըսզը հագւոյս...

Մտանքն յօտուած եմ ամբողջ: Անոնք ի՞նչքան եմ մեծցեր:
Կը կարկառեմ դէպի վեր բազուկնիմ մերկ տակաւին:
Գետնին վըրայ քովէ քով շուքերն իրենց կը պառկին,
Մեռելներու պէս անթաղ՝ նիւաք, երկար մեռելներ...

Երա՛ւն տարի, Աստուած իմ: Անոնք ու ես, այն տանն,
Թաքմ էինք դեռ ու հազիւ նայած եմք մերթ իրարու՝
Նայելով վեր շարունակ՝ մեր միջին մէջ մեծնալու...

Հիմա ծառերը անխախտ կարծես թէ գիւ կը գիտեն,
Ու կը ճանչնան գիւ կարծես, ու կը խօսին վերէն վար.
— «Տեղ փոխելով այդքան շատ՝ տուածցի՞ր թէ շահեցար...»

ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ

1927

Ընդ. 24 փետր. 1934 բանաստեղծ-գրական Պ. Կ. Բոլսոնոսեմի համար:

ԼԻԲԱՆԱՆՅԻ ԳՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ.



ՄԻԻԱՅԻԼ ՆԱԻՄԱ

Եթէ արար գրագէտներուն մէջ կան այնպիսիներ՝ զորս կարելի է որակել որպէս միջազգային դէմքեր, անտարակոյս, ամենց առաջինն է լիբանանցի գրագէտ Միիայի Նաիման։ Անոր գիրքերը թարգմանուած են շատ մը եւրոպական եւ արեւելեան լեզուներու։ Ամերիկեան, Անգլիական եւ Հնդկական մեծագոյն հրատարակչատուները, Նաիմայի գիրքերը հրատարակելու համար յարատեւ մըրցակցութեամբ մէջ են։

Չկայ արար ընթերցող մը, որ Նաիման չհանչնայ, եւ բազմաթիւ հատորներ կարդացած չըլլայ իրմէ։

Ան մշակած է բանաստեղծութիւնը, յօդուածը, գրադատութիւնը եւ այս քոյր սեռերուն մէջ եղած է գագաթ մը, եւ արդի արաբական գրականութեան մեծագոյն առաջնորդներէն մէկը։ Ու այսօր, հակառակ 75-ամեայ ծերունի

մը ըլլալուն, ան տակաւին կը ստեղծագործէ եռանդով եւ կու տայ այնպիսի գործեր, որոնք իրենց ընկերային ու փիլիսոփայական բովանդակութեամբ կը վկայեն թէ ծերունի Նաիմայի գրականութիւնը տակաւին թարմ է եւ կենսով բարախան։

Նաիմայի գրական առաջը իր գեղեցիկ ու հարուստ ամանադրութիւնն է։ Բնածին ճիրքերը ճշիւացած են ըմպարձակ դաստիարակութեամբ մը եւ ունի իր ըսելու ուժովը ուղղակի ընթերցողին սրտին ու մտքին հաղթարդ աչմակիւսի ոն մը՝ զոր անկարելի է շփոթել որ եւէ ուրիշի մը հետ, եւ որեւէ ատեն մէկ տողէն աւելի կարդալու պէտք չեւ ունենար զինք ճանչնալու համար։

Նաիմա ծնած է 1889-ին Լիբանանի համեստ գիւղերէն մէկուն՝ Պիսաֆայի մէջ։ Գիւղին ռուսական մայրաքաղաքներէ

աւարտելէն ետք՝ որպէս գերագանցիկ աշակերտ, խառնակամ միտքով և անհատական կողմէն զրկուած է Նազարէի խառնակամ ուսուցչանոցը: Հոն ալ գերագանցելով իր դասընկերները, նոյն միտքով և անհատական կողմէն զրկուեցաւ Ռաբանիայ Պօլ-թաւա քաղաքի ժողովրդային ուսումնարանը, ուր մնաց հինգ տարիներ: Այդ տարիները եղան Նախնայի անձնավարձ-թեան կազմութեան եւ գրական մեծ երկունքի տարիները: Սովախարի մը անկողնոցէն ան ինկաւ խառնակամ ու միջոցաւ գրականութեան վրայ եւ իր ընթերցումները զինք ըրին մտքի, արուեստի եւ ազնիւ գեղարուեստի առաջնայ մը:

1911-ի գարնան վերադարձաւ Լիբանան եւ 1912-ին մտաւ Ուաշինգթոնի համալսարանը - Միացեալ Նահանգներ - չորս տարի ետք անկէ դուրս գալու համար Պալատար Արուստից եւ Իրաւաբանութեան Լիսանսիէ տնօրէններով: Համալսարանն ուսանած միջոցին լոյս տեսաւ իր առաջին արտերթնով գրած յօդուածը որ գրախօսական մըն էր ձեռնարանի «Ջախջախած քեներ» պատմութեան: Ասկէ ետք իրարու յաջորդեցին իր յօդուածներն ու պատմութեան բնոյթը աւելցնելով իրեն արագ եւ տարածուն համարաւ մը:

1917-ին, Ամերիկա դուրս գալով իր չէզոք գիտական պատերազմի մէջ մտաւ դաշնակիցներու կողմէն եւ Նախնա հազարաւոր ուրիշ տարա երիտասարդներու հետ, ավերակներ անցնելով անկատ զըրկուեցաւ Ֆրանսա: Երբ պատերազմը վերջացաւ, ամերիկեան սպայակոյտը իր համալսարանական բանակայիններէն շատնց առիթ տուաւ, որ երաջական գրական համալսարաններու մէջ ուսումնասիրութիւններ կատարեն եւ սերտեան չորս ամսուան ժամանակամիջոցի մը համար: Հիւսիսային Ֆրանսայի մէջ «Ռեկոն» համալսարանը վիճակուեցաւ Նախնայի,

ուր ան սերտեց արուեստի պատմութիւնը եւ Ֆրանսայի քաղաքական պատմութիւնը նաեւ ժողովրդային գրականութեան պատմութիւնը:

1919-ին Միացեալ Նահանգներ վերադարձաւ եւ 1932-ին եկաւ իր հայրենիք, Լիբանան, ուր կը մնայ մինչեւ այսօր, իր ծննդավայրին՝ Պիսախի մէջ, ամառ ձմեռ:

Ան հեղինակ է մէկ քանի տասնեակ հատորներու, որոնց մեծ մասը քարգմանուած է օտար լեզուներու: Գրած է ռուսերէն, անգլիերէն եւ արաբերէն լեզուներով:

Իր եօթամասունամեակին առիթով երեք տարուա հատորներով Նախնա գրեց իր կենսագրութիւնը, գրական այնպիսի ձեռնարկ, որ կը հաւասարէ իր գրական գործունէութեան ձեռնարկին: Արագ աշխարհի գրական քննադատները Նախնայի պատմութեան փորձառութիւններէն ու կենսական յատկանշական դրաւագներէն աւելի այս համալսարանին առջեւ կանգ առին եւ ընդգծեցին երկույնները տալու անոր գերագանց վարպետութիւնը:

Այսօր եօթամասունեակին տարեկան է Նախնա, թայց կը պահէ իր երիտասարդական եռանդը: Լիբանանի երկրորդական վարժարաններու, ինչպէս նաեւ համալսարաններու կողմէ մինչեւ օրս հրաւերներ կը ստանայ եւ տարին մի քանի անգամ կը դառնայ իր քաղաքէն վարժարանի քեմէն:

Նախնա՝ ինչպէս անցեալին նաեւ այսօր կը մնայ կուռք Լիբանանի գրական երիտասարդութեան եւ ուսանողութեան: Աւելցնենք, որ այս անվերապահ յարգանքը միայն Լիբանանի երիտասարդները չեն, որ կ'ընծայեն իրեն: Նախնա կը վայելէ միեւնոյն յարգանքը արաբական ամբողջ աշխարհին մէջ եւ իր խօսքը ուժ եւ կշիռ աւելի ամենուրեք:

Բ. Զ.

ԱՆԵՅ ԺԱՅՐԱՎԱՆՈՒԹԻԱՆ

ՄԻՆԱՅԻԼ ՆԱԽԱ

ԱԴԱՄԱՆԴԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԸ

Թարգմ. Բ. ԶԱՆՈՅԵԱՆ

Քարկութենէն ելեկորականացած
ձեռքով մը, պը խոթազրապետը վերցուց
հեռաձայնային ընկալուչը: Ժամերէ ի
վեր կը փորձէր յօդուած մը գրել, զօ-
րացնելու համար իր կուսակցութեան
թեկնածուին դիրքը յառաջիկայ ընտրու-
թեանց մէջ, սակայն գրելը չէր հպատա-
կեր իրեն: Տասներորդ թուղթը ճոթկե-
լով զամբիւղ նետած էր, երբ հեռաձայնը
քստներորդ անգամ ըլլալով հնչեց: Մաղ-
թեց որ ընկալուչը ձեռքին մէջ քարի մը
վերածուէր, որպէսզի զայն նետէր զինք
այդպէս խանգարողին եւ խորհուրդները
ցրուողին վշտուն: Բայց երբ հասկցաւ
որ խօսողը տպարանին տնօրէնն էր, ան-
միջապէս հանդարտեցաւ եւ բարկութիւ-
նը զսպեց:

— Այո՛, այո՛, ճանչցայ քեզ. խօսէ՛.
նոր խանդարո՞ւմ մը տպարանին մէջ:

— Ո՛չ: Սակայն խանդարումէն աւե-
լի դէ՛շ բան մը:

— Գործաւորներուն մէջ խլրտո՞ւմ:

— Ո՛չ. ատանկ բան չկայ, բայց...

— Բայց ի՞նչ. գործաւորներէն վեր
է եւ կորսնցնելիք ժամանակ չունի՞մ:

— Պատաւ մը եկած է եւ անպայման
ձեզ տեսնել կ'ուզէ:

— Ո՞վ է ան. ի՞նչ կ'ուզէ ինձմէ:

— Անունը Հուրի է. կ'ըսէ թէ անձ-
նապէս ձեզի հաղորդելիք ունի:

— Հուրի՞. մեր կրակները հերիք չե՞ն
մեզի. չկրցա՞ր զայն ճամբու գնել անու-
շուքեամբ... ի հարկին խտտութեամբ,

եւ զրկել սատանային, դժոխքէն...

— Փորձեցի, բայց ի զուր: Զափա-
ղանց ծեր է եւ միայն անոր ներկայու-
թիւնը բոլոր զործաւորները կը զբաղ-
ցընէ:

— Դուրս ըրէ՞ք զայն. ժամանակ չու-
նի՞մ պատաններ ընդունելու, նոյնիսկ ե-
թէ կրակ ու բոց ըլլան:

— Խտտութիւնը կրնայ մահացնել
զայն. գրեթէ ուրուական մը, մարդկային
չուք մըն է միայն:

— Ըսէ՛ որ ուրիշ առթիւ գայ զիս
տեսնելու:

— Բա՛րեկամ, այդ բոլորը ըսինք եւ
ան կը պնդէ ձեզ տեսնել այսօր, ա՛յս
վայրկեանիս:

— Հիմա պիտի... Մեղա՛յ, մեղա՛յ:
Լա՛ւ, բեր զայն ինծի, հասկցնելէ ետք
թէ ժամանակս հինգ վայրկեանէն աւելին
չի ներեր:

Պառաւր, կռնակին պէս կորացած
պաւսպանի մը կռթնելով, մտաւ խմբազ-
րապետին դրասնեակը: Հաղուստը աղ-
քատութիւն եւ պարզութիւն կը մատնէր,
բայց բնաւ անմաքրութիւն: Սեւ լաշակը
ճերմակ մազերուն վրայ քաշելէ ետք՝
յարդանքով բարեւեց, եւ բոլորովին ան-
զէն բերնի մը մէջ պապանձող լեզուով
մը ըսաւ.

— Եւ Հուրին եմ:

— Պատիւն ունի՞մ ծանօթանալու.
ի՞նչ հրդեհ բռնկցնելու եկած է Հուրին:

— Ներողամիտ եղէ՛ք, պարո՛ն, լսո՞

դուք ինչու քիչ մը ծանր է, հաճեցէ՛ք մայրնեքնիդ բարձրացնել:

— Ըսի՛ թէ պատիւ ունիմ ծանօթանալու. ի՞նչ կ'ուզես ինձմէ:

— Ես Հուրին եմ, Յակոբին կ'ընը:

— Լաւ. Հուրին, Յակոբին կ'ընը, ի՞նչ կ'ուզէ «Լոյս» թերթի խմբագրատէն:

— Յակոբը, Յակոբը, չէ՞ք ճանչնար զայն:

— Կը ցաւիմ, զեռ այդ պատիւը չունեցայ:

— Հանդուցեալ հայրդ շատ կը սիրէր զայն:

— Աստուած ողորմի՛ երկուքին ալ հոգւոյն. յետո՛յ:

— Աստուած ողորմի՛ հօրդ հոգւոյն. բայց ամուսինս տակաւին ողջ է Աստուծոյ շնորհքով:

— Լաւ, ուրեմն թող չողորմի. ե՞տքը:

— Յակոբը 105 տարեկան է եւ ես՝ 95 տարեկան. այս օրը մեր ազատանդեայ յոբելեանին օրն է:

— Ուրեմն եկած ես զիս յոբելեանական հանդէսի՞ն հրաւիրելու:

— Այսօր վերջացաւ մեր ամուսնութեան 75-րդ տարին. ասիկա միայն երեք անձեր զիտէին. ես, Յակոբը եւ Աստուած, ու ահա դուն եղաք չորրորդը:

— Մեծ պատիւ մըն է ինձի, տիկ. Հուրի, ըլլալ չորրորդ անձը խոսքի մը՝ որուն երրորդը Բարձրեայն Աստուած է: Բայց վերջապէս ի՞նչ դործ ունիմ Հուրի եւ Յակոբի յոբելեանին հետ:

— Ներողութիւն, չլսեցի. Աստուած տանի ուս ծերութիւնը:

— Արդարեւ, դործիդ եկածը լաւ կը լսես, եւ չեկածն ալ բնա՛ւ չես լսեր:

— Մի՛ ծաղրէ՛ք զիս, տէր իմ. 95 տարին երբ ծաղրելը բնաւ պատշաճ չէ:

— Ըսի՛ թէ ի՞նչ է դործս մեր յոբելեանին հետ:

— Ինչպէ՛ս թէ ինչ է. մեր յոբելեանին առնչութեամբ ամէն բանի մէջ տմէն բան էք դուք:

— Ե՞ս:

— Այո՛ դուք. որովհետեւ առանց Յակոբին դուք այսօր հոս չէիք ըլլար:

— Ըսե՛լ կ'ուզէ՛ք որ մեր ամուսինի՞ն կը պարտիմ ներկայ գրեք:

— Ծի՛ղդ այդպէս. Յակոբը մեր հօր աջ քաղուկն էր երբ ան հիմնեց այս թերթը: Միայն երկուքն էին այս գործին մէջ: Ամուսինս գրադարութեան, տպագրութեան, ցրուումի եւ այլ ծանր աշխատանքներուն համար էր, եւ հայրդ ալ վարչական եւ խմբագրական գործերուն կը նայէր:

— Քանի՞ տարիներ ծառայած է Յակոբը այս թերթին:

— Յիսո՛ւն տարիներ. կը կարծէի թէ զիտէք ասիկա. հանդուցեալ հայրդ պատմած չէ՞ր քեզի Յակոբի մասին:

— Հոս նայէ՛, Հուրի մայրի՛կ, ես այս թերթին սեփականատէրը չեմ, ո՛չ ալ անոր հիմնադիրին զաւակն եմ: Այս թերթին խմբագրատէսն եմ, ոչ ասե՛լի, ոչ պակաս, կը հասկնա՞ս. ամուսնոյդ, Յակոբին նման պաշտօնեայ մըն եմ պարզապէս: Այս թերթը, իր հիմնադիրին մահէն ետք շատ տէրեր փոխեց, եւ ներկայ տէրը Յակոբը չի ճանչնար. ո՛չ ալ ամբողջ խմբագրական կազմին մէջ Յակոբը ճանչցող մը կայ. . . հասկցա՞ր:

— Ձե՛ն ճանչնար զայն. Յակոբը չե՞ն ճանչնար: Ձե՛ն յիշէր այն յիսուն տարիները, որ անցուց այս թերթին ծառայութեանը մէջ, իր միտէն ու արիւնէն անուցանելով զայն: Ի՛րապէս փոխուած են ժամանակներն ու մարդերը:

Պառաւը, չին բայց մաքուր լաթի կտոր մը հանեց եւ սրբեց արցունքները: Խմբագրատէսին մինչ այդ խոժոռ գէժը պայծառացաւ, աչքերը փայլեցան եւ դէպի պառաւը հակելով լսաւ.

— Հիմա որ հասկցար թէ ես այս թերթին հիմնադիրին ժառանգորդը չեմ եւ միայն խմբագրատէսն եմ, ալ ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի եւ Յակոբին համար:

— Յոբելեանը տէր իմ, միայն յոբելեանը, ուրիշ ոչինչ:

— Այսինքն նիւթական օգնութիւն մը, որ կարենաք տօնել մեր յոբելեանը:

— Ո՛չ երբեք, փառք Աստուծոյ, նիւթական կարօտութիւն մը չունինք, բայց

պիտի չուզէի, որ Յակոբը բաժնուէր այս աշխարհէն եւ իր յիշատակը մոռցուէր իր մահուամբ: Շատ կը փոփաքիմ անոր նուիրել թիւ մը այն թերթին, որուն տուաւ իր կեանքին յիսուն դեղեցիկ ու առողջ տարիները: Թերթէն թիւ մը՝ որուն մէջ երեւէր իր լուսանկարը եւ դեղեցիկ խօսք մը՝ իր ազամանդեայ յորելեանին առթիւ: Իր աչքերը վրան փակելիք լաւագոյնը պիտի ըլլար ատիկա: Յակոբը արժանի է շմոռցուելու, արժանի է անմահանալու:

— Բայց մայրի՛կ, անմահութիւնը մեծ գործերով կ'ըլլայ, անմահանալու համար Յակոբը ի՞նչ ըրած է:

— Զի՛ բաւեր որ 105 տարիներ ապրած է. ասիկա շատ հազուադէպ երեւոյթ է մարդոց մէջ: Այս թերթին համար յիսուն տարիներ աշխատած է օրինակելի հաւատարմութեամբ եւ նուիրումով. ասիկա բան մը չէ՞: Երեք քառորդ դար՝ եղած է հաւատարիմ եւ բարի սովորներով. կարելի՞ է չզննահատել: Ոչ ոքի վրաս հասցուցած է եւ ոեւէ մէկուն չարիք չէ մաղթած. ճիշդ է, որ մենք զաւակ չունեցանք, բայց ոչ ոքի նախանձեցանք: Յակոբը հազուադէպներէն է մարդոց մէջ, այր, խմբագրապետ:

— Դուն ալ կ'իյնեմուն մէջ հազուադէպ ես, Հոբի մայրիկ:

— Մի՛ ծաղրեր զիս, որդեակ. 95 տարիները ծաղրել պատշաճ չէ բնաւ:

— Զեմ ծաղրեր քեզ, մայրիկ. Հիմա հասկցայ թէ ի՞նչ կ'ուզես:

— Իրա՛ւ. հասկցա՞ր խնդրանքս:

— Այո՛, այո՛, շատ լաւ հասկցայ:

— Ուրեմն ձեռնունայն եւ յուսախար պիտի չըրկես զիս:

— Վստահ եղի՛ր որ քեզի եւ Յակոբին համար ձեռքէս եկածը պիտի ընեմ:

— Աստուած օրհնէ՛՛ քեզ, որդեակ. ներողամիտ եղի՛ր ինծի. գիտեմ որ պառանքներուն շուրջ ծանր է, անոնց երե-

ւոյթը աչքերուն, եւ ձայնն ալ՝ ախանջներուն կրնան վնասել...

— Բացի այն պարագայէն երբ պառանքները Հոբիներ են:

— Շատ շնորհակալ եմ, մնաք բարով:

— Երթաք բարով, երթաք բարով:

✱

Միտանց ընտրութեանց մասին խօսք մը պարունակելու լոյս տեսաւ այդ օրունան թիւը: Խմբագրապետին գրիչէն յորդած յօդուած մը որդած էր առաջին երկու էջերը: Ան նկարագրած էր պառանքին հետ իր տեսակցութիւնը ամէն մանրամասնութիւններով: Փառաբանած էր լուռ աշխատանքը նուիրեալ գործաւորներուն, եւ վերլուծած էր մէկ դարը անցընող դեղեցիկ ու զարմանալի կեանքը Յակոբին, Յօդուածը այնքա՛ն դեղեցիկ ու յուսիչ էր, որ թերթը ձեռքէ ձեռք խլուեցաւ եւ մինչեւ վերջին օրինակը սպառեցաւ:

Յաջորդ օրունան թիւը զարդարուած էր բազմաթիւ նկարներով, որոնք ցոյց կու տային թէ ինչպէ՛ս «Լոյս» թերթի խմբագիրները եւ գործաւորները, փառաշուք կերպով տօնած էին Յակոբին եւ Հոբիին ամուսնութեան 75-ամեակը, անոնց խոնարհ հիւզակին մէջ:

Ուշոր կարկանդակ մը զարդարած էին 75 դեղեցիկ մոմերով. ծերունին իր ձեռքով վառած էր զանոնք, եւ ապա՝ մէկ առ մէկ մարած էր թուրբը:

Շատ յուզիչ էր նկարագրութեան վերջին նախադասութիւնը, որ հետեւեալն էր.

«...Եւ երբ Յակոբ փչեց 75րդ մոմին վրայ ու մարեց զայն, մարեցաւ նաեւ... անոր կեանքը»:

Մ. Ն.

Ի Մ Ժ Ե Տ Ո Ւ Մ Ն Ե Ր Ս

(Լ. ԲԱՇԱԼԵԱՆ)

ՆԵՐԱՆՈՎԱՆ

Այս հանդէսի սկիզբներուն մէջ արժանադրած էի կարգ մը խորհրդածուծիւններ, Ներուխանի գրականութեան մասին, օրագրական շրջափոխի մը սահմաններուն մէջ: Անոնք յառաջացուցին մէկ քանի հակազդեցութիւն, որոնց մեծագոյն մասը կապ չունէր մտածութի աշխարհին հետ: Նստել, մէկ երկու դէր, իրենց անխուսափելի նախատինքի բաժինովը, իբր թէ թշնամական արարք մը տեղի ունեցած ըլլար, Ներուխանի անձին նկատմամբ: Ինչպէս կ'երեւի, կապուած պիտի մնայ առ յաւիտ ընկերութեանց բարքերուն Սոկրատեսերու, Կալիկլեսերու հըրամցուած դաւանութիւնը, մեծ ու պրոֆտիկ, իր բիւր երանգներովը:

Մեր մէջ, գրականութեան մասին կարծիք մը յայտնելը կը չփոթուի քաղաքավարական սիրալիրութեան մը հետ: Եւ ասիկա, մեծաւ մասամբ, յայտնի հեղինակներու կողմէ: Ով որ ազատ համարձակ ժխտական տպաւորութիւն մը յանդիմանի արտայայտել, առնուազն անօրալիր, կոպիտ, անհարկի, անյարմար, անհպձախ, անիշխանական մարդու տեղ կ'անցնի: Անկեղծօրէն, ազատօրէն կարծիք յայտնել չկայ: Ձկայ կրակը ժուրնանդ կրթին որ բիւի միայն գործէն: Յանգձնութիւնը, տարբ թանկագին որ սակայն հարկ է չլիւթել ժպրհութեան հետ, բոլորովին չքացեր է քննադատական մտածութի կայունացն: Միջակը կը տիրէ միահեծան: Ստեղծուեր է փառնիրժեան ոչխարներու հօտ մը: Տիրող թէ՛ մտածելակերպ մը, թէ՛ զգացողութիւն մը կը ճնշեն, չբեւելու համար կը

բունդատեն նոյնքան քննադատող անհատը, ինչքան բուն ստեղծագործողը: Այս րոպէիս, ուղեմ չուզեմ, տեսապէս ինքզինքս կը զգամ այդ ճնշումին տակ, որմէ ձերբազատուելու համար, հինգ րոպէն անդամ մը, կը թափահարեմ մտքիս թիւերը:

Հայը որ միշտ ունեցած է մեծ հոտառութիւն մը եւ նոյնքան մեծ իւրացրելու կարողութիւն մը, ինչ կը վերաբերի վաւերական ճշրիմ, այժմ, տարածեր է յետամնաց իմացական ենթահող մը ուր նստեր է ճնշիչ օդը, բնունաւորուած նիխանքի հոտերով:

Սա ալ կայ որ կարգ մը իմաստակ նորամուտներ, զուրկ խորին համոզումներու ամէնէն թանկագին, վերանորոգչական կազմաւորումէն, խորշանքի հակազդեցութիւնը յառաջացուցին դէպի իսկական նորը: Տասնեակ տարիներ առաջ, երբ դեռ Ֆրանսիան ինքը եւ Արեւմուտքը չէին տիրացած Ռեյնանի հազիւ լոյս ընծայած պատմա-ուսումնասիրական մէկ դործին - Աւերաէս եւ Աւերսիովը - Հայերը արդէն թարգմանեք էին զայն եւ, տուն տեղ մուցած, խելայեղօրէն կը վիճարանէին անոր այս կամ այն վարկածին վրայ:

Հայուն միտումը նորին, նորը ըրր-լագայութեան մէջ առնող իր երանդը՝ նշան էր իր կենսայորդ խառնուածքին որուն առողջ շարժումը, այդ պատճառով ալ, կը հակադրուէր մակերեսային, մանարտիկ նարութիւններուն: Բուն գաւառական, գրականապէս այլամերձ դիմն էր ատիկա: Ատիկա՛ էր աղբիւրը իր ա-

զատութեանց, իր յանգչութեանց, վաւերացի՝ ներքին, վաւերացի՝ ցեղային, Հոն նոյնիսկ սպարաւոր կարելի սխալները արդիւնք էին անշահախնդրօրէն կատարուող վնասարեւելիքներ։ Այդ պայմաններուն մէջ թիւրքն ու սխալը բացասական հետեւանքներու տեղի չեն տար, ո՛չ ալ ամուլ են։ Անոնք, յաճախ, աւելի ամրապինդ քայլերով կ'առաջնորդեն դէպի ճշմարտի ուղիները։ Անդրադառնանք, դէթ մէկ օրինակով, օտար գրականութեան։ Պոտլէ'ն։ Տասնհակ տարիներով, տասնհակներով մեծահմուտ գրադատներ, զայն անհամար սուտմանախորութեանց առարկայ դարձուցին։ Շատ երկար շրջան մը հիմնովին ժխտուեցաւ պաշտօնական մտածողութենէն։ Հասարակութիւնը ինքն ալ բաժնուեցաւ աստուածացնող ու ժրխող զոյգ խումբերու։ Վերջինը, երկար ատեն, անհամեմատօրէն աւելի մեծ թիւ մը կը կազմէր, իր մէջ համբաւով փառացանք մը քերթողներու։ Առաջիններուն ետեւ կեցած էր Թ. Կոթիէ որ, առաջին օրէն, վերջնական մագիւտութեան տարազներով, դայն իր բարձրութեանը տարած էր արդէն։ Ազատօրէն, մոլեռանդօրէն, միայն զործէն ու սկզբունքներէ բխող, մեծաթաւալ կիրքերով կատարուած այդ աշխատանքն էր — վերջիններէն մին Ժ. Փ. Սարթրի Պոլսի՛ւնը, բընազանցական տարածքով — որ, զրեթէ զար մը վերջ, այնքան որ մեծ էր անոր խտացուցած դարաշրջիկ նորութիւնը, այդ աշխատանքն էր որ թոյլ տուաւ հաստատել, այս անգամ անտարկելի, վերջնական հաստատումով, ամբողջ Ֆրանսան եւ Եւրոպան ընդունելով զայն իբր նոր քերթողութեան ռահիթայ, անոր մեծութեանց չափը։

❦

Անշուշտ, դժուար չէ բացատրել ինչո՞ւն այդ շրջափոխուած երեւոյթներուն։ Հայը եղաւ այն ժողովուրդը որ ամէնէն մեծ քանակութեամբ, բարդ ու բազմապիսի աւանդութեանց հսկայական

կշիռով մը քայնց պատմութեան ճանապարհներէն եւ փարեցաւ անոնց աննորոգ մոլեղնութեամբ։ Ինքնուպահպանութիւնը էր որ կը զործէր։ Մշակոյթն ալ այդ աւանդութեանց մաս կազմեց։ Փըրկութեան լատի մըն էր կառնած, որմէ կախուած էր իր յաւերժութեան ապահովումը։

Մինչդեռ, ի՞նչ պատահեցաւ մօտիկ անցեալին մէջ։ Հայ ժողովուրդը, արմատախիւ, զարձաւ աշխարհացրիւ։ Փորձած էք երբեք արմատախիւ տունկ մը հիմնովին օտար հողի մը մէջ միջնել։ Դիտած էք երբեք այն երկար, անվերջ շրջանը ուր, հսկառակ տրուած բոլոր խնամքներուն, մշտապէս թառամելու ի տենչ, կիսակենդան, տունկը կը տարուաբերի մատ մը դէպի կեանք, մատ մը դէպի մահ։ Մինչեւ որ...

Հայ ժողովուրդը կորսնցուց հիմնական, նպաստաւոր պայմանները, աւանդութեանց պահպանութիւնը որ ուղորդումներուն մէջ։ Այդ քրաւիտիւնները ապակաւ կասեցան հոնուդ առնելէ, դարձեցան նորոգութիւն, կորսնցուցին իրենց կենսարանական դործառնութիւնը։ Եւ հսկայական մարմինը աւանդութեանց որ կը սնանէր իր ծննդական փարթամ հողին բազմադարեան շնչառութեամբը, որ կ'ապահովէր ժողովուրդին գին չունեցող առողջութիւն մը, մշտաթարմ երթ մը, սկսաւ Լոնդոնիւն, աքլոփիլ բլաւ։ Ու այն բոլորը որ բարոյական, դրական, գեղարուեստական կալուածներուն մէջ վերանորոգող մշտական ողի էր, դասափոխուեցաւ կաշկանդումի, կայունութեան, բռնադատութեան, կուրծքեան, չիլ մոլեռանդութեան, բիւզանդաբանութեան։ Եթէ մէկդի դնենք Օշականը — թէպէտ շատ բան կայ ըսելիք այդ առթիւ — եւ մէկ քանի փորձեր այլ հեղինակներէ, մնացեալ քննադատական կողմուած գրականութիւնը անսահման շաղկապահանք մըն է ու գրաբանութիւն, կոշուած՝ խափանելու իսկական Յոբիմ մուտքը, իսկական վերադաշնատումի ճիւղը, հայ ըմբռնողութեան ջրադաշններու կոշուած՝ մղելու, յետամուղ

ցատքերով, դէպի հինին ներսած մտաւ, կամ՝ «զերնորը», որոնք, մին թէ միւր, նոյնքան խորթ են հայկական ոգիի ուռնացման եւ կը կազմեն ախտանիշը՝ իր բարոյական մէքապոլիզմի քայքայման:

Այնպէս որ, հայ գրականութիւնը այսօր ալ կ'ապրի ընդունուած կարծիքներու, քարացած հուշակներու, օպերաներու, քարացած հուշակներու վրայ, կազմուած ու մնացած մօտաւորապէս ասկէ երեք քառորդ զար ատալ: Ո՛չ ոք կ'երթայ տեղւոյն վրայ տեսնել թէ՛ մ'ըր իսկապէս ի՛նչ կը կռուէ, թէ՛ բանը ինչու՞մէն է: Մեր գլխուն վրայ ֆիւզիները կը խօլարուեն, մենք քրանախայտ, գոմշու սայլերէն չենք ուզեր վար իջնել:

Իսկ կլիտներուն նոր թիւերը որ մէկ երկու հոգի նկրտեցան երթալ բերելու, շատ հեռու են սեփականութիւնը դարձած ըլլալէ թէ՛ հասարակութեան, թէ՛ մտքի աշխարհի մարդոց: Ո՛չ ալ մուտք դրան պաշտօնական մարմիններու շրջանէն ներս, գործերու վերահստարակման թէ՛ դնահատման ձեռնարկներուն մէջ:

Հայ գրական մտածողութիւնը կը շարունակէ ապրիլ նշումներով կանգունի մը որ շատոնց ցեցերը կրեք են:

Անհրաժեշտ է նախ փրիզ տը քննարկման էական ճիշդ մը, որպէսզի գրական յուր մտահոգութեանց նուիրուած հանդէսները ճամբայ բանան, դիւրացնեն ընդհանուր վերադնահատման աշխատանքը, որ շատ մեծ է եւ որուն իրադրոժումը կը կարօտի բարդ ու բազմապիսի պայմաններու ալ լրումին:

Այսօր մենք այնպէս կը մտածենք ու կը զրտենք, թերեւս բանով մըն ալ պտակաս, ինչպէս Արեւիկներու, Մասիսներու, Մալիկներու ժամանակաշրջանի զբաղէտն ու գրասէրը: Կը պահենք շափ տուող նոյն թուանշանները: Այսօր, սակայն, կը բաւէ մերձեցալ հոն ցցուած երեւոյթներուն, դատումներուն, դէմքերուն, մարմարակիրտ արձաններուն՝ տեսնելու համար որ մեծաւ մասամբ դամբանական, բորբոսնած յուշարձաններ են

պարզապէս: Կը բաւէ զպլիլ անոնց, որպէսզի իրենց մարմարը նոյնհետայն փոխարկուի փոշիի:

Այս մէկ քանի վարկպարազի, թըռուցիկ, անյօդ խորհրդածութիւնը՝ պարզապէս, ո՛չ միայն հասկնալի զարմեցու համար իմ գրական զգոհութիւններու, ժխտումներու ոգին, այլեւ հրախրելու ընթերցողը որոշ ներդրամութեան մըն ալ, արտայայտական կարելի չափազանցութեան մը հանդէպ՝ անբաժան խորին հակազդեցութեանց պոսթիւմէն՝ հետագայ խորհրդածութեանց ու դատումներու ընթացքին, ինչքան ալ, տեսականապէս, մէն մի տողի վրայ մասպահած ըլլած մտահոգութիւնը՝ ինչքան առարկայական, արդարադատ, չըջահայեց մտածելակերպին, նոյնքան ամբողջականօրէն անեղծ ըլլալու մղումին:

Ծղմարտութեան կրայոյդ փնտռումը՝ թո՛վը կարելի է ծառայել համայն գրականութեան, ինչպէս եւ անոր քննադատական ճիւղին, լեզուի, այլ ախտերու հետ, այլապէս սխալութիւններ կիրարկելու ախտը, իբր առիճանաչակի գեղարդիտութեան: Կենցաղափարական փայփայանքներով գրականութիւն չըլլար, ո՛չ ալ գեղարդիտութեան խորթ որեւէ չափանիւշով:

Նուազեցնել, նուազեցնել, անխորհարէն ջնջել, հրապարակագրական թէ գեղարուեստական դատումի գրականութեան մէջ, հաճոյամտութեան խաւած կողմնակալ բաժինները եւ գետեղել դառնոնք խորհրդածութեամբ մը՝ արդիւնք մտքի մանր ճիւղի մը: Ողմատալի մտքի աշխատանքն է, որ կը վերանորոգէ: Լուրջ, անսահման աշխատանք մը կայ կատարելիք հայ դպրութեան անցեալ, ժամանակակից ու ներկայ անդամատանէն ներս:

✽

Երուխանէն յետոյ, որուն մասին կարծիք չեմ փոխած, այլ, ընդհակառակը, նոր անդրադարձումներու ալ լոյս

սին տակ, աւելի՛ ամբապնդուած, փաստարկուած կը պահեմ զայն, այս անգամ, իմ դժգոհութիւններուս վերլուծումը կը վերաբերի Լ. Բաշալեանին:

Եւ, անմիջապէս, դիմադրաւենք իր այն արտադրութիւններն իսկ որ, միա՝ համարօրէն, մեծ հեղինակութիւն վայելող եւ մէր ալ յարգանքին տիրացած մտածողներ — Արփիարեան, Կամսարապեան, Զօհրապ, Զօպանեան, Զարգարեան, Սլակաւն — յայտարարած են ո՛չ միայն իրի հեղինակին դուրս գործոցը, այլեւ մէկ դուրս գործոցը հայ գրականութեան, — Յեղիմ Զայնը: Արժանի մեր յարգանքին, կրօնք, վստայի անոնցմէ մէկ քանին խորապէս ատակ էին կատարելու, ձեռնհասօրէն, իսկական արժէքաւորումի աշխատանքը: Միայն թէ՛ հաստատուէր, ամբապնդուէր էր հին դրամադուրիս վրայ ապրելու հելուա՝ էտ սովորութիւնը: Բայց մանաւանդ անոր համար որ բա՛րդ, մեծապէս բա՛րդ եզու հայկական կեանքը, տեւապէս ցընցըած անդնդապար վերիվարումներով, եւ ան՝ չափէ՛ն աւելի, անոնց ուժերէն վե՛ր ճիգ պահանջեց իր լաւագոյն գաւազներէն:

Յեղիմ Զայնը խեղճ բան մըն է: Անհաւատալի չափով՝ խեղճ: Բարեբախտաբար Հայ ժողովուրդին համար որ իր զրականութիւնը ունի ա՛յլ գլուխ գործոցներ: Ի՞նչ է իր նիւթը: ԳՅ-ի ջարդերուն, ծնողքը կորսնցուցած ութնամեայ մանուկ մը կը բերեն սրբանոց մը, զոր անդլիացի բժիշկ մը եկեր բացեր է Մալաթիոյ մէջ: Կրօնադիտութեան դասի մը ընթացքին, կը ստիպին խեղճ մանուկին որ ըսէ թէ՛ ի՛նքը ինչ պիտի խնդրէր Աստուծմէ: Մանուկին այլապէս գայտարումներ ընել տալէ ետք, սա պատասխանը բերնէն կը քաշեն. — Կ'ուզեմ որ խելք տայ ինծի:

Վա՛յ, ա՛յդ է որ կայ, դէպք մեծի՛ն, պատասխան հանճարեղ: Ու բը՝ միւլը՝ Տօբթ. Ճէյմս Գլարքը — ո՛չ իսկ Հայ մը — յուզումի փոթորիկներու մէջ կ'ընկղմի: Յեղին ձա՛յնն է, ցեղին ձա՛յնը որ Տերսիմի լեռներէն իջած՝ լսելի

կ'ըլլայ, որ այս մարգարէ մանուկին բերնէն կը ժայթքէ: Տեղիեան հարցուկն է որ կը բարբառի: Կը մնայ հպատակել անոր պատգամին եւ ըստ այնմ պէտք եղածը ընել: Սէ՛ կրօթիս: Աշխատինք քիչ մը վերլուծել: Զգենք քամէ՝ ռային լոյսը անոր վրայ, մէկ երկու ալ լազան անկիւններէ, բացատրելու, փաստարկելու համար մեր համոզումը, այս սինքն այդ գլուխ գործոցին՝ սո՛ւտ դրականութեան գլուխ գործոց մը ըլլալը:

Անձերը պատմուածքին բազմաթիւ չեն: Կայ պատմութիւնը պատմողը (հեղինակը), Տօբթ. Ճէյմս Գլարքը եւ մանուկը՝ Սազօն: Իրականին մէջ ո՛չ մէկ անձ գոյութիւն ունի: Կայ միայն պատմողը: Ճէյմս Գլարքն ալ հեղինակն է, Սազօն ալ հեղինակն է, հեղինակն ալ հեղինակն է... Պատմողը՝ հեղինակը, ըլլալով հանդերձ գերազոյն ներկան որեւէ ստեղծագործական երկի մէջ, հարկ է որ մնայ ամբողջապէս զբաղուած, աննշմարելի, — գիտելիք տարրական գեղագիտութեան: Անգամ մըն ալ կրկնենք արդէն տրուած օրինակ մը, — հեղինակը այն է իր գործին նկատմամբ, ինչ որ է Աստուած բնութեան հաստատմի մը նկատմամբ: Աստուած բացարձակապէս անտեսանելի, անուշեղի է հոն, բայց եւ գերազոյն ներկան է, անոր միւշտէն յետին հիւլէի կեանքին, օրէնքներուն մէջ: Վերին աստիճանի դժնդակ տպաւորութիւն մը կը յառաջացնէ հեղինակին այս նիւթեղէն ներկայութիւնը մէն մի անձի մէջ, մէն մի ըստէ: Կը դադրի գործի մը գեղարուեստականը, կը փճանայ, երբ տեղի չ'օւնենար հեղինակի մը այս փոթորկերպումը, արուեստը պայմանաւորող այդ կախարդանքը, ինքն իր ամբողջութենէն ժայթքումը, ինչպէս մուրակները, որ ժայթքած կեդրոնական արեւէն, ըլլալով անոր միտն ու արիւնը, եւ սակայն, միեւնոյն ատեն հիմնովին տարբեր կեանքէ՝ անկախ, ինքնուրաք միաւորութիւններ են: Այս օրէնքը, իբր պայման արուեստի իրականացման, կու պայ իսկապէս առաջին մակարդակի վերայ, իբ կտուէն կը քաշէ բազմաթիւ ուտ

րիչները: Ծաղիկ մը, քարի կտոր մը ուրիշ բան չեն, եթէ ոչ ծաղիկ մը, քարի կտոր մը: Թող քարի կտորը, ձեռքի մը հոսանքուններէն անցնի, վերայալուսնի քառի, պոյնի, թէ նոթայի մը մէջէն, եւ արուեստի հրաշքը տեղի կ'ունենայ: Հեղինակի մը վերակրկնումները, ինքն իրմէն դուրս, ինքն իր մէջէն, ամբողջ արուեստն է: Այս աղքատիկ պատմութեան մէջ, չորս հինգ էջ, — Բաշալեան տակ լէ՛ն եղած — այդ օրէնքին հերքումն է, որ լայնքով երկայնքով, առաջին տառն մինչեւ վերջինը, կը ցցուի հոն: Ինքն է, միայն եւ միայն ինքը՝ հեղինակը, ղեկն է որ կը տնայնէ: Ուրիշ անձ գոյութիւն չունի, բացի մէկ երկու սոսկական անուններէ: Իր բարբառն է, իր բոլոր լեզուական յատկանիշները, իր մտայնութիւնը, իր հոգեւորականութիւնը, այդ ժամանակաշրջանի յատուկ բընորոշումով, արամադրութեանց (չեմ բո՛ւր հոգեբանութեան որուն հետքը չըկայ) այլադրութեամբ, օրուն հրապարակութեան քննով:

Տօքթ. Ժէյմս Գլաֆօլը, — բան մը չենք գիտեր իր մասին: Հա՛, 35-ի մօտ Բէկրօֆթի մը, որ երկար ու պիտի սրունքներ ունի, «թրթուռն շրթունք», «խաժ, բարի աչքեր», «գոթեթարդ ճակատ մը», որոնց բարոյական արտայայտութիւնը խառնուրդ մը կը կազմէ Սկոթլանդի գործի մարդուն եւ մտաւորականի՞ն... Եւ սակայն, պատմութեան ամբողջ ընթացքին այս պիտի սրունքները փոխանական պաշտօն մը պիտի չկատարեն, շրթները պիտի չթրթուան, ո՛չ ալ «գոթեթարդ» պիտի ճառագայթէ: Յայտնապէս անոնք գոյութեան են եկած իրր հետեւանք վերադրի մը, պատկերի մը ձրի գրաւչութենէն բունեամ:

Սազօն ութը տարեկան մանուկ մըն է որ պոռաք մազեր ունի, «վայրի կատուի անհասարակ ուժ մը», «տնայնութիւն», «խեղ», բուսական անգիտութեան մը մէջ, հազիւ կը յիշէ որ եկած է հօտաղ: Կայ նաեւ յիշատակումը ինչ որ հայ կընտը, Փոքր Ասիոյ ինչ որ մէկ ամբարիկ-

եան քոյճին մէջ կրթուած, որ կը դառնայ Տօքթօրին ինչ որ օգնականը, եւ՝ այդքո՛ն: Այնպէս մըն ալ անոր երեւոր չենք տեսներ:

Ասիկա՛ է միտն ու մարմինը, ոսկորն ու ողնայարը անձերուն:

Պատմութեան հակիրճ հանգամանքը առաջինութիւն մը չի կազմեր հոս, վասնզի խտացումի մը յատկանիշը չէ ան, ալ լա Ձօհրապ, Ձէխով, Մերիմէ, Մոփտսան, այլ, պարզապէս աղքատութեան մը փառսը: Պարզապէ՛ս շնաւ խառնուածքով, երեւակայութենէ, ստեղծագործական աւելի գուրկ հեղինակը: Հակառակ իր կարճութեան, մտածման մեծ անխնայութիւն մը, յօդախախտումի բազմաթիւ եզրեր եւ բազում չեղարանութիւններ: Իր կարճութիւնը չէ՛ վանած անվերջ աւելորդաբանութիւններ, ձրի նըկարագրութիւններ, մէկ վերադրի մը յառաջացուցած շլացումը դառնալով հիմք ամբողջին, արդէն իբր օկիպը համաճարակի մը որ մինչեւ 90-ական թուականները եւ Սահմանադրութեան շրջանին պիտի դառնայ մեծ չարիք մը հայ դպրութեան մէջ, հաստատելով ծանօթ «ժանեակի», «աւրինայի», լուսին հեա ժամադրութիւններու քրուլտուրը, մորթութիւնը: Իսկ էական կէտերուն մէջ, ուր քանի մը բառ անխառնափոխ պիտի ըլլար, տեղի՛ն, ճիշդ տեղի՛ն, բաւ առթիւն, գիպուկ... մեր մարդը հոն չէ: Իրականին մէջ՝ գործ անխնամ, ուր քննադատական ոգին բոսկէ մը չէ բանած զէթ արտաքին մը վրկելու համար, զէթ խաբկանքը տալու համար ինչ որ անխնայ գործի, բայց՝ գործի մը զէթ: Իսկ եթէ իրա՛ւ այս պատմութեան արդիւնքն է մեծ աշխատանքի մը, երկու երեք վերաձուլումի, ստոյնալու համար իբր թէ իրապաշտական ցամաքութիւն մը, կոշտ նըկարագիր մը, այն ժամանակ, այն ժամանակ... կը նախընտրեմ շլատկանշիչ, չորակել:

Ըսէ՛ք խնդրեմ, ի՞նչ բանի կը ծառայեն Միսիոնիստ ընդարձակ սրահին նկարագրութիւնը ուր «կանացի գուարթ ոգեւորութիւնը կը խնդար», ուր «Անգ-

լուսններու... Երեւոյն բոժոժումները կ'երկարաձգուէին»։ Ի՞նչ դեր ունի կատարելիք դուրսի օդին նկարագրութիւնը, ուր զարեւը կը լուսնրփնէ, պարտէզին ճանգլիական բարեմեւութիւնը, ու վարդասպտակ ճերմակ ժէրանիմներու փառ փառ... դոյներուն պոռթկումը։ Ի՞նչ բանի վիճակուած են ծառայելու թուումը ճատղալ արմաւենիներու, պըտտերներու ու ասրիտիթրաններու, այսօր քան կարճ պատմութեան մը մէջ երբ հեղինակը ճամբայ ելած է յաւակութեամբ բնակարան, հիմնական, հայ ցեղը յատկանշող բարոյական հանգոյց մը լուծելու եւ ուր բոլոր այս ասրիտիթրանները ոչ մէկ կերպով, ո՛չ հեռաւոր, ո՛չ մօտաւոր, որեւէ գեր պիտի չկատարեն։ Երբէ՞ն ի վեր արուեստի դործը պոռթանք թօնի խանութի մը մէջ բաժնեակն է։ Անհրաժեշտ չէր գիտնալ, իր հասու տարագրին մէջ, պատմութեան ուսու վարպետին պատուէրը, որուն համեմատ պէտք է յիշատակել, սենեակի մը նկարագրութեան մէջ, պատկեր կախուած նոյնիսկ զինքն իսկ եթէ ան յետոյ, պատմութեան ընթացքին պիտի չպայթի։ Անհրաժեշտ չէր քանի որ Զօհրապ դիտցաւ ատիկա եւ կիրարկեց զայն անթերի կերպով, ինչպէս եւ Արփիարեան, նոյնիսկ մերթ Կամոսարական, նուազ անթերի։ Այդ շրջանի շահակրատանքը — ի՞նչ աւերիչ ունակութիւն — որ Ա. Անտոնեան Եւրոպա բերաւ, կարգ մը ուրիշներու հետ, եւ շարունակեց զայն կիրարկել մինչեւ իր վերջին շունչը, որ կը վերաւորէ ներքին ունեւորութեան զգացումը դէպի արուեստը։ Ատիկա, նոյն արտաքինական ճարտարութիւն, ամբողջապէս վարակած էր ուրեմն մեր «վարպետը», մեր «կոտը»։ Հակառակ «հայ նոր գրականութեան» ամենէն նուրբ վարպետներէն մինը ըլլալուն, հակառակ «արեւմտահայ աշխարհագրաբար ամենէն վարպետ արուեստագէտը, այդ շրջանի ամենէն խնամատու ու վայելուչ արձակագիրը» ըլլալուն (Զօպանեան)։ Ո՛չ ոք կրնայ երեւակայել մեծութիւնը շարքին այս կարգի հաւաստումի մը որ, մեծ, թեթեւ

անմտութեամբ ըստած, պիտի պարտադրէ յետոյ քառապատիկ մեծ աշխատանք մը՝ վերաճողութեամբ։

Հակիրճը, սեղմը՝ երկու տեսակ կ'ըլլայ։ Մին՝ արուեստի կատարելութեան յատկանիւն է — Զօհրապ, Հրանդ, Թլկատիցի, Մոփաստն, Մերիմէ, Տանուցի, Թուրկէնիզի, Քաթէրին Մէնֆիլտ, Ջէյմս — որ շատ մեծ դժուարութեամբ ձեռք կը ձգուի, նոյնիսկ վաւերական տաղանդներու կողմէ։ Այս հեղահամարը, ուշիմ մարդը որ, երիտասարդ Արմենիէի դուռը ձեռք առաւ զործ մը փնտրելու համար, եւ որուն քայլերը կրնային անխորաքար ուղղուիլ, նոյն նպատակով, արեւմտեաց, հիւսիս թէ հարաւ, որեւէ մէկ կողմի քայլերուն, կը թուի ըլլալ պատահար որ պայմանաւորեց իր միակ աղբիւրը հայ գրականութեան հետ։ (Այս հաստատումը՝ ոչ ամբողջական, պիտի լրացուի հետագային)։ Առանց զի վերադառնալ, շատ շատ, կարելի է ստանալ, կապելով, անուրժեղի աղբաւորութեամբ, պարզին շինծու տեսակը, Բախլիթը։ Կարելի է ստանալ Յեղիմ Յայնը, Նոր Զգեստը, Եւայլին։ Իրականին մէջ, ինչպէս որեւէ կատարելութիւն, պարզին ալ անընդօրինակելի է, վասնզի, ինչպէս լեռնային հանքային ջուրը, շատ հեռուներէն կու գայ եւ արդիւնք է բարդ ու նաեւ խորհրդաւոր ալքիմիայի մըն ալ ներգործութեանը։

Այժմ, հայկական գրական ըմբռնումի թէ ճաշակի կալուածէն ներս կատարուած յաղթահարումները թոյլ կու տան յստակօրէն տեսնել խեղճութեան մեծութիւնը, որ կը կայանայ արտաքին հանդերձանքով, հանդերձանքի մէկ երկու շնչին մանրամասնութիւններով, այլուզան ասրիտիթրաններով Էֆէրնիւն անուան ասրիտիթրաններով Էֆէրնիւն անուան ասրիտիթրաններով։ Այս միակ, տիրապետող բացասական հակումը ինքնին բաւական է կազմելու հաւաստիքը՝ ստեղծագործական որեւէ կարգի գործունեութեան բացակայութիւնը եւ, քչիկ մըն ալ, անհեթեթութիւնը հարկադրանքին՝ դժ-

ծածելու «ստեղծագործութիւն», «յը-
ղացք», «վարպետ», «գլուխ գործոց»
նման բացատրութիւններ:

✱

Բայց քննենք զայն մանաւանդ հոգե-
բանական... Դարձեալ շատ մեծ բառ
մը որ գործ չունի հոս: Արձանագրենք
պարզապէս մեր հակազդեցութիւնները՝
ընթերցումէն: 1)

Տօքթ. Ճէյմս Գլաբլը, ուրեմն, հա-
զիւ բարեւ Վեստու բարինքը գուրս տը-
ւած, լոնտոն, Անգլուհի մը Հիւրասը-
րահին մէջ, կը քաշէ անկիւն մը մեր հե-
ղինակը (պատմողը), որուն կը ծանո-
թացուի այդ իսկ բազմին, կը քաշէ զայն
անկիւն մը ուր պանքներ եւ արտիստ-
թրաներ կը ծաղկին եւ ընդհուպ կը սկսի
դարձնել ճախարակը այս պատմութեան:

Ինչո՞ւ է գոցեր այս ճէյմսը հայ-
կական նահանգները, արիւնհանգութեանց
այդ օրերուն: Անկարելի է գուշակել:
Լաւ է որ անմիջապէս ե'ս յայտնեմ: Ձար-
դերու պատմութիւնները, երկար առեւն,
կա'մ չափազանցուած նկատած է, կա'մ
բոլորովին յերկրածոյ: Օր մըն ալ, մեր
մարդը, բանը գործը ձգած, կը մեկնի
Անատոլի, պա'րզապէս բաւարարելու
համար իր հասկնայու հետաքրքրութիւ-
նը: Գիտնականի հետազոտութիւն: Տես-
նելու համար թէ ինչպէ'ս տեղի կրնայ
ունենալ այդ կարգի կրանտիզ տեսա-
րան մը: Զա'րդ: Բանը գործը ձգած...
Այս է ամբողջ պատճառարանութիւնը:
Անայի'ւ... Մեր Անգլիացին կ'երթայ եւ
կը հաստատէ, որ իսկապէս Հայն է ջար-

դըողը եւ ո'չ թէ Թուրքը: Եւ դեռ ա-
ւելի ապահով ըլլալու համար, կը չա-
փէ ամբողջ Անատոլին, լայնքով երկայն-
քով ու Ալպիոնի այս մեծահոգի ճեղքը կը
բռնուի խորին տիրապետութիւն մը, ի տես
համայնապարտ արեան ճապարկեմե-
րուն: Ու ան կը համոզուի որ ա'լ այդ
երկրին ուրիշ բան չէր մնար ընելիք, ե-
թէ ոչ զձգել անօրինակ մեռելատանի
մը յիշատակը ընդհանուր մարդկութեան
խղճին վրայ:

Մինչ այս մինչ այն, գարունը կու
զայ եւ իր հետ կը բերէ ծաղկումը հո-
ղին: Երջանայեաց Ճէյմս Գլաբլը կը նը-
կատէ որ ջարդուած ժողովուրդին բն-
կորները իրենք ալ կը նուիրուին կեան-
քի վերանորոգումին, ձեռնարկելով այ-
լազան մանր արհեստներու եւ գործե-
րու: Գարնան յառաջացուցած այս հը-
րաշն է, որմէ կը ցնցուի Տօքթորը եւ
նոյնհետեան կ'որոշէ մնալ հոն: Անա-
յի'ւ... Մնալ հոն, փոխանակ վերադառ-
նալու իր երկիրը եւ ցոյց տալու իր հայ-
րենակիցներուն թէ ի'նչ աստիճանի առ-
դուք, անմարդկային, նիւթապաշտ,
նե'նդ, խարդախ, խոտմահողութ, պա-
զանային եղած է ընթացքը լէյտներու
եւ ճէյմսը ինքներու պաշտօնական ներկա-
յացուցիչներուն, ամէնքն ալ լորտ ու
սքուէր: Մինչ գիտենք որ նման պարա-
զաներու մէջ բազմաթիւ եղած են այն
օտարականները, այս անգամ հոգիի իս-
կական ճէյմսը ինքներ, որ վերադարձած
են իրենց երկիրը եւ չեն վարանած, ի-
րենց դէրժը, կեանքը վտանգելու դիմով,
բարձրացնելու ամբաստանութեան ծախ-
նը իրենց իսկ պետութեան դէմ, համայն
պատասխանատու եւրոպայի դէմ: Պէտք
կա'յ յիշատակել, օրինակ, պաշտելի
Նանտընը, համամարդկային չափանիւշով
մեծութիւն մը, Լէփսիուսը եւ ուրիշներ
2):

1) Տեսնելու համար քէ գէթ տարակամ աղ-
բայեանութիւն մը, տրամաբանական չնչին քի-
տաւորութիւն մը միջամտած է ամօր շարքաբու-
քեան, տնայնա պատանաբանութւն շարքաբուքեան
մէջ, քէ արտիստթրայական զվարդեանութիւննե-
րէջ դուրս, ան կը կազմէ ակնբախ հակառու-
քեանց, անարամարանկանի, արուեստականի,
սուտի անհաւատալի խառնակոյտ մը:

2) Ըսե'լ է որ Տօքթորը չէր կոմար մնալ հոն
եւ ճախարհի մարդասիրական գործունէութեան
մը: Ո'չ երբեք, կըմա'ր մնալ: Կրնար ամէ'ն ինչ
ըմել: Երանասի մէջ կարելի է ամէ'ն ինչ ըմել,

Ձէ', մեր Տօքթօրը կը մնայ տեղւոյն վրայ: Ի՞նչ ընելու համար: Կրօնափոխութեան ծանօթ գործունէութիւնը: Ձէ', տ'յդ ալ չէ, գէթ բացայայտօրէն տյդ չէ, այլ՝ ցոյց տալու համար այդ իւրեաներուն թէ իրենք ի՞նչ մեծ ժողովուրդի մը զաւակներն են: Անայի՛ւ... Այս պարագաներուն մէջ է որ Գլարք-Բաշլեան անձերուն խառնուրդը, ան-լուծելի մին միւսին մէջ, զոյգ հիմնովին հակոտնեայ տուեալներու զուգորդումը տեսապէս իր ետեւէն կը քաշէ սուտերու շարան մը, որուն անդրադարձած չըլլալը աւելորդ անգամ մըն ալ կու գայ փաստել որ «վարպետ», «արթիսթ» եւ Բաշլեան տարբեր բաներ են:

Մեր Գլարքը կը տեսնէ ուրիշն որ «այդ մարդիկը ապրիլ կ'ուզեն կոր»: Ու մեր յուսարեկ գիտնականը ինքն ալ կը վարակուի ապրիլու ստանձարձակ կիրքէ մը: Եւ, ապա ուրիշն, ի՞նքն է որ կը ստանձնէ խօսիլ որբերուն գիրհնց հայր-բնիքին վրայ, իրենց կոչումին վրայ, իրենց դերին վրայ: Անայի՛ւ... Եւ դարձեալ ինքն է որ «կը կարդացնէ մանուկները»: Ի՞նչ լեզուով: Ե՞րբ սորվեցաւ հայերէնը այս մարդը, որ դեռ քանի մը չարաթ առաջ ջարդուողն ու ջարդաւարը իրարմէ չէր զանազաներ: Ե՞րբ, ինչպէ՞ս ուսումնասիրեց հայկականքը: Անայի՛ւ... Գէթ օգտուէր, — տե՛ղն էր — Փոքր Ասիոյ մէկ վարժուհիի յիշատակ-

ուած ներկայութենէն: Ձէ', մարդը բարակը չի նայիր: Ո՛չ ալ գործը ընդունող այդ ժամանակաշրջանի հասարակութիւնը: Կը յուզուին, իրար կ'անցնին, — երանելի՛ ժամանակներ — տիտղոսներ կը փակցնեն եւ... առ ու գնա՛:

Այս կերպով պատրաստուած ճախ-նային հողին վրայ է որ Սազօն իր մուտքը կը գործէ: Նոյնհետեայն ինքնանուէր Բրիտանացին կը բորբոքի եւ, մէկ ըստ-պէ՛ն միւսը «ալ ամբողջ հոգածութիւնը կը նուիրէ» Սազօնին: Պաղարիւն անտարբերութեամբ մը մեր հեղինակը անգամ մը եւս կը կոխկոտէ ճշմարտանմանութեան մտահոգութիւնը եւ իր ամէնէն կարեւոր տրամադրութեանց, հոգովե-ճակներուն (չեմ ըսեք հոգեբանական) անկիւնադարձերը տեղի կ'ունենան, այս-պէ՛ս, մէկ բուպէ՛ն միւսը: Ո՛ւր է որ հեքիաթի մը կախարդական աշխարհին մէջ ըլլայինք եւ ո՛չ թէ էջերուն՝ «հայ իրապաշտ շարժումի մէկ ռազմիրային»:

Մեր Սազօն ցնցող բաներ ընելով՝ նախ ինքզինքը կը զգացնէ, երեք անգամ — ո՛չ մէկ, ո՛չ երկու, — այլ՝ երեք անգամ — կը փախչի որբանոցէն, «վարժուհիին երեսը ճանկուտէ եւ զգեստը բզկտելէ» ետք: Ինչո՞ւ: Ի՞նչ անհրաժեշտութեան թելտութիւն, երբ մանաւանդ, Ճէյմս Գլարք եւ ըսլոր ծառայողները չեն գիտեր ինչ անուշութիւններով ողորդէ «վարի կատուն»: Փախչիլը գեռ պիտի հասկնայի, բայց ինչո՞ւ Փոքր Ասիոյ վարժուհիին պատառ պատառ ընէր: Անայի՛ւ շէշք-ան... Ի՞նչ սարսափելիօրէն պատմախալի կնիքը կը կրեն այս բու-լոր դիմաւորչութիւնները եւ կը մասնեն այն օրերուն հռչակաւոր այս կամ այն հեղինակին, այս կամ այն պատմուածքին մէկ դրուագին կապկումը, (Ժիտ, Մոփա-սան, Մէրէտիք, Ջօլա, Եւայն): Այդ կարգի «հերոս» մը՝ Սազօն, անխուսա-փելիօրէն, չէր կրնար վայրագ բարբոր չցուցադրել... Քիչ քիչ սակայն Սազօն կը կակուղնայ եւ կը կերպարանափոխուի: Ի՞նչ բանի հետեւանքով: Վերբ իրեն սկսանք կարդալ սորվեցնել: Անայի՛ւ... Այստեղ կը սկսի ճաթելք մի-

պայմանով որ մեր սքանաւորեալ Գլարքը աղբիւրէն չբախտաբախտ քաշ գլուխ, պայմանով որ այն ալ կը կապուի մեծ առաքինութիւն մը եւ կը կոչուի ճշմարտանմանութեան օրէնքը՝ յարգուի: Կարելի է եւ աւելորդաբարտեմալ առնել իրր Գլարք, պայմանով որ հեղինակը հետեւեալականօրէն զարգացնէ՝ այդ առաքատաւութիւնը: Բայց, պատճառով մը մէջ քրդեցրել իրապաշտ սննդ եւ չայլ գլուխ մեղանելի տարրական սը-րաւարտութեան զեմ, ոչեղիքսի յստուկ հա-կատութիւններով, ասիկա՛ է որ, ակնթախօրէն, ասանց կարեւոր տեսարանական հիմքի մը, կարելի չէ:

ըստ էության մը նկարագրութիւնը, կատար-
ուած արարողական լընութեամբ: Թը-
նէ վու պիւն: Հարաւային Ամերիկայի
բարձրաներուն մէջ, (յետո՛ւ...), ինչ
որ որոտող «լազո» կը նետէ, (յե-
տո՛ւ...), ինչ որ վայրի ձիւ վզին, որ
կը վընջէ, կ'աքացնէ, կը ծառանայ,
կ'ախշելու, կը թալու կատարութեամբ
մը: Հէ՛, սպասեցէ՛ք: Որոտողը չէ՛
պարտուած: Գիտէ՞ք ինչ հնարամտու-
թեան կը գիտէ: Անոր ուղղուած կը բա-
նայ, իր բերանը կը մօտեցնէ եւ իր շուն-
չը կու տայ հոն իր բոյր ուժովը: Աւ-
րին կը պատահէ: Հրա՛շք: Ա՛յ ան-
տունը իրն է (որոտողին), եւ իր տիրո-
ջը կը հետեւի անձ հեղ ու հաւատարմա՛յ:
Մէ՛կ բողբոջէ միւսը... Այսքան հրաշքն
ալ չի բաւեր: Անասունին այդ կատար-
ական եւ վայրկեանական ընտելացումէն
վերջ, ան որոտողին կը հետեւի հառանց
սանձին: Ինչո՞ւ: Անոր շունչը ունի իր
մէջ: Այլա՛հ, այլա՛հ... Միւսը չէ՛
քրքշալարժ տեսարան մըն է, խամա-
հիկներու կողմէ խաղցուած, թէ՛ արհա-
ւիրքի պատմութիւն մը, իրապաշտ հաւա-
քանդակ, մը կ'ուզէ: Վա՛յ քո տուն չը-
քանդակ, Բաշալեան՝ միւսին՝ քացի
ժողովներէն ձեռքառնական այս գիտելիք-
ները: Իսկ դուն՝ երբե՞ք չհանդիպեցար
Օտանին: Երբեք անոր շունչը չքառե-
ցա՞ւ ուղղութիւն: Նոյնիսկ ալքոլախառն
փոքր հեւք մը անկէ բաւական պիտի ըլ-
լար գինեւու քեզ ծիծաղելի երեւան հա-
նող զգայարանքովը եւ մէ՛կ զընչ հար-
ուածով ջնջել տար այդ ամբողջ անլուրջ
խենթութիւնը: Եարունակե՛նք ստիպան
դէպի նորանոր անակնկալներ, որոցմէ
մէկ հատն իսկ բաւական պիտի ըլլար
դիակի վերածելու արուեստի գործ մը,
խնդրուք պատմաւորով ընթերցողին հոն
ուր հեղինակը կը խորհի քահանայել:

Գուշակեցիք անշուշտ որ Հարաւա-
յին Ամերիկայի բարձրաներու վայրի ձիւն
մեր Սազոն է, որ կը դառնի վարժուհին
բղկուելէ, ո՛չ թէ անուշ վերաբերումի կամ
յորդորներու հետեւանքով, այլ — լաւ
մտիկ դրէք — իր առեւ զորութեամբ պզտիկ
գրքին ներդրութեամբը: Եւ սակայն

ո՛չ բողբոջին այդ պատմաւորով: Այլ
նաեւ անոր համար որ «ձէյմ» Գլարքին
շունչն էր, որ ա՛լ իր մէջ անցած էր, ու
ա՛լ մեղի կը կապէր զանի: Հոգին Սուր-
բի ազգեցութիւններով, մէկ բողբոջին
միւսը կատարող պատմութիւն մըն է,
ինչպէս կը տեսնենք: Մա՛րդ Ատոնու,
Բաշալեան, զորք ինչ է որ մինչեւ Հա-
րաւային Ամերիկաները կ'երթաս: Պատ-
կերներդ յաղվէ՞ս քնակաթիւն, այն մի-
ջովայրէն, ուր գործողութիւնը տեղի
կ'ունենայ: Թող ըլլայ նոյնիսկ պատմո-
ղին անցեալ յիշատակներէն քաղուած,
պայմանով որ արդարացութիւն, եւ ոչ այս
աստիճան բռնադատիկ, հակա-արուեստ,
քրքիջ արթննող: Բամբակեր, լազո-
ներ, պտերներ, ասեղաթիւթներ...
Ինչքան այ Բաշալեի գաւակ, գաւառա-
կանին գէթ ընդատակեայ պակասը,
հայկական մեծակիրթիչ, անգին հողին
բացակայութենէն, արուեստի անխու-
սափելի ազգային մէկ կերպարանքի
չդոյրութենէն, պաղ ու մահաշունչ հոգի
կու դան: Կարժէ անկի օրինակ մը, հա-
կտենայ տարողութեամբ, լուսաւորե-
լու համար աւերը այս սեւ արատին որ
դադարէ մը պէս կը տարածուի ամբողջ
այս պատմութեան տակ: Թիկաթնցին,
Ընէ՛ Իմի, Ի՞նչ Կա: Եթէ թաղում մը
յարակից ծիսակատարութիւնները, հե-
ռու իրաւունքից, միտքարանք մըն ալ
կը կազմեն հասարակ մահաանցուն
համար, մօրը մահուան անդադար ցա-
ւին առջեւ, գրադէտին հակազգեցութիւն-
ները հիմնովին տարբեր են: Միտակա-
տարումը կրնայ մինչեւ հեզմանքի մը,
պղծութեան մը, նախատինքի մը երե-
ւոյթը ստանալ: Այն պահուն, ուր հողն
ու քարը բուռ բուռ թու մարմինդ խփող
անտուկին վրայ թաղուելով՝ գոռ թըն-
դիւն մը կը լեցնէր դերեղմանդ, ի՞նչ
խորհեցար արդեօք, հէք մա՛յր, մեղա-
սոր հնդկուի մը (ընդգծումը մեզմէ) կը
թաղեն ըսիր, թէ՛ մարդիկ մահուան վը-
րէժը կ'առնեն այդպէս հողին տակ քեզ՝
քու մարմինդ ծեծելով:

Այստեղ ալ շա՛տ հեռաւոր երկրա-
մասի մը, շա՛տ հեռաւոր ցեղի մը անու-

նին յիշատակումը գոյութիւն ունի: Ան, սակայն, ինչպիսի ճշգրիտ հարուածով, ո՛չ ժխտի որդիական ցաւին օտարութիւնը կը դըրդացնէ մինչեւ անհունը, այդ հեռաւոր մարդոց, օտարոտի բարքերով, անհասկնալի, խաւարոյին, բարբարիկ, վայրագ հոգիով մարդոց ոգեկոյումովը, այլեւ ատով կը բնորոշէ ցաւակիր զաւկէ հոգիին ամբողջ քառու, առյաւէտ անմխիթար սիրտը եւ առյաւէտ անհասկնալի, անողոք, վայրագ յատկանիշը մարդկային ճակատագրին: Սոսկական անունը այդ հեռաւոր ցեղին, անցած դաւառացիի մը մեծ տապնապէն, որոտագին բազմապատկուածով, կը յայտնաբերէ հեղինակի հոգին, հայ ըզզայնութիւնը: Այդ հասարակ բարբարիկ – հոտ կ'ուռի անսահմանով, կը մատնէ ի ծնէ արքիւթը, որ բացակայ էր Բաշլեանի մօտ, վասնզի ճարպիկութիւնը, ամէնէն կատարեայն ալ, իւրացում չէ եւ չի՛ կրնար ապահովել ոչ իսկ ըստուրը ստեղծագործական Մէքապալիզմին:

Յեղիմ Ջայմը ամբողջ, այլազան միտման ճարպիկութիւններով շինուած, ետիշ կտոր մըն է: Ան մտքի՝ մակերեսային, հրապարակագրական, հոտորական, անցողակի օրօրումէ մը ծնած, տեւապէս խարդախուող ձեւակերպումով, ո՛չ իսկ հոգեմիճակի մը, ո՛չ իսկ երկար որոնացումով տարածուած մտածումի մը ցոլումը արժէքի կու գայ:

Ինչքան ալ բուռն ըլլայ պայքարը, զատումի ուղիստանքի մէջ, որով ուղծմ տեսնել հոն իբր վաւերական հըռ-չակուած գործի մը կնիքը, ո՛չ իսկ գլորական ճաշակ, ո՛չ իսկ գեղագիտական կազմաւորում, այլ պարզ ողջախոհութիւն կը ծառանայ ու, անոր ճիշդ հակառակ է որ ակնաթի կը դարձնէ ինծի: Եւ այդ համոզումը, արդարադատութեան մեծ մտահոգութեան մը բովէն անցնելէ ետք շարտայայտելը, աւելի քան վեհերոտութիւն մը, վատութիւն մը նկատել կու տայ ինծի:

Ըսե՛լ է որ իր միջավայրէն դուրս այլ տեղէ պատկեր ճարել արդիւնաւոր է:

Ըսե՛լ է որ որեւէ արքիւթիս, ի յառաջագունէ, ժխտել է արուեստի մէջ: Ո՛չ երբեք: Արուեստը ազատութիւնն է, որ սահման չունի, ո՛չ ալ պատուար: Պայմանով որ ազատութեան արտօնած տարրերը ըլլան սպասուհին արուեստի գործին, ըլլան սպասուհին անոր բնախօսական անյեղի գործառնութեանը: Տառթանքի իման վիպասանի մը գործին մէջ Քիտմալի տեսարաններ կան, յատուկ՝ Նէրի մուտի գունդի շարքին, որ սակայն ընթերցողը յօտարակամ կ'ընդունի, վստայի երկդիմութիւն չկայ հոն, ան, իբր Միլոն ընդունուած երկուտեք, հեղինակէն եւ ընթերցողէն, թոյլ կու տայ հետապնդել ճշմարտութեանց լոյսերուն արտակարգ, լիցցուցիչ ողորումը, հրդեհել վէպին իմաստը, սիրտարկել զայն երկինք խոյացող ոգիի: Այդ դին չունեցող արդիւնքի մեծութեան բաղդատմամբ, այդ Միլոնը կը վեհաբուռի պարզ ընդունուած պայմանադրութեան մը որուն վրայ քննադատական ուղի ակնթարթ մը իսկ չի յամենար: Պարզութիւնը, բնականութիւնը, տէրւոյց ոճը մինչեւ անհուն քառ Ձէիով երկար պատմութեամբ մը ունի, որուն ամբողջ թանկագին այգեկութիւնը պայմանադրուած է արքիւթիսով մը (գրագէտ մը ծպտուած սպասաւոր կը մտնէ տան մը մէջ, կենցաղ ու տիպար ուսումնասիրելու նպատակով): Աւելի ընթերցողը կ'ընդունի ինչպէս մարդիկ կը յարգեն թղթախաղի մը պայմանները, ինչպէս դասականներուն երբեք կանոնը, եւայլն: Պատկերները, ուրեմն, հետեւաբար եւ հակաբար՝ Յեղիմ Ջայմը ղէպքէն մէջէն չէ՛ որ կը հնչէ, անոր բնականօրէն զարգացող ընդգրկէն չէ՛ որ դեղձեան զազափարը կը բիւի, այլ՝ նախադրյալ զազափար մըն է, այն ալ չմշակուած, չորոնացուած զազափար, որ կը հրամայէ անմիջական (խամսեմիկներուն), որոնց թիւերը կը քաշէ հեղինակը, անդին, թիւ մը հեռաւորութեան կեցած, կը քաշէ կարծիք թելերը որ պէ՛տ է՛ն են: Կանխորոշ, մարիաֆէ պատառիանն է որոտելին, որ այս կամ այն գործողութիւնը (գրեթէ ան-

զոյ), տխուրները (հաղուադէպ), մանաւանդ լրագրական կնիքով խորհրդածութիւնները կը պարտադրէ, անկախաբար շաղակրատանքէն, որ պատմութեան քին ութնուն առ հարիւր տոկոսը կը կաղմէ: Այս բոլորը քաղիքին հղած գրական այս կամ այն դործին գիտակցութեամբ կամ ենթագիտակցական ալիքան շնորհով, չլուծուած տարրերու ներկայութեամբ, տարանջատ, տեսանելի, որոնց մտանահըշումը քիչ մը շատ պիտի երկարէր այս վերլուծութեանը:

✽

Անդրադառնանք քիչ մը աւելի մօտէն Սագոյի շարժումներուն: Ինչքան անհաճելի է, նեղացնող՝ եղծումը դիմադրծին ուսէ մանուկի որ, անխորաբար, կը յատկանշուի ինքնաբերական, անկեղծ, անմեղ, նոյնիսկ իր կեղծիքին անկեղծ նկարագրով: Ան շուրջ գիտակցութիւնը ճշմարտութիւններուն, որ կըրնան փայլատակուիլ իր խօսքերուն մէջ: Միջոցաւ, ըստ մեր հեղինակին՝ ձէյմս Գլաքսթըն, (Աստուած գիտէ թէ միակ այս անունի հնչուածին վրայ ի՞նչ յոյսեր դրած է ան), ըստ մեր հեղինակին, (տեսէք թէ ինչքան բնական է այս բոլորը), ութնամեայ մանուկը տիւ եւ գիշեր դըլուխը գիւրգիւրուն վրայէն չի վերցնել... Այլ ո՛չ լեռները կը կանչեն գինեւ, ուր միշտ ապրած է, ո՛չ իր ծնողները, ո՛չ իր զրկանքներուն պարտադրած մէկ իղձը, օրինակ, կարկանդակի մը, առատ շաքարով կաթնապուրի մը կամ արդար կարագով ձուազեղ մը... Ձէ՛, այս բոլորը զոյութիւն շունի մեր մանուկին համար (չէ՛ որ հայ ժողովուրդը կը խորհրդանշէ), այլ... գիւրգիւրը միտին որոնց հիւրերէնքներէն բացարձակապէս բան չի հասկնար, որ սակայն հիպոստոսութեամբ են գինեւ: Ձէ՛ որ այդ հիպոստոսութեամբ հայ ժողովուրդին յատկանիշն է, ցեղին ձայնն է որով, որքան կը ուզէ շուգէ, իբր գոռնայի ձայն, ակամփները պիտի լցնուին մինչեւ որ անոր անկէ տան իր

յայտնութիւնը: Աստուած խելք տայ ինծի...

Վա՛յ, տունդ չքանդուի, Բաշալեան... Գոնէ խեղճ տղուն առջեւ հայոց պատմութեան գիրք մը դրած ըլլալի որմէ յետոյ ան Գալի հայկին կամ Վարդանին գիտնորը ըլլալ ուզէր, նախապէս, մէջ ընդ մէջ, կաթնապուր պահանջէ վերջ, կամ ձուազեղի խոստումէ մը յետոյ: Թերեւս, այն ժամանակ, թէպէտ գիտակցութեամբ, բայց համաձայնէինք յան ինչ որ ցեղի ձայն, մանուկի մը քնքնակ: Միջոցաւ, այսպէս... Եւ քիչ քիչ, Եւ քիչ քիչ տարրական ողջախոհութիւն մը, որ այսպէս է յայտ բերած եւ հրապարակադրական արտադրութեանց մէջ, Միջոցաւ, այսպէս... Ո՛չ Բա՛ճ-Քին, ո՛չ Արտիստը, ո՛չ Կէօթէն այս տեսակ մանկութեան հողիվիճակ չէին կրնար ունենալ, արձակել այսպէս ցեղային պատգամի ձայնը, վասնզի առիթաւ պիտի ըլլար պարզապէս նշանը բնականութեան խանդարումի մը, որմէ որեւէ լաւ բան կարելի պիտի չըլլար ըստ պատկերացման մէջ եւ որ, առաւել նուազ, կրնար ըլլալ ցեղին ձայնը: Ի՞նչ խօսք. նպատակդ չէ՛ եղած հայ ցեղը անարդիւն:

Հոգեբանօրէն թերեւս յաջողիք մեղի կուլ տալ այդ արտադրութիւնը, եթէ, օրինակ, օրինակ կ'ըսեմ, Տօթի. Գլաքսթը քիչ մը ծիծաղելի բարոյախօսի հով մը տալիք, յաճախակի կրկնել տալիք անոր որքանուն ուղղութեամբ յորդոր մը: Աստուած խելք տայ ձեզիք: Եւ որքան կը, զօրի եկած, հարցաքննութեան օրը, մանկական ուշիմութեամբ, հաճելի ըլլալու ալ խորամանկութեամբ մը, յիշէր ուսուցչին խօսքը եւ կրկնէր զայն: (Ուրիշ խօսք որ այն ժամանակ զայն ցեղինէն աւելի ճէնթիմէնէն պիտի ըլլար ու պատմութեան շէնքը փոշիի վերածուէր):

Ութնամեայ մանուկ մը դեռ իր բարդ ու շփոթ բնագոյային կեանքի եռեւեպին մէջն է: Դանդաղօրէն պիտի երթայ դէպի գիտակցական կեանքը, դէպի խելքնը: Մանուկի մը ուղած հազար եւ բիւր

կարելի բաներուն մէջ, խելքը ո՛չ իսկ լերջինը կ'ըլլայ: Ան բացակայ է պարտադէտ: Իմաստ չունի իրեն համար: Ձրտունքն է իր մեծ, տիրապետող իրականութիւնը: Խելքն ալ անոր միջոցով, անոր մէջէն: Թող չափահասը փորձէ խելքի կերպարանքին տակ մերձենալ անոր, մանուկը հագար փարսախ հեռու կը փախչի անկէ: Մէջն ըլլալով նաեւ մանուկ Բաֆֆին ու կէտքէն: Նոյնիսկ մանուկ Մոցարթը, որ մանուկ մը չէ ալ անհաստատի ֆելիսիթի մը, երբ կը նըւազէ կամ կը յորինէ, խելքի աքթ չէ որ կ'ընէ, ան կը գրծնու, գերբնազդի մը ուժին տակ, որ ո՛չ մէկ կապ ունի խելք աղերսելու, խելքը պոծածելու արարքին հետ:

Արդ, ինչպէ՞ս կ'ուղէ որ այսքան ունեւանութիւններու, արտաքին ու ներքին տնտեսարանամանութիւններու, այսքան հակասութիւններու, այսքան շեղումներու, քէմիսի կրկնակ շփոթութեան (նախ՝ աշխատանքը, յետոյ՝ խելքը իր ցեղին ձայնը), աշակերտական մոռացութեանց տեղատարափին տակ դիմանայ գեղարուեստականը որեւէ գործի, գործը ինքն ինչքան ալ «կուտ», «սեղմ», «հատու» ոճով կառուցուած ըլլայ... Իրմ թէ բաւական ըլլայ սքրաւիլալիքու մը ճարեւ, որպէսզի անկէ դուրս ելած ձայնէրը անպայման գլուխ գործոց համանուագ մը կազմեն: Ո՛ր միաց որ — օրինակը անկատար է — պատմաբանք մը մէջ, զեռ մարմին չառած համանուագ մըն է որ կը շինէ «սթրատիվարիտու» եւ սթրատիվարիտուը համանուագին հրդեհը կը դարձնէ հրախաղութիւն: Արուեստի մէջ իրարմէ անկախ իրականութիւններ չեն անոնք:

Գերազոյն ճաշակը միայն, գեղագիտական բնագիւն է, որ կը գիմէ գերազոյն պարզութեան (Զօհրապ, Ձէխով): Ինչքան ալ ան «կուտ» ըլլայ կամ «սեղմ», ո՛րեւէ աղերս չունի սէմֆիլիսք յղացքին հետ, որ պարզապէս աղքատութիւնն է, խեղճութիւնն է: Անոնք կը պանդին հակոտնայ բեւեռներու վրայ: Մէկուն պարզութիւնը կը պատռուի ներքին ոգիի

ճնշումներէն, իմացական, գեղարուեստական չթեղանքէն, միւսին «կուտ» «պարզութիւն» կը ամբի, կը փոխ ներքին աւելի բացակայութիւնէն:

Խելքը ուղիւ շուղելը պարզապէ՛ս չափահասի խող է: Եւ այս պատմութիւն մէջ սուս դրականութեան մը, հակաբաւ պատմութեան մը յայտարար նշանն է: Եւ հաւաստիքը որուն համեմատ «Յեղիմ Ջայնը սքանչելի նորովէպը հայկական ողբերգութեան նուերուած լաւագոյն էջերէն է եւ Բաշալեանի, ու մեր նոր գրականութեան հրաշակերտներու շարքին կը պատկանի» (Զօպանեան): Այս դաւաշտական հաւաստիքը կու տայ զաղափարը թեթեւամտութեան անհուննին, նոյնքան հայ հեղինակի մը վերաբերմամբ, ինչքան հայ գրականութեան: Գեղագիտական աստիճանաշափ զտրալիքութիւնը որուն ակնարկած ենք, իր բազմապիսի երանդները ունի: Սեռունդինը կայ, դրական շարժումի մը անկամներունը կայ: Եւ ատիկա պրոպիկ ուժ մը, ընդդիմութիւն մը չէ, վերաշահատական յանդիմութեան ուժ: Յետոյ կան խառնուածքով պահանջողականները, որ «ի պաշտօնէ», մոլեռանդօրէն կը հակադրուին նորին, «երայ դրութիւնը» անփոփոխ պահելու ի խնդիր: Այժմ՝ նոյնն է հոգեբանական վիճակը որուն ծանր ախտանիշ մը ըլլալը ընդգրծումի շի կարօտիք եւ որ պարտք կը դնէ լուրջ դրական պարբերականներուն ձեռնարկելու, նախ եւ առաջ, փրկի տը քննախնայ մը հաւաքական աշխատանքին, ճիշդին):

Ժամանակակից երգահաններ երբ կը հարցնեն Պէթհովէնի թէ ինչո՞ւ իր գործերու այս կամ այն մասին, այսպիսի արտայայտութիւն մը տուած է — բացառապէս ղեղեցիկ եւ բնորոշիչ — ան կը պատասխանէր ընթացիկ, գրեթէ ժողովրդական դարձուածքով մը, որուն հայերէն համարժէքը անկարելի է տալ ինձի, գերմաներէնի անգիտութեան պատճառով եւ որ՝ «այսպէս աւելի լաւ է՝ իմ նման իմաստ մը ունենալու է: Կը թուի ուրեմն որ արամաբանականէն վեր, զըն-

նորոգումներն զուգար, ընթացիկ ճաշակէն հեռու, ա՛յլ կարողութիւն մըն է, համադրութիւն ընդդական ցուցմունքի՝ յուզական հեռաւոր դարկերու, ցեղային առհասարակ բարախումբի, զգացողուն կորսուած արձագանգներու, ննթադիակցական միջամտութիւններու, որուն վերին աստիճանն մէջ տեղի է՛նենայ շեշտին, ձեւին, ցեղայինին հուսկ բերանացումը։ Երբ թէ՛ չափահաս թէ՛ հանճարաւոր անհատականութեան մը մօտ իսկ խորին բաղձանք մը, ցեղային յատկանշումի պոռթկումով, կը ձեւանորոգի այնպէս մը որ խելքին տեղը առնելու վերջինն է, մեր հեղինակը, Խրէկ Տէրոբեի լեռներէն իջած մանուկի մը դիտակցութենէն կ'անցնէ դաշն, իրդդատում։ Եթէ կայ բան մը որմէ համայն մարդկութիւնը կը խրտչի, որուն հետ տնվերջանալի աշխատակի մը ելած է, ա՛յն ալ՝ խելքն է, րէզո՛նը։ Այս րէզոնանսը մանուկը։ Ան անհամար մարտերուն մէջէն պատրաստ է լսելու տեւէ մէկը, բացի խելքի ձայնէն։ Ինչքան ձայնը գայ աշխարհէ մը, ուր խելքը ոչ մէկ գործ ունի եւ ուր ընդհակառակը կը գործեն խելքին զօրութիւնները — երազները, քմայքները, երեւակայութեանք, արտառոցութեանք, անհաստատալիները, անհեթեթիւները — այնքա՛ն աւելի կը համապատասխանէ մանուկի ներքին պահանջներուն, այնքա՛ն աւելի կը կախարդէ զայն։ Ամբողջ նախնական միթիարի մարդկութիւնը յօրինած է դիւցազներգութիւնն ու առասպելը, կրօնը՝ ու ապրած անհամար դարեր այդ դրամադուրիին վրայ։ Մէն մի մարդու մէջ չ'ըլիկը կ'ապրի, որ խելայնորէն խոյս կու տայ, լոյսէն, խելքէն։ Ան կ'ախորժի հիւսել պատրանքներու թելերովը իր բժոժը եւ մըստնել մէջը ապահով ուր իրեն կը տրուի քալիլ կեանքէն նուազագոյն ճիգով։ Խելքին ենթաարտադրութիւնները, անոյ բաւորին կերպարանքները, այո՛, անոնց մարդը մեծ խոյանքով կը փարի եւ կը դարձանք զանոնք ապշեցուցիչ աստիճաններու հասցնելով — խորամանկութիւն, խարդախութիւն, խաբէութիւն,

կառկածամտութիւն։ Չէ՞ որ պատրանքու խաբէութիւն իրարմէ շատ հեռու բաներ չ'են...

Փը վառա յա քէք տիւ Մօնսիէ, պիտի ըսէր Յուպէն, եթէ վերահասու ըլլար խելքի այդ անհեթեթ բաղձանքին, մանուկի մը կողմէ, ինչպէս ըսած էր Թուրկէնիէվի ուղղուած իր մէկ նամակին մէջ։ Հոն, խնդրոյ առարկայ հեղինակը Թուրքոն էր, որուն գլուխը կը տեսնէր Մատամ Պալաւի հեղինակը, Պատմաբան Եւ Խաղաղութիւնի ոյն գլուխին մէջ, ուր ուսու միպագիրը կը տարուի քիչ մը բարոյախօսելու, Նափոլէտը Նադոմընցիի խաչին վրայ պահկեցնելով։ Իսկ վէպի մը, պատմութեան մը մէջ, Թուրքոն համար Մէսիէնյին գլուխուստնել համարժէք է միշտպի գլուխին, որ պատահա պատահ կ'ընէ կը լափէ արուեստի դործը։ Միշտպի իր հետեւանք խորին, ամբողջական յայացքի բացակայութեան, մեր հեղինակը նախ սկսաւ Հայոյն աշխատելու առաքինութիւնը պարզել — իրը իր պատմութեան հիւթ — ճեմարօրինակ բան մը տեղի կ'ունենար կոթ (աշխատանքներու վերահսկումը), Վէլ մնացի հմայուած, աշխատանքի երեւոյթէն, ծ. Գլուխն է բողոք, — ապա, ատիկա մոռցած, ինչպա Վիելքի պատմութեան վրայ, ըսել ուղեով որ Հայ ժողովուրդը առակ է մշակութիւնի։ Ու այս բոլոր շրջադարձութիւնները իրը Անգլիացիի մը նկարագրին մէջէն, դեռ երէկ մեծ անծանօթ մը հայութեան, եթէ ոչ թշնամի մը։ Եւ այս նոյն Անգլիացին է որ, ինչքա՛ն ալ ճէնթլմէն, կը բռնուի՝ անդիմադրելի կերպէն — ի՛նչ ընելու — ճարտարապէս գինելու այն ծանր, անխընայ, ոգի ի բոլոր ոգորումին համար, որ իրենց կը սպասէր այդ արուեստն ու արուեստիւն հոգին վրայ։ Գլուխը կը տեսնեմ, Բաշալեան...

3) Մէսիէն գործի մը սկիզբը հազիւ կ'ընդհըշմարտի։ Ան կու գայ մի միայն, շատ համոզուակի, իր մէկ ամբիւն էթա սիվիլը կու տայ եւ ընդհուպ ու քարամբլա կ'ամենտի։ Գեղարք

Այո նոյն Աւարտին հետեւ է որ, Լոն-տոնէն հազիւ Անատոլի հասած, առաջե-լուծեալն կը յծուի Վասիլու որդերուն երկարորէն, առեւը թէ դուրսը, իրենց հայրենիքին վրայ, իրենց կոչումին վը-րայ (Այլա՛հ), իրենց դերին վրայ: Ան-բընակա՛ն է, սո՛ւտ է, թխածո՛յ է: Ան-դա՛րձօրէն:

Անշուշտ, բնականօրէն, պիտի ու-նենայինք նուազ խստադատ, նուազ բը-ծախնգիւր եւ ոչ հեզնալից հակազդեցու-թիւններ, եթէ այդ խեղճ երեք չորս է-լերը հռչակուած շրջային իբր թէ՛ հե-ղինակին թէ՛ ժամանակակից հայ գրա-կանութեան գլուխ գործոցը:

աւստակամ կատարեալ գործի մը մէջ, (Ո. Ուլալ, Զեյթով, Թուրկեմիւլ, է. Փո, Սքանալ, ձոյս, Փիփիմկ) ամէկ յետոյ եքէ կընա՛ս գտնո-

գայն: Ու ինչքա՛ն ամբողջակօրէն անհետի, այնքա՛ն անիլի ամբողջակամ կը տփրէ, կը տի-րապետէ ինչ իր ներկայութիւնը: Սքք, յետոյ, կը քսի քէ կը շարունակէ խօսիլ, ան հի՛մա-վին փոխակերպուած է եւ առած է զգայնութիւ-նը, մտայնութիւնը իր անձին: Ներքին ճնշումով, անոր արտայայտութեամբ արակն ու գոյնը կը յե-զաշրջուի ամո՛ք՝ պատմութեթի տիպարին յա-տուկ մակարդակին վրայ, իր բոլոր այլազան ու բիւր տրամեմեքում մէջ: Իսկական *արթիւթիմ* համար ատկա *թա սկոնա* մըն է ուր գոյները կը բռնկին եւ իր անձը կը յայտնուի իր այլա-դիմի կերպարանքներու եւ գործին հետազնայած դիտարարութիւններուն ալ համադրութեամբ մէ-ջէն: Ասկէ ելլելով, ան բալարովին ըլլալով իր ընթացիկ անճանարարութիւնը, է՛ մանա միւսները, փոխ թ փոխ, ըստ գործի պահանջներուն: Այս է կայտարանքը արուեստին, կայտարանքը ըն-տեղծագործութեան: (Անո՛ գործ մը, որ կը ստի-պէ մեզ կրկնել այլազան հասարակ տեղիքներ):

ՀՐԱԶ ԶԱՐԴԱՐԵԱՆ



ԱՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՒՆ

Ռուսերգահայ թատերագրութեան աշխատանքը լուրջ ուժերից են Գ. Բորեանը եւ Գ. Տէր-Գրիգորեանը։ ԳՈՒԴՐՈՒ ԲՈՐԵԱՆԸ (ծնունդ 1915 թ. Շուշի քաղաքում) նախապատերազմեան սկսնակ բանաստեղծներից է, բառական ժողովածուներ է լույս ընծայել, երկար տարիներ գրական կազմակերպութիւն է զեկաւարել եւ գրական պարբերականներ խմբագրել։ Նրա բանաստեղծութիւնների ժողովածուներից են. «Բանաստեղծութիւններ» (1937), «Արեւի համայնք», «Ճանապարհ դէպի Երվ», «Մարտիկի երգում», «Կերակէ լեզուով», «Հրացուք», «Մարգարիտներ», «Երեւանի լուսաբաց»։ Գրել է նաեւ մանուկների համար։ Մասնակցել է պատերազմին։ Բայց Բորեանի բանաստեղծութիւնները հեղինակին մշակութային բանաստեղծի անուն չպարգևեցին։ Դրանք ձեռք տեսակէտից անթերի, առողջ ու զինուոր լեզուով, պայծառ տրամադրութեամբ գրուած չափածոյ երկեր են, որոնք սակայն զուրկ են հաղորդականութիւնից։ Ընդհանուր խոսքեր, մականբային դատողութիւններ, ինքնակրկնութիւններ, — ահա այդ երկերի աչքի ընկնող յատկանիշները։ Այդ բանաստեղծութիւնները գոյնզգոյն թողթէ ծաղկեփնջերի են նման, առանց բոյրի, որոնք հանդիս են աչքի ու ականջի, բայց ոչ սրտի ու մտքի համար։ Ըստ Բորեանի խոսքերի ժամանակին անդրադարձաւ ստեղծուած կացութեանը եւ իր համար աւելի յարմար գրական սեւ ընտրեց՝ թատերագրութիւնը։ Դեռեւս ձեռնարկեց թուականների վերջին Բորեանը հանդէս եկաւ «Բարձունքներում» թատերագրութեամբ (պատերազմի կեսից)։ Վերջին տասնամեակում նա յայտնի դարձաւ իր «Լույս տանիքի տակ» եւ «Կոտ

մուրջի վրայ» երկերով։ Բորեանը ապացուցեց, որ այդ ասպարէզում յուսալի հեռանկար ունի, Ըստ մամուլի առած տեղեկութիւնների, Բորեանը պատրաստել է «Թուզան» օպերայի լիբրետտոն, Մուրացանի համանուն երկի հիման վրայ։

Անհամեմատ բարձրարժեքի թատերագիր է երգիծաբան ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԸ, որը 15 տարի է, ինչ Երեւանում գրական մամուլում։ 1962 թուին տպուկ Տէր-Գրիգորեանի թատերագրութիւնների ժողովածուն՝ «Գարնան անձրեւ» ընդհանուր խորագրով։ Ժողովածույում զետեղուած Այս տասնութերեք տարի են (որի զգործողութիւնը կատարուած է 1948 թուին) եւ «Վերածնունդ» (որի զգալը կատարուած է 1920 թուականի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներին) երկերը Տէր-Գրիգորեանը գրել է Լեւոն Կարապէտեանի հետ միասին, իսկ մնացածները՝ «Սոփիի սխալը», «Վերջին մեխանիզմը», «Գարնան անձրեւ», «Այն ինչ կամ ոչինչ», «Մեռնող Ծիրան», — առանձին։ Մասնաւոր յաջողութիւն ունեցաւ «Մեռնող Ծիրան», որտեղ ինքնատիպ, ալտրանական մեծերով մերկացուած են խորհրդային իրականութեան հասարակական-հոգեբանական դատապարտելի երեւոյթները։

Ռուսերգահայ երգիծական գրականութիւնը քննութեան առնելը կարեւոր է ոչ այնքան գրականադիտական տեսակէտից, քան որ այդ գրականութիւնը աչքի չի ընկնում ուշադրաւ առատութեամբ եւ ոչ էլ ձեռքի հարստութեամբ, որքան որ հասարակադիտական եւ ընդհանուր ընդհանուր փիլիսոփայական տեսլականով, պարզելու համար, թէ բո՞ւժ

տիրական մարտկարգերի օրօք ինչ դիմագրիծ է ոտանուժ երգիծանքը եւ ինչ ճակատագրի ենթարկում։ Դա այնքան հետաքրքրական նիւթ է, որ միշտ էլ բաւարար ձեռնհասութիւն ունեցող մասնագէտներ կը գտնուեն՝ այդ հարցով զբաղուելու համար։ Մինչեւ այդ օրուայ դաւը՝ ներկայացնեք խորհրդահայ երգիծական գրականութեան փաստական վիճակը, մի քանի պատմական տեղեկութիւններով։

Հարկ չկայ զբաղուելու երգիծանքի եւ նրա տարբեր բարտալայտութիւնների բնորոշման ակադեմիական հարցերով։ Նշենք, որ երգիծագրական աշխատութիւնների մէջ երգիծաբանական գրականութեան վերաբերեալ այնքան տարբեր ու հակասական բնորոշումներ կան, որ աւելի լաւ է ոչ մէկի չհաւատալ անվերապահօրէն, այլ աղաւթնել գրական աշխարհում կողմնորոշուելու սեփական ընտելին։ Այդ պարագան միանգամայն օրինաւոր է։ Երգիծանքը արուեստ է եւ մարդկային քմայքի ու խղճի գործ, ուստի եւ ենթակայ անսահմանօրէն տարբեր վերաբերմունքների։ Վերաբերմունքների այդ տեսահամութիւնն էլ արտապայուում է գրականագիտական փրկիստփայական ձեւակերպումների մէջ։

Հայաստանում գրեթէ բոլոր գրողները այս կամ այն չափով ու խտութեամբ մշակել են նաեւ երգիծական գրականութիւն։ Խօսքը այդ մասին չէ, այլ դուռ երգիծանքի՝ իր սեփական բեմերով, մասնուով եւ գրչի մշակներով։ Խորհրդային ժամանակաշրջանի հայ երգիծաբանական կարճատեւ պարբերաթերթերի ցանկը շատ աղքատ է։ Թրիխում լոյս են տեսել «Կարմիր աքլորն» (1921) ու «Կարբճը» (1930-31 թուականներին), իսկ «Նրբանում»՝ «Ենչտօ-ժուռնալը» (1923), «Զուռնան» (1924), «Կարմիր ժողովրդ» (1926-27 թուականներին), Թեբեւ լինեն նաեւ ուրիշ մէկ-երկու մանրամուկ վաղանցուկ փորձեր, որոնք չեն էլ դարձնուած որեւէ տեղ։ Ծիւղ է սոփորական պարբերաթերթերը իրենց հերթին փակեցնել եւ երգիծանքի էջեր ու ան-

կիւններ, բայց դրանք չէին կարող փոխարինել անկախ երգիծական մամուլին։ Հիմնարկ-ձեռնարկութիւնների եւ ուսումնական հաստատութիւնների «պատի թերթերը» եւս շատ են զբաղուել այդ յանդիմանի գահնկէց արուած, բայց միշտ հրապուրիչ գրական ճիւղով։ Ինչո՞ւ էր այդպէս. պատասխանելու փորձը շատ հեռու կը տանէր, վերեւ յիշատակած պատճառներով։

Խորհրդահայ ժամանակաշրջանի միակ լուրջ երգիծաբանը հանդիսանում է Լեւոն ՎԱՄԱՆԻՆԸ (Արամ կամ Լեւոն Թովմատեան, ծնուած 1888 թ. Վանում), որը իրականում նախախորհրդային սերնդի ներկայացուցիչներից էր։ Լեւոն-Վամանիկ լոյս տեսած ժողովածուներն են. «Անվաւեր մեռելներ» (1924), «Աղլային այրբերան» (1926), «Վրիպած արցունքներ» (1934)։ Լեւոն-Վամանիկ իր երկերը սովորաբար գրում էր արեւմտահայերէն։ Նա եւս իր մորթի վրայ զգաց ըստախնեան աւալեկութեան հարուածները։ Իրազեկները պատմում են, որ երգիծաբանը րանտից ազատուելուց յետոյ, երբ նրան հարցնում էին՝ թէ ինչու այնչափ դուռ, պատասխանում էր. «Բանտին մէջ երգում կերած եմ»։ Դուռ մըն ալ չպրկի։ Եւ իսկապէս, Լեւոն-Վամանիկ շատ երկար ժամանակ լուց, մինչեւ յետստալինեան համեմատաբար բարօք օրերը, ու 1950 թուին նրա հեղինակութեամբ երեւան եկաւ «Գրաբար մարդիկ» դէրքը։ Այնուհետեւ մամուլում լոյս տեսնող Լեւոն-Վամանիկ երգիծական հատուկեմտ նշմարները գրուած են արեւելահայերէն։ Երգիծանքն էլ ամէն գործի պէս սէր եւ կիրք է պահանջում։ Լեւոն-Վամանիկ վերջին երկերը հին թափը այրեւս չունեն։

Իր ժամանակ երգիծանքով զբաղւում էր էդուարդ Խոճիկը (1900-1961), իսկ լայն տարածում ունեցող մամուլի էջերում ժողովրդականութիւն էր վայելում Փայանդուզ Մկրտչի։

Խորհրդահայ երգիծանքը զարթոնք ապրեց բոլոր համեմատութիւնները պահելով հանդերձ, 1954 թուականից։ Այդ

երեւոյթը պայմանաւորուած էր Համա-
խորհրդային տեղաշարժերով եւ զուտ
տեղական նախաձեռնութեան արդիւնք
չէր: ՎՍՊԿ-ական Հայաստանն օրա-
թերթի հրատարակութեամբ 1954 թուի
Մարտից ի վեր անընդհատ լոյս է տես-
նում «Ողնի» երգիծական պարբերաթեր-
թը, հանգիստանալով խորհրդարանայ երգի-
ծարանութեան ղեկավար Բեմը եւ երգի-
ծանքի դասընթացի խորհրդանշանը: Այն-
տեղ իրենց ուժերն են փորձում աւարեց
եւ սկսնակ էրգիծասէր ու երգիծարան
հղինակաները, այդպիսով զոնէ արթուն
պահելով հանրային զուարթամտութեան
պահանջը: ՎՍՊԿ-ական գրականու-
թիւնն ամառներ Քի մի ժամանակ փոր-
ձեց մշտական անկիւն յատկացնել երգի-
ծանքին, բայց կիսամամբին զղջաց ու
նահանջեց:

«Ողնի» պարբերականին աշխատակ-
ցում են յայտնի, բայց ամէնէն շատ ան-
յայտ հեղինակներ: Երկար տարիներ եր-
գիծարանութեան ասպարէզում աչքի ըն-
կածներէն յիշենք ԱՇՓԱԼԻՆ (Ալտա փա-
րանեան), ԳՈՒՐԳԷՆ ՍՍՍՐԲՈՒՅԵԱՆԻՆ
եւ ՊԱՐՈՅԻ ՄԻԽԱԻԼՈՎՆԻՆ, որ վեր-
ջերս նաեւ գրական մամուլ ընկնելու մտ-
կարդակին հասաւ: Իրենց ուժերի միայն
մէկ մասը երգիծարանութեանը յատկա-
ցնող գրողներին յիշատակելու մասնա-
ւոր կարիք չկայ: Բայց աւելորդ չէ յի-
շել նրանց, որոնց սակեղագործութիւնը
չնչուած երգիծական բնոյթ ունի:

ԲԱՏԻՆԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԸ Հիմնակա-
նում բանաստեղծ էր: Գրել է «Լիբիկա»
(1941), «Ռազմի քնար», «Գարնանային
նուազներ», «Արձագանգ», «Բազմաբերի
երգը», «Մէլ եւ սուսեր» (1962) ժողո-
վածուները: Բայց որոշ ժամանակից ի
վեր (մանաւանդ «Ժանօթ դէմքեր» զբո-
քով - 1953) ամէնէն շատ երգիծաբա-
նութեամբ է գրաւում, երբեմն երեւա-
լով նաեւ մոսկովեան «Յրոկոդի»-ում, Պարոյր Մխիթարեանի կողքին:

ԲԱՏԵԿԷՆ ՇԱՀՈՒՄԵԱՆԸ 30-ական
թուականների սերնդից է եւ արձակա-
դիր նրա գրքերն են «Մարդիկ» (1936),
«Առաջը կը մնան երկնքում», «Զբոսա-
-

թաթի ծմակը» (1958): Իր ժամանակ
յայտնի էր լրագրային ակնարկներով:
Շահաւանի արձակը հապէս երգիծա-
բանական է: Նա «Ողնու» չըջանակի հե-
ղինակներից է:

ՅՈՒՍԻԿ ԽԱՆԴԱՄՈՒՐԻ անուշը զը-
րական մամուլում յաճախ երեւաց մա-
նաւանդ 50-ական թուականներից յի-
սոյ: Նրա գրքերից ծանօթ են «Առտա-
բաց» (1956), «Էլզովոս», «Հանդիպում»,
«Յիկար»: Խանդամուրը, որքան կարելի
է դատել մամուլում լոյս տեսած ստեղ-
ծագործութիւններից, նախասիրութիւն
ունի բնականուր-հոգեբանական խորհր-
դածութիւններ անելու եւ պարագայա-
կան նիւթերի չի կոտլում: Այսինքն,
նրա գրածները ուղղակի զբաղան երկի
հանգամանք ունեն, այլ ոչ թէ այս կամ
այն որեւէ գէպը լրագրային չափանի-
շով երգիծելու անցողիկ բնոյթ: Խանդա-
մուրի գրածները երբեմն ոմանց մօտ
բուռն առարկութիւնների տեղիք են տա-
լիս:

Առակագրութիւնը փոստօրէն երգիծա-
բանութեան բաղկացուցիչ բնագաւառնե-
րից մէկն է: Այդ ասպարէզում միանգա-
մայն լիարժէք գրող առայժմ չկայ: Պա-
տեհագմից առաջ այդ ուղղութեամբ բա-
ցառիկ խոստմնալից ուժ էր պատանի Նո-
րիկ Նաղարեանը, որը, զժրախտաբար,
զոհուեց պատերազմի դաշտում: Առակա-
գրութեամբ գրաւում են գերապանցա-
պէս Արշալիր Դարբին եւ Մկրտիչ Կո-
րիւնը, բայց նրանք էլ գրիչ են փորձում
ամէն ասպարէզում եւ կանոնաւոր դրա-
կան զիմադրի չունեն: Բայց քանի որ ե-
ղածներին մէջ դարձեալ նրանք են դալար
պահում առակագրութեան պարտէզը,
ուրեմն անտեղի չէ հէնց առակագրու-
թեան կապակցութեամբ էլ ներկայացը-
նել նրանց:

ԱՐՇԱԽԻՐ ԴԱՐԲԻՆ (Մնացական-
եան, ծնունդ 1910 թ. Գանձակի Պահան-
գում) Բաքուից է Երեւան տեղափո-
ուել: Գրել է շարժանկարային սցենար-
ներ, թատերգութիւններ («Հողը ծիծա-
ղում է», «Հայրենիք», «Դատաւճիռ»
եւայլն), մանկական ոտանաւորներ

(«Վարդիկներ ու շաղիկներ», «Բալիկներ ու ծաղիկներ»), փորձել է ածական ու յորելանական բանաստեղծություններ, բայց նրան կարելի է առանց վերապահության առական գրքերի («Առականներ» — 1959)։ Դարձին բառական շատ է առական գրքում, հաճույն է գրել է առանց ճիշդ է, բոլոր առականներն էլ չեն կարող դուրս-գործոցներ համարուել, բայց այդպիսի պահանջ դնելու հիմք էլ չկա։

ՄԿՐՏԻՑ ԿՈՐԻՆՆԸ (ծնունդ 1913 թ. Կարսում) եւս փորձել է գրական գործեր բոլոր սեռերը։ Գրել է բանաստեղծություններ («Տեղերի հերոսներ» — 1932, «Վեպերի եւ սիրոյ երգեր»), մանկական երկեր ու ոտանավորներ («Մաղ-կաճոր», «Մանուկների հետ», «Մանկական երկեր»), հանելուկներ, մանկական թատերգություններ, «առականներ», հեքիաթներ, պատմական քերականներ։ Նրա մանկական երկերի որոշ մասը թարգմանուել է այլ լեզուներ։ Կորիննը եւս հրապարակել է Կամոյով եւ գրել մի քանի անգամ վերամշակուած «Կամո» վեպը։ Մամոյի տունայնորով, պատրաստուած է Վուրէն Սպանդարեանի վեպը։ Ինչպէս տեսնում է, Կորիննը իր եռանդը ցրել է բոլորովին տարբեր ուղղութիւններով։ Բայց ազակադրութիւնը նրա սիրած ու մշտական գրադուսներէ մէկն է։ Կորինի առականները թէեւ չունեն Դարբինու առականների թիւն ու մակարդակը, կուռ ձեւն ու գրական բովանդակութիւնը, բայց եւ այնպէս, ի շնորհ յաւաստանի, դարձեալ առականն են։ Կորիննը նաեւ գրականագէտ է եւ համապատասխան աշխատութիւնների հեղինակ։

ԺԸ.

Ինչպէս յայտնի է, Կովկասեան Հաստատան վարչական սահմանները գրծուած են այնպէս կոշտած զինին-ստալինեան ազգային քաղաքականութեանը միանգամայն վայել, մեղմ ասած, աւազակային սկզբունքով։ Անտեսելով, ա-

ւելի ճիշդ՝ արհամարհելով քննադատը հազարական եւ պատմա-ազգայական անվիճելի տուեալները, հազարամեակներից ի վեր հայկական ու հայարեակ ընդարձակ երկրամասեր պոկուած եւ անշատուած են մայր հայրենիքից, մի անգամ եւս մասնատելով առանց այն էլ ջլատուած ազգային ամբողջականութեւնը։ Հայ ժողովրդի քաղաքական ինքնապաշտպանութեան գործը կազմալուծուելու, նրա տարրական ապահովութիւնը վտանգելու եւ հզօր տիրոջ կամքից ներան մշտապէս կախալ վիճակում դնելու, ինչպէս եւ հարեւան ժողովուրդների միջեւ հնարաւոր մանր հակառակութիւնների քոցը անշլջ պահելու ու նրանց յարաբերութիւնները լարելու եւ տեսականօրէն խախտալ դարձնելու գրգռիչ նպատակով իր ժամանակ կամայականօրէն օրինականացուած միջոցառումները՝ իրենց բացառական հետեւանքներն արգէն ցոյց են տուել բոլոր ասպարէզներում։ Այս հարցը, անշուշտ, ունի առաջին հերթին ազգային-քաղաքական տարողութիւն եւ ներկայացուող ուսումնասիրութեան շրջանակից դուրս է գտնուում։ Բայց շեշտել պէտք է, որ իրերի այդ կացութիւնից առժամ եւ ոչ միայն մեր հայրենիքի ընդհանուր քաղաքական դիրքն ու վարկը, տնտեսական նախադրումներէ նպատակայարմար համակարգումը, հաղորդակցութեան ցանցի ընդլայնումն ու բարձր աշխատանքը, ազգային ամբողջականութեան գերագոյն պահպումն ու որին, այլեւ հէնց մշակոյթն ու առաջին հերթին ազգային գրականութիւնը։

Յայտնի է նաեւ, որ Հայաստանից կամայականօրէն անջատուած Հայապատկան հողերի վրայ ապրող հայութիւնից բացի, հայկական հոծ զանգուածներ են ապրում տնդրկովկասեան հարեւան երկրներում եւ աւելի հեռու, մանաւանդ Միջին Ասիայում, Հիւսիսային Կովկասում, Դոնի Ռոստովին մերձակայ չլրջանում եւ ռուսական, ինչպէս եւ ուկրաինական այլեւայլ քաղաքներում, — հաւաքաբար կազմելով Խորհրդային Հայ-

կական Սփիւռք։ Ողբերգական է այդ Սփիւռքի կարեւոր մասի վիճակը, ազգային տեսակէտից։ Հետեւելով լենինի՝ բազմազգ պետութեան մէջ «ազգային» մշակութային ինքնավարութեան» սկզբունքները ուրանալու եւ ժխտելու դժբախտութիւն, խորհրդային իշխանաւորները աստիճանաբար խեղդիչ օդակը աւելի սեղմել եւ Հայկական դանդաղածներին գրկել են ժայրենի լեզուով սովորելու ու հետեւապէս ազգային մշակոյթ պահելու եւ վարձացնելու հնարաւորութիւնից։ Երբեմնի ծաղկուն Հայկական դաշտները այժմ կատարելապէս անապատներ են այդ տեսակէտից։ Միջին Ասիայում, Ռուսաստանեան Դաշնակցային Հանրապետութեան սահմաններում եւ առհասարակ Անդրկովկասից դուրս ապրող Հայերի ազգային իրաւունքները ուժանշանաբար զրոյացնել են սոսկ մարդահամարների ժամանակ առայժմ Հայ արձանագրուելու անհնունակար օղորմութեամբ։ Այսպիսով, Խորհրդային Սփիւռք արտասնդրկովկասեան հատուածների ազգային մշակոյթի ու գրականութեան զրոյացնելու ժամին խօսք անգամ չի կարող լինել։

Կայութիւնը մի քիչ այլ է Անդրկովկասում, հասկնալի պատճառներով։ Խորհրդային Սփիւռքի անդրկովկասեան հատուածը ձեւականօրէն տակաւին բուլղորովին չի գրկուած խորհրդահայ մշակոյթին հաղորդակից գտնալու եւ որոշ չափով էլ մասնակցելու իրաւունքից։ Այնպէս որ Հայաստանից դուրս անդրկովկասեան զանազան վայրերում կան Հայ գրողների անջատ ջոկատներ։ Գրական այդ ակութիւնը չորսն են։ Ազգբնական մայրաքաղաք Բաքու, Ղարաբաղի մարզակենտրոն Ստեփանակերտ, Վերաստանի մայրաքաղաք Թբիլիսի, Աբխազիայի մայրաքաղաք Սուխումի։ Բնածնողի լինելու դէպքում՝ Ստեփանակերտը պէտք չէ մտցնել այդ շարքի մէջ, քանզի նա, ղէթ Հայերիս պատկերացմամբ, Հայրենիքից իրերի բերմամբ ժամանակաւորապէս անջատուած երկրամասի մաս է կազմում, այլ ոչ թէ իսկական Խորհրդահայ Սփիւռքի, ինչպէս որ

միւս քաղաքների պարագան է։ Բայց նիւթի շարագրանքի յարմարութեան համար այդ էլ սխալ չէ։

Պորհրդահայ Սփիւռքի գրողների վիճակը պարզապէս աննախանձելի է, շատ աւելի, քան Հայաստանում գանձադրների։ Նրանք ենթակա են կրկնակի, եռակի եւ երբեմն էլ անհամեմատ աւելի սուղ ճնշման։ Նրանք իրաւականօրէն հնարաւորութիւն չունեն խորհրդահայ գրական ընտանիքի մաս կազմելու։ Ներանց երկերի հրատարակութեւնը անկանոն է եւ զանազան ժառանգաւոր ճեմահանոյթներից կախուած։ Նրանց ստեղծագործութիւնը լայն տարածում չունի եւ շատ հազուադէպօրէն է երեւում Հայ գրական ժողովածուներում, դպրոցական դասագրքերում եւ այլն։ Եթէ այս բոլորին աւելացնենք նաեւ այն հանգամանքը, որ օտարաշունչ «հանրապետութեան» քաղաքացի լինելով՝ նրանք անկարող են, չառնել լիաթոք, գէթ նուազագոյն չափով դրսեւորելու իրենց Հայութիւնը, չօլափելու համազգային տարողութեամբ հին ու նոր նիւթեր, եւ տառապում են ստեղծագործական նիւթերի սովոր ու հոգեւոր թռչնների համար անհրաժեշտ ստեղծագործական կենսագաշտի քաղաքայութիւնից, — ապա հասկնալի կը գտնայ գրական երկերի գեղարուեստական մակարդակի այն երբեմն ուղղակի յուսահատեցուցիչ սակաւարեւելութիւնն ու զաւառայնութիւնը, որը աւելի կամ պակաս չափով յատուկ է Հայաստանից դուրս գտնուող համարեալ բոլոր Հայ գրողների ստեղծագործութեանը։

Այս ընդհանուր համառօտ քաջատրութիւններից յետոյ անցնենք վերայիլ եւ ակութիւնների ստեղծագործական ճիւղերին։ Սկսենք Ազգբնիկներից։

1962 թուի Հոկտեմբերի գրաւոր տուեալներով, Ազգբնիկներում ստեղծագործում են 50-ից աւելի Հայ գրողներ, որոնցից 22-ը Ազգբնիկի գրողների միութեան անդամ են։ Բաժում տարբեր ժամանակ հրատարակուել են տարբեր գրական պարբերականներ։ 1957 թվ-

ւից ի վեր լոյս է տեսնում «Գրական Ազգային Երկամսեայ Հանդէսը 2000»-ը ինչպէս Բաքուէն է լոյս տեսնում նաեւ «Գոթաւնիստ» օրաթերթը: Գարաբաղում եւ այլուրեք կան տեղական օրերէլ երեք թերթեր: Պատերազմից առաջ Գանձաւում եւս Հայերէն թերթ կար: Որպէս ընդհանուր երկուսն, աստիճանաբար կրճատուել եւ կրճատուեալ է Հայերէն թերթերի թիւը: Ինչպէս Բաքուի, այնպէս էլ Գանձակի ու Գարաբաղի գրողները հիմնական գրական բեմը վերջիւ-եւայ Հանդէսն է, որից մի շարք բանաստեղծական կտորներ երեւացին «Հայրենիք» Ամսագրում վերջին տարիներս, մասնաւոր Մարտիկ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակի տօնակատարութեան կապակցութեամբ: Այդ Հանդէսը անկարելի է աստանալ արտասահմանում, դէժ բաժանորդագրութեամբ, ինչպէս եւ մի շարք այլ պարբերականներ: Այդ ներքին ու արտաքին սահմանափակումը եւս որոշ քաղաքականութիւն է Հետապնդում: Սակայն զողորմեանահաճաք գրականութեանը ծառայողներու ուրիշ զանազան աղբիւրներ կան, որոնք այնքան էլ քիչ չեն:

Բաքուի գրողներէն են մի այլ տոբթով յիշատակած բանաստեղծուհի ՎԱՄՍԵՆԻՔ. ԱՂԱՍԵԱՆԸ, բանաստեղծ ՍԱՄՍԻԷԷ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ (ծնուած 1908 թ.) եւ արձակագիր ՄԱՐԳԱՐ ԴԱՄԻԹԵԱՆԸ (ծնուած 1910 թ. Նախիջևանի Ծուրուտ գիւղում): Սրանք միջուկից բարձր, հիւրաւ գրողներն են: Միւսներից յիշատակենք Կարապետեանի Գանիէլ Գէորգեանին եւ Աթանես Սենային (Նալբանդեան) ու արձակագիր Ռոսիկ Կարկղեանին: Ընդհանրապէս, երբեմն դժուար է որոշել, թէ ո՞ր գրողը երբ որտեղ է ապրում, Գարաբաղում, թէ՛ մի այլ տեղ, քանզի զանազան պատճառներով մնալուն գերթեւեւութեան մէջ են: Բայց այդպիսի դժգոհում անամայ սխալուելը մեծ չափից չէ: Կարելի էր Աղբիւրնում ստեղծագործող Համեմատաբար աչքի ընկնող գրողներին յիշելն է:

Մարգար Դամիեանը Թաիլքների աւ-

տփոր, բայց մեղմահոս ու բեղուն գրող է, իր նիւթերը վերցնում է ժամանակակից քաղաքային ու գիւղական կեանքից: Նրա գրքերից եւ երկերից են. «Ուղիղ ճակատին», «Միւսնի ծառ», «Վերադարձ», «Ուսնու տակ», «Մեր քաղաքը», «Մեր գիւղը», «Պատմութեանը», «Առաջին շիւք», «Յափառականութեանը», «Ներքին ուրիշ», «Ներքին ուրիշ», «Վազը»: Վերնագրերից երկուսն է, թէ որն է Դամիեանի Հետաքրքրութիւնների շրջանակը:

Մամուլէլ Գրիգորեանի ժողովածուներից յիշենք. «Կապիական առաւօտ», «Թափանցիկ հորիզոններ», «Կրակներ», «Մաղկիկ աղաւթ Հայրենիք»: Գրիգորեանի ստեղծագործութեան «թեմաները» սահմանափակ են, միեւնոյն կախարհական շրջանի մէջ սեղմուած, բայց բանաստեղծութիւնները գրուած են անկեղծ ներշնչումով եւ ոգեւորութեամբ:

Միւսներից ծաւալով շատ է գրել Սենայը, դեռեւս 80-ական թուականներից ի վեր («Արիւն եւ յաղթանակ» - 1936, «Ներքին», գրուած մարտերում, «Թուիք», «Նուազներ», «Հողի բոյրը», ու նաեւ... Վիճ սեպտեմբրիկան): Մակերեսային բանաստեղծութեան յառաջապահներից է Սենայը, բայց անխնայ հոսանքով շարունակում է գրել: Տարիների առաջ Ռոսիկ Կարկղեանը երեւաց «Տիգրան» ու «Թորգոմի ընտանիքը» գրքերով, ինչպէս եւ ակնարկներով՝ Հայաստանեան մամուլում: Առհասարակ Հայկական հրահան ապում է գրաւի գրողների երկերը: այդ նոյն բանն արեց եւ Կարակղեանի նկատմամբ: Կարակղեանը սովորաբար գրում է առօրեայ լրագրային այլեւայլ ակնարկներ:

Գարաբաղի գրողների մէջ աչքի է ընկնում ԲԱԳԻՍ ՌԻԼԻՍԵԱՆԸ (ծնուած 1926 թ. Մուշկահատ գիւղում): Նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն է. «Ներքին աշխատանքի եւ խաղաղութեան»: Առհասարակ բանաստեղծութիւններ էր գրում մինչեւ 1965 թուականը, որոնք առանձին յուսատու արժանիքներով չէին փայլում: Այնու-

Հետևա անցաւ արձակին եւ ուղղակի թը-
ռիչք գործեց: Հրատարակուել է Բաթ-
ւում եւ Երեւանում: Անցեալ տարի ժողո-
կովեան «Դրութեա նարդոյ» ամսա-
դրում էրեւաց Ուլուբարեանի վիպակնե-
րից մէկը՝ Սերո Խանգադեանի ջերմ
յանձնարարականով: Եղել է մարզային
թերթի խմբագիր: Գրքերից յիշենք. «Այս
առաւօտ», «Հայրենի հող», «Այդեա-
սան», Ուլուբարեանը ոչ միայն բեղուն,
այլեւ ներուժ կարելիութիւններով օժ-
տըւած հեղինակ է, եթէ որեւէ պատճա-
ռով կէս-ճանապարհին կանգ չառնի:

Արձակագիր ՍԵՐՈ ԱՅՐԱՀԱՄԵԱՆԸ
«Սերունդների հետ» վէպից յետոյ վեր-
ջերս (1963) հանդէս եկաւ «Մեր քաղա-
քը», վիպակով: Գեղարուեստականու-
թեան մասին շատ բան չի կտրելի տեսել,
բայց կենցաղային մթնոլորտի նկարա-
գրութիւնները որոշ բան արժեն՝ ժամա-
նակն ու մարզկանց ոգին հասկանալու
համար: ԻՄԲԱԵԼ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ (ԻՄ-
ՊԵՏ) յայտնի է իր առակներով եւ եր-
գիծական էջերով: Միւս արձակագիրնե-
րից ու լատաստիզմներից սկսանք վար-
ժութեան համար յիշատակենք մի քանի-
սիւն: ԱՅՐԱՀԱՄ ԲԱԶԵՆՈՒՆԻ (Գանձա-
կից) («Մարի կանչը», «Մորտի հետ»),
ԲՈՒՂԴԱՆ ՋԱՆԵԱՆ («Ճամբաներ», «Իմ
երեւանը»), ՍԱՄՈՒԷԼ ՔՆԱՐՈՒՆԻ,
ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀՆԱԶ («Քեզով հպարտ»),
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԻԲԷԼԵԱՆ, ՎԼԻԿՆԻՄԻՐ
ԱՅՐԱՀԱՄԵԱՆ, ԳԻՈՐԳ ԱՂԱՋԱՆԵԱՆ,
ՎԱՋԳԵՆ ՕՎԵԱՆ, ԻՍԱՀԱԿ ԱԼԱԻԵՐԻ-
ԵԱՆ, ՍՈՒՐԱՏ ԽԱՆԵԱՆ, ՍՈՒՐԵՆ ՍՏԵ-
ՓԱՆԵԱՆ, ԳԵՐԱՄԻՄ ՅՈՎԱԹԵԱՆ, Այս-
քանով բաւարարուենք զազրբեջանահայ
գրողների մասին:

Աւելացնենք, որ Բաթւում են գրա-
կան կենտրոնի մասնակցում նաեւ գրական-
նապէտներ Գուրգէն Անտոնեանը եւ Հա-
մօ Ամիրխանեանը:

«Վրացահայ» գրողների վիճակը ան-
համեմատ տեսլի աննախանձելի է, քան
Աղբրեջանում գտնուող հայ գրողների
վիճակը: 20-ական թուականներին եւ
30-ական թուականների սկզբին թրիլի-
սին տակաւին հայկական մշակոյթի լուրջ

կենտրոն էր եւ այնտեղ գտնուող հայ
մտաւորականութեան մակարդակը բա-
ւական բարձր: Ծիւղ է, Երեւան դոյու-
թիւն ունենալուց յետոյ Թրիլիսի յետին
գիծ անցնելը բնական եւ արամարտա-
կան է ու ցաւ չի կարող պատճառել:
Բայց անընթեք է, որ այնտեղ կեդրո-
նացած հայ գրողների բազմամարդ ջո-
կատը ամենատարրական յարմարութիւն-
ներ չունի ստեղծագործելու: Վրաստա-
նում մօտաւորապէս նոյնքան հայ գը-
րողներ կան, եթէ ոչ աւելի, որքան Ա-
ղբրեջանում, սակայն, ինչքան էլ զար-
մանալի, ոչ մի դրական պարբերաթերթ
չի հրատարակում այնտեղ, եթէ չհաշ-
ուենք հաղիւ ամենամեայ «Գամուրջ» ա-
նունով վախտ արմանախնները: «Սախել-
դամիս»՝ վրացական պետական, եւս
շատ ժրատ է հայ գրողների գրքեր հրա-
տարակելու: Եթէ մերթ րնդ մերթ Հայ-
պետհրատը օգնութեան չհասնի, վրացա-
հայ գրողների անունը քի սպառ կը մո-
ռացուի հայ իրականութեան մէջ: Բայց
Հայպետհրատն էլ իրականում չէ չափից
աւելի զգալի եղբայրական օգնութեան
ձեռք մեկնելու: Այլմանախը լոյս է
տեսնում 3000 օրինակ: Ամբողջ երկրում,
որտեղ գրեթէ կէս միլիոն հայ է ապ-
րում, իր գոյութիւնը հաղիւ է քարշ տա-
լիս: «Սովետական Վրաստան» երկօրեայ
թերթը: (Հակառակ այդ թերթի աղբա-
տիկ վիճակին, այնտեղ բաւական աչքի
է ընկնում երգիծանքը): Իսկ 80 հայկա-
կան գիւղ օւնեցող Զաւարեան նոյնիսկ
սեղական ինքնուրոյն թերթ չկայ (վը-
րացերէն անունով թերթի կցորդն է
միայն հայերէն յաւելումը): Վրաստա-
նի գրողների միութեան կազմում ան-
ուանապէս կայ հայ գրողների սեկցիա,
որին կից երիտասարդ գրողների խմբա-
կը ընդգրկում է մի քանի աստիճանի
մարդ: Գրական յատուկ մամուլի բացա-
կայութիւնը հնարաւորութիւն չի տալիս
լրիւ պատկերացում կազմելու նորահաս
երիտասարդ ուժերի մասին, ուստի մեր
տուած տեղեկութիւնները վերաբերում
են միայն աւագ եւ միջին սերունդին:

(Շաք.)

Լ. ՄԻՐՏԱՅԵԱՆ

ՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐԻՉՆԵՐ

(ՀԱՄԱՐՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ՏԱՎԻՏ. 1748-1825.— Ծնած Փարիզ. երբ Հռոմի մրցանակը շահեցաւ, իսա-
յիս երթալու, արուեստը կատարելա-
գործելու համար, չմեկնած՝ իր ընկեր-
ներուն կ'ըսէր.— «Իսասական արուեստը
չեմ սիրեր, եւ չեմ կարծեր վրաս որեւէ
ազդեցութիւն թողու, որովհետեւ պաղ է
ու անկենդան»։ Բայց հինգ տարի Հռոմ
մնալէ ետք, բոլորովին ինկաւ զասակա-
նի ազդեցութեան տակ. եւ երբ վերա-
դարձաւ Փարիզ պայքարիլ սկսաւ Վաթ-
թոյի եւ անոր նման նկարիչներու գէմ։
Ճրանսական Յեղափոխութեան շր-
ջանն էր. Նաբոլէոն քաջութեանց այն ար-
ուեստագէտները, որոնք ուժը, պատե-
րազմն ու յաղթանակը կը պատկերացը-
նէին. Տափտ, որ յաւ ուսումնասիրած
էր հին յունական եւ հռոմէական պատ-
մութիւնը եւ արուեստը, սկսաւ անոնց
օգուով նկարներ արտադրել. Նաբոլէոնի
ուզածն էր, եւ պալատի նկարիչ կարգը-
ւեցաւ. իր նկարները զասական արուես-
տի վրայ ձեւեց եւ որովհետեւ իր խոր-
քէն չէր դար, արդիւնքը եղաւ պաղ ու
անկենդան արուեստ մը...

Միապետութիւնը կրկին հաստատ-
ուելուն՝ Տափտը կ'աքսորեն Պրիւքսէլ,
Յեղափոխութեան մասնակցած ըլլալուն։
Պրիւքսէլ կը մնայ մինչեւ կեանքին վեր-
ջը։

ԹՐՆՈՐ. 1775-1851.— Ծնած Լոնտոն,
սափրիչի մը զաւակը։ Տասնըջորոտ տա-
րեկանին կը մտնէ Րոյալ Ակադեմիին։
Պատանեկութենէն իսկ, ամբողջ ուշա-
դուութիւնը բնութեան դարձուցած՝ կը
սնանէր բնութեան զեղեցկութիւններով
ու կը նկարէր բնութիւնը։ Արեւը չծա-
ղած՝ արդէն իր ներկերուն հետ բնու-

թեան մէջ կ'ըլլար։ Կը սիրէր առանձնու-
թիւնը. երբեմն երկար ատեն իր հետքը
կը կորսնցնէր, առանձնութեան մէջ իր
ամբողջ ժամանակը եւ ժխտը կարողա-
նալ արուեստին տալու համար։

Գոյնը Թրնորի համար ամէն ինչ էր.
կ'ըսէր.— «Ամէն զգացում զոյնով կարելի
է արտայայտել. պայծառ եւ զունազեղ
զոյները մարդուս մէջ զուարթ զգացում-
ներ կ'արթնցնեն, ինչպէս եւ աղօս ու
մօտի գոյները՝ ախուր զգացումներ»։
Փոխանակ ինք բնութեան հպատակելու
եւ պարզօրէն ընդօրինակելու բնութիւնը,
զայն կը ձեւէր իր զգացումներուն վրայ։
Անգամ մը, տիկին մը Թրնորի նկարները
դիտելէ ետք, կ'ըսէ.— «Բայց ես բնու-
թեան մէջ առաջինս գոյներ չեմ տես-
ներ»։ Թրնոր կը պատասխանէ.— «Ձէք»
փափաքեր որ կարող ըլլայիք տեսնել...

Իր աշխատելու ձեւն էր բնութենէն
ուրուագծեր եւ ձօթեր ընել եւ անոնց
վրայէն կազմել իր նկարները։ Իր գոյ-
ները լոյսով ողողուած՝ պայծառ են ու
կենդանի, արդիւնք են իր աշխատելու
ձեւին։ Տպաւորապաշտութիւնը գիտա-
կանօրէն առաջին անգամ Թրնոր զգաց
եւ գործածեց իր արուեստին մէջ. իրմէ
փոխանցուեցաւ Փրանսական նկարչու-
թեան մէջ եւ անկէ տարածուեցաւ ամէն
կողմ։

Իր գլխաւոր գործերը արտադրեց 60
տարեկանէն ետք։

Իր չծախուած բոլոր գործերը կտա-
կով մը թողուց Նեշըմըլ Կէլթրիին եւ դը-
րամական հարստութիւնն ալ՝ իրր հիմ-
նադրամ, անոր եկամուտով օգնելու հա-
մար աղքատ նկարիչներու։

Դեկտեմբերի երեկոյ մը, պատուհա-

նին ջով նստած վերջալույս մը դեմեկով կը մեռնի:

ԳՈՆԱԹԱՊԼ. 1776-1835.— Իր ազգեցութիւնը որոշ եւ տեւական եղաւ Ֆրանսական բնակարարութեան մէջ:

Պատճառ եղաւ կազմաւորումն նըկարելներու այն խմբակին, որ վերջը ճանչցուեցաւ իբր Պարպիզոնի խմբակ:

Իր ժամանակաշրջանին Ֆրանսական բնակարարութիւնը միօրինակ, չոր և դասական վիճակի մէջ կը գտնուէր: Գոնաթապլ կը առաջինը իր նկարներուն մէջ օրուայ եւ պահի լոյսերը, ժամանակի, եղանակի եւ միջավայրի գոյները ցուցադրող:

ԷՆԿՐ. 1780-1867.— Ծնած Մոնթպան, տասներեք տարեկանին Փարիզ կ'երթայ եւ Տափիտի աշակերտ կ'ըլլայ: Իր վարպետին նման դասական արուեստով սնած, ամբողջ ուշադրութիւնը ձեռի գեղեցկութեան եւ անթերի զծագրութեան վրայ կը կենդանացնէ: Իր գործերուն մէջ գոյնը ակար է, աւելի ներկուած զծագրութիւններն էն ժան նկարչութիւն: Իր դասականի անխախտ բժրոնողութիւնը պատճառ դարձաւ այն պայքարին, որ իր և Տըլաքրուայի միջեւ ծագեցաւ, եւ մինչեւ վերջ տեւեց: Երկուքն ալ Տափիտի աշակերտներ, բայց իստանբուլի և արուեստի բժրոնողութեամբ բոլորովին հակոտնեայ: Տըլաքրուայի արուեստը նոր, շարժուն ու գունազեղ, մինչ ինկը կ'ըսէր.— «Արուեստի մէջ, գոյներու տիրապետութիւնը տեղեկութիւն է, իսկ զօրաւոր շարժումնութիւնը՝ գեղեցկութեան անկում»:

ԳՐՈՐ. 1796-1875.— Ծնած Փարիզ, կերպասաւճառի մը զաւակը. ժամանակ մը իր չորսը գործը ընելէ ետք, կը թողու ու կը նուիրուի նկարչութեան. սկզբնական շրջանին, դասականի տիրապետութեան տակ նկարեց. 40 տարեկանին, իր ճամբան փոխեց. դասը ինքզինքն էր զգացումները արտայայտելու ինքնայատուկ ձեւը: Բնապաշտ բնակարարի մը, ան կարողացաւ մեղի տալ առաւօտը՝ իր մաքուր ու թարմ լոյսի եւ օդի

գեղեցկութիւնովը եւ երեկոն՝ իր խորհրդաւոր եւ յոգնած լոյսովը ու ճշուշովը: Մասնաւոր սէր ունէր գէպի ծառերը, մանաւանդ ուռնին, որ յաճախ գոյնը պաղ արծաթագոյնն է:

Գորոյի համար ձեւը եւ գոյնի առտիճանական հաւասարակշռութիւնը ամէն ինչ էին, իր երանգապնակը շատ պարզ, նկարներուն մէջ տիրապետող գոյնը պաղ արծաթագոյնն է:

Կը խուսափէր զօրաւոր գոյներէ. նըկարներուն մէջ չենք հանդիպիր գոյնի մը, որ ինքզինք ցոյց տայ. բոլորը մեղմ ու ներդաշնակ, իրար լրացնելով կազմած են ամբողջութիւն մը: Բարձր ու սղնիւ զգացումի, անձնան ներշնչանկութեան եւ հաւասարակշռութեան ցուցադրութիւնը. այս է Գորոյի արուեստը: Իբր մարդ բարութեան ու ազնուութեան մարմնացումը, բոլորի համար «Հայր Գորո» էր:

ՏԼԱՔՐՈՒԼ. 1798-1863.— Ծնած Եւրանթո, Փարիզի մօտ, տասներեք տարեկանին կը հետեւի նկարչութեան, աշակերտ կ'ըլլայ Տափիտի, 1822-ին երբ զսանչորս տարեկան էր, իր առաջին նկարը «Տանգէ եւ Վիրգիլիոս» ցուցադրութեան դրաւ, որը մեծ հետաքրքրութիւն եւ ազմուկ բարձրացուց: Հետաքրքրութիւն երիտասարդ նկարչներու կողմէ եւ ազմուկ ու պայքար՝ դասական կողմուած նկարչներու կողմէ, որոնց գլուխը կանգնած էին Տափիտ եւ ինկը, կոչելով ղինք գինով ու խնթ...:

Տաքրուա առաջինը եղաւ ըսող. «Արուեստի մէջ տեղեկութիւն ու գեղեցկութիւն չկայ. երբ որեւէ բան գեղարուեստական կերպով արտայայտուած է՝ գեղեցիկ է»: Ու այդպիսով կը գնէ արդիական արուեստի տան հիմնաքարը:

Վարպետ գունազէտ, թէեւ տեղ տեղ իր զծագրութիւնները անհոգ՝ բայց անվախ, համարձակ եւ գիտակցօրէն գիտցաւ գործածել իր գոյները որոնք թարմ են, պայծառ ու կեանքոտ:

ՄԻՅԷ (Փալմ Ֆրանսուա). 1814-1875.— Ծնած Կրիւշի գիւղը, Կրէյի մօտ, նորմանտի մէջ 4 Հոկտեմբեր 1814-ին:

Մանկութենէն ա՛նք ցոյց կու տայ նկար-
չութեան: Կ'երթայ Փարիզ արուեստը
կատարելագործելու: Զգուած Փարիզի
քաղաքին կեդո՛ւ ու հիւանդ կեանքէն, 34
տարիքին իր կնոջ եւ դասակներուն հետ
փոխադրուեցաւ Պարիզոյն, ուր ապրե-
ցաւ ու նկարեց իր կեանքի վերջին 27
տարիները եւ հոն մեռաւ: Ինչպէս ար-
ուեստով, իբր մարդ ալ պարզ, խոր մը-
տածող, ազնիւ հոգի եւ վեհամէն:

Իր նամակներէն մէկուն մէջ ուղղը-
ւած իր բարեկամին, Միշէ առպէս կը
գրէր. «Կեանքը իր զուարթ կողմը ցոյց
չտուաւ ինձի... Միակ զուարթութիւնը
որ տեսայ, լուռ հանգստութիւնն էր
անտառին ու մշակուած դաշտերուն: Հոն
տեսայ մարդկային կերպարանքներ, ո-
րոնք կը փորեն, կը հերկեն, կը կտրեն
ու կը կապեն. այդ մարդկային կերպա-
րանքներէն նախ մէկը, օպա միւսը աշ-
խատանքի վրայ ծուած մարմինը կը շոտ-
կէ, ձեռքով ճակտի քրտինքը կը սրբէ...
Ատրկա ինձի համար ոճանչելի բանաս-
տեղութիւն է, մշակ մարդկութեան...»

Այս բանի մը տողերուն մէջ պատ-
կերացած կը տեսնենք Միշէն եւ իր ար-
ուեստը: Ինքն ալ մշակ, ինքն ալ ցանեց
ու հնձեց եւ իր մարմինն ու հոգիին մէջ
ղաց պեղեցկութիւնը հողին ու աշխա-
տանքին, որոնք այնքան պարզ, որոշ,
տպաւորիչ ու ազնիւ գեղեցկութեամբ մը
պատկերացուց. գեղեցկութիւն մը որ կը
տանի ժեզ յունական արուեստի գեղեց-
կութեան եւ վեհութեան, ինչ որ փորձե-
ցին ու չյաջողեցան իր ժամանակակից
դասական կոշուած բոլոր նկարիչները:
Մահէն ետք միայն կրցան զնահատել ա-
նոր արուեստի արժանիքները:

ՈՒՍԹՍ (Vostokhov). 1817-
1904:— Մնած լոնսոն. ժամանակ մը կը
յաճախէ Աբաջական Ակադեմիան. բայց
աւելի ուշադրութիւնը դարձուցած թան-
գարանին մէջ գեղեցկուած յունական հը-
նութիւններուն: մասնաւորապէս Ֆիթիա-
սի դործերուն: Կ'այցելէ Բուսիա վենե-
տիկեան նկարիչներու դործերը եւ դոյ-
ները ուսումնասիրելու:

Իր ամբողջ իտէալն էր, ինչպէս ինք

կ'ըսէ, նկարներ չշինել լուռ աչքը դիւթե-
լու համար, այլ թելադրել մտքեր եւ
գգացումներ արտայայտել, որ մարդոց
երեւակայութեան խօսի եւ ցոյց տայ
մարդկութեան մէջ գտնուած բոլոր ազ-
նւթութիւնները:

Թինթերօթթոյի նման Ուսթան ալ
շատ անգամ արձանիկներ կը շինէր իր
ուզած միտքը արտայայտող եւ անոնցմէ
կը նկարէր:

Իբր դիմանկարիչ՝ գլխաւոր վարպետ-
ներու կարգին կը դասուի:

Փիլիսոփայ, խորհրդապաշտ ու բա-
նաստեղծ, իբր մարդ ու իբր նկարիչ:

ԳՈՒՐԳԷ. 1819-1877:— Մնած Օր-
նանս, Տուալ: Փարիզ կ'երթայ իրաւա-
բանութիւն ուսանելու: Հոն հասնելէ ետք
միտքը կը փոխէ եւ նկարչութեան կը հե-
տեւի:

Իրապաշտ նկարիչ մը, իրեն համար
մարդու նկարագիրը գեղեցկութենէն նա-
խընտրելի էր. ինչ որ կը տեսնէր ան կը
նկարէր. կ'ըսէր.— «Նիթէ կ'սպէք դիցուա-
հի նկարեմ, ինձի դիցուհի մը պէտք է
ցոյց տաք»:

Թէեւ իրապաշտ, բայց իր արուես-
տը տպաւորական էր. ան ընտելիւնը իր
մանրամասնութիւններով չէր աւանդ, այլ
ապաւորող իր ձեռով ու գոյնով: Գոյն-
պէ նոր ճամբայ մը կը բանար իրմէ վերջ
եկող նկարիչներուն: Կը մեռնի Զուլիցե-
րիոյ մէջ:

ԲՈՅԱ ՊՕՆԵՕՐ. 1822-1899:— Մնած
Պոռտո. արուեստագէտ ընտանիքի մը
դասակը: չորս տարեկանին արգէն գծել
կը սկսի եւ մասնաւոր ա՛նք ցոյց կու տայ
ղէպի կենդանիները:

Երբ եօթ տարեկան էր ընտանիքով
փոխադրուեցան Փարիզ:

1840-ին, երբ տակաւին տասնութ
տարեկան էր նկար մը դրկեց Սալօնին,
երկու նապաստակներ, որ ընդունուե-
ցաւ եւ ուշադրութիւն գրաւեց: Իրեն հա-
մար արուեստանոց մը շինեց Գոնթէն-
Պլոյի տնտաւին մօտ, ուր բնակեցաւ ու
նկարեց իր այնքան շատ սիրած կենդա-
նիկները:

Ունէ նկարիչ չկրցաւ հասկնալ ու պատկերացնել կենդանին որը «այնպէս՝ ինչպէս այս առիդ ու տոնական խառնուածքով կին նկարիչը»:

ՄՕՆԹԻՉԵԼԻ (Ատալֆ). 1824-1866.— Երանտ Մարտիլ: Իր սկզբնական շրջանին ան զեղեցկութիւն ու ներդաշնակութիւն փնտռեց դժի մէջ, որ վերջը թողուց ու ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուց գոյնի վրայ: Գոյնի երգիչ՝ իր նկարները դոյնի քանաստեղծութիւն ու երաժշտութիւն են:

Հակառակ իր թշուառ ու տխուր կեանքին, իր արուեստը հարուստ եւ ուրախ կեանք մը ցոյցուց: Ան շատ քիչ անգամ վրձին գործածեց, գոյնները առանց խառնելու, դանակով կամ մատով կը տեղաւորէր կտաւին վրայ, որմէ կը ստանար գունարազարդ զեղեցկութիւն մը, վառ ու ներդաշնակ, որ դիտողը կը տանէր երազային նոր աշխարհ մը: Իր գլխաւոր գործերն են՝ Ֆլէք Վալանթ եւ կարգ մը բնանկարներ: Մօնթիշելին բընութիւնը չընդօրինակեց, այլ այդ բնութիւնը միջոց գործածեց իր գոյններու լեզուն ու զեղազիրտական ներդաշնակութիւնը ստեղծելու:

Իր ամբողջ կեանքը ազգաստութիւն ու թշուառութիւն եղաւ Փարիզի մէջ. շատ գիշերներ փողոցները կամ փլատակ դռն պարապ առնենք մէջ անցուց:

Իր մահէն վերջ միայն փնտռեցաւ ու քննահատուեցաւ, ու իր արժանի տեղը գիտեցաւ արուեստի պատմութեան մէջ:

ՓԻԻԻՍ ՏԸ ՇԱՎԱՆ. 1824-1898.— Երանտ Լիոն. ճարտարագէտի մը զաւակը. Լիոնի մէջ նախնական կրթութիւն մը ստանալէ ետք՝ կ'ընթաց Փարիզ ճարտարագիտութեան հետեւելու. հիւանդութեան մը պատճառաւ ճամբորդութիւն մը կ'ընէ. դէպի Իտալիա: Վերադարձին կ'որոշէ նկարչութեան հետեւիլ: Երանտ չէ իր արմատները, ըզգացումի, գոյնի ու ձեւի ինքնայատուկ արտայայտութեամբ մը, որը շատ լաւ կը յարմարի որմնանկարչութեան, եւ կը

ներդաշնակուի այն շէնքին ու միջոցին, ուր տեղաւորուած են. զարգացած ու ազնիւ հոգիով արուեստագէտ մը, դիտակից իր ըրածին. իր գործերուն մէջ կը տեսնուի յունական բարձր արուեստին մօտեցող հոգի, զեղեցկութիւն եւ զգացում:

Նախն նոր դարազուլի մը քաջաւորմանկարչութեան արուեստին ու անդերազանցելի մնաց:

ԺԵՐՈՄ (Ժան Լէօն). 1824-1903.— Երանտ Վիգուլ. գոհարաւաճառի մը զաւակը. տանընթաց տարիներին կ'երթայ Փարիզ ու աշակերտ կ'ըլլայ Գեղարուեստից Վարժարանին:

Արուեստով՝ զասականի եւ իրապաշտութեան խառնուրդ մը: Նկարեց պատմական նիւթեր. հետաքրքրուած էր Արեւելեան նիւթերով. Պոլիս եւ Գահիրէ հղած առին, տուաւ շատ մը արեւելեան պատկերներ: Գիծը եւ գոյնը խրանալով եւ ուշադրութեամբ գործածող, ուշադրութիւնը կեդրոնացուց անյի մանրամասնութիւններու. իր գործերէն կը ստանանք նրբութեան զեղեցկութիւն մը. գործերը նախ մեղի ցոյց կու տան ներկի վարպետ գործածութիւնը, ապա արուեստի զգացումը: Փորձեց նաեւ արձանագործութիւն, որուն մէջ միջակ մընաց:

ՓՕՋԷՖ ԻՈՐԱՅԷԼ. 1824-1911.— Երանտ Կրօնիկըն. նախնական կրթութիւնը Ամսթերտմի մէջ ստանալէ ետք՝ կ'երթայ Փարիզ արուեստը կատարելագործելու:

Արուեստով Բէմպրանթի եւ Միլէի խառնուրդ մը, բայց ոչ անոնց բարձրութեամբ: Իր նկարներուն նիւթը ընդհանրապէս կը ներկայացնէ հոլանտացի ազգային դասը, եւ մասնաւորապէս ձկնորսները եւ հրէական կեանքը:

Կարող էր իր նիւթը յուզող ու խօսող ձեւով պատկերացնել, որմէ դուրս իբր նկարիչ ինքնայատուկ ու նոր շէնք ունէր:

ՏԱՆԻԷ ԿԱՊՐԻԷԼ ՐՕՋԷԹ. 1828-1882.— Երանտ Լիոնոն: Հայրը խաւաքի

Հայրենասէր մը, ապաստանած Անգլիա եւ Քիլնկո Գոլէճի մէջ խտրելէն լեզուի ուսուցիչ եւ մասնագէտ Տանդէի գրական-հոսթան:

Արուեստի ուսմունքը ստացած Աբաթալկան Ակադեմիայէն, երազուն ու տխուր խառնուածքով մէկը, իր արուեստին մէջ ոչինչ աշխարհային ու մարմնական. ան աւելի կը խօսի մաքուր հոգիին եւ կու գայ անծանօթ անդերէ: Նկարիչ ու բանաստեղծ, երկու արուեստներուն մէջ ալ արտայայտեց զրեթէ նոյն զգացումները:

Խորացաւ Տանդէական երեւակայութիւններու եւ գգացումներու մէջ, որոնք ինչպէս իր արուեստին, նոյնպէս ալ իր կեանքին վրայ որոշ ազդեցութիւն թողուցին:

ԵՏՈՒԱՐ ՄԱՆԷ. 1832-1883.— Մնած փարիզ, դատաւորի մը զաւակը. նախնական կրթութիւնը կը ստանայ Գուբիւր արուեստանոցին մէջ, Կոյսցէլէ Հոլանտա, Գերմանիա, Իտալիա եւ Սպանիա, ընդօրինակելով եւ ուսումնասիրելով Բէմպրանթի, Քլէյնի, Թինթրոթթոյի, Վեյլզելի եւ Կոյսյի գործերը, որոնց ազդեցութիւնը կ'երեւի իր սկզբնական գործերուն մէջ:

Տպաւորապաշտ արուեստի զլիսաւոր գերակատարներէն մէկը. անոնք կ'ըսէին. «Բնութիւնը պէտք չէ նկարենք ինչպէս որ կը տեսնենք, այլ պէտք է ներկայենք այն ապաւորութիւնը, որ կը թուէ մեր վրայ»: Մանէի համար նիւթէն աւելի նկարելու ձեւն էր կարեւորը, փնտռող հոգի մը, որ ինքնայատուկ ու մեծ բան չթողուց իր հոտին, ինչ որ ներկայութեան մէջ ինք կ'ընէր ու կը խօսէր սեփականացնելու մտադրութեամբ. նոյն բանը իրմէ առաջ նկարիչներ ըրած էին առանց խօսելու:

ԵՏՈՒԱՐՏ ԶՕՆ ՊԸՐՆՍ. 1833-1898.— Մնած Պրիմինկամ. արուեստի նախնական ուղղութիւնը կը ստանայ Բօգէթ-

թիէն: Անոր համար նկարը բնութեան ընդօրինակութիւն մը չէր, այլ սովորականէն տարբեր գեղեցկութիւններու եւ բանաստեղծական զգացումներու առաջնորդելու միջոց, երազային, գեղեցիկ ու երեւակայական աշխարհ մը, Պօթիչելի յիշեցնող: Մեկամաղձոտ, խոհուն եւ հոգեկան զգացումներ թրթռացնող արուեստով մը:

ՏԷԿԱ. 1834-1917.— Մնած Փարիզ: Գծի ու շարժումի վարպետ. ծանօթ իր ձիարշտանքով ու պարուհիներով, որոնց մէջ այնքան բնական, ուժեղ ու ինքնայատուկ արտայայտեցաւ, որք իրմէ առաջ եղած արուեստին հետ կապ չունէր եւ ոչ ալ իրմէ վերջ արժանի հետեւորդներ ունեցաւ:

Իր պարուհիները ամբողջ շարժում, կեանք ու խորհուրդ են. իրենց առօրեայ կեանքին, աշխատանքին եւ մտահոգութեան մէջ:

Ինչ որ ուրիշ նկարիչներ կը ձգտէին երեւան բերել գոյնի եւ ձեւի տը պատրաստելու արտայայտութիւններ, Տէկայի արուեստը շարժումի ապաւորապաշտութիւնն էր, այնքան ժստաւ, բընական ու խօսող: Ան արուեստի միջին համբան բռնեց. ոչ դասական էր եւ ոչ ալ Ժայռայի նոր, որոնք իր ժամանակաշրջանին արուեստի կեանքին մէջ իրար կը բախէին: Պայքարէ խուսափեցաւ. առանձնացած ինքն իրմով ու արուեստով՝ արտադրեց:

Կեանքը Տէկայի համար ո'չ բարոյական էր եւ ոչ ալ անբարոյական, այլ բնական կեանք եւ հետաքրքրական՝ իր բոլոր կողմերով: Իր արուեստով կ'արտայայտէր յոռետեսութիւն եւ տեսակ մը փիլիսոփայող տխուր հեղինակ կեանքին հանդէպ: Իր հոտին թողուց անհամար դժագորութիւններ, իւղանքներ եւ փառախելներ:

(Վերջը յաջորդով)

ԾՂ. ԳԱՊԱՐԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր մտածումին լեզուական արտայայտությունը կամ, ուրիշ խոսքով մտածումին խոսքի վերածումը հոգեբանական որոշ օրենքներու մեքենական դործունէութեան կը հսկատակի, ինչ որ կը նշանակէ թէ լեզուական երեւոյթները քերականական ըլլալէ առաջ հոգեբանական երեւոյթներ են: Սակայն քերականութեան զբաղմունքը կ'անգիտման լեզուական երեւոյթներուն իմացական խորքն ու ներքին փոխադարձ առնչութիւնները եւ իրենց սահմանումներով ու բացատրութիւններով անոնց արտաքին քառական երեսին վրայ կը դեղերին: Ու թէեւ ճիշդ է որ մտածումին նիւթական կաղապարը կը բաղկանայ բառերէ, սակայն ասոնք իրենց վստահուած արժէքին հաստատարի մասնադասակները չեն միշտ: Մասնաւոր ուր քերականութիւնները բառը նկատի կ'առնեն ըստ ինքեան, այսինքն՝ իր անհատական գոյածեւովը վերացնելով զայն խօսքի դրութենէն եւ այսպէսով ի յառաջագունէ իսկ ճշգրտով անոր արժէքը, մինչդեռ բառը կայ իրրեւ խօսքի բաղադրիչ տարր եւ անոր քեր. նշանակութիւնը խօսքին իմացական դրութեան մէջ է որ երեւան կու գայ:

Մենք տեսնե՞ք արդէն որ քերականութեան զբաղմունքը, անոնց մէջ ըլլալով բարձրագոյն ուսման յատուկ պատրաստութիւնները անգամ, լեզուին զանազան կալուածներէն հաւաքուած մակերեսային գիտելիքներու խառնակ շտեմարաններ են: Կը հառնեն լեզուին յատուկ բոլոր երեւոյթներէն՝ առանց սակայն անոնց խաղութիւնը բացատրելու: Կը թուեն Վաստանք բանիքին տեսակները առանց քաղաքներու սակայն թէ ի՞նչ արժէք ունին

այդ տարրերը լեզուի ընդհանուր համակարգութեան մէջ. թէ անոնցմէ իւրաքանչիւրը իր իմացական խորքով առարկայական աշխարհի ս'ը իրականութեան կը համապատասխանէ, թէ ի՞նչ յարում ունին քեր. այդ տեսակները իրարու հանդէպ: Կը խօսին բառերուն քեր. ձևերէն (թիւ, դէմք, հոլովներ, բայական ձևեր եւայլն), բայց չեն բացատրեր թէ ի՞նչ պահանջն ծագում կ'առնէ քեր. կտրվել կամ բառերուն քեր. ձևը եւ թէ ի՞նչ է իւրաքանչիւր ձևի նշանակութիւնն ու դերը խօսքի կազմութեան մէջ. թէ ի՞նչ կապ ունի քեր. ձևը քեր. տեսակին հետ: Կու տան քեր. պաշտօններուն անունները, բայց առանց բացատրական սահմանում մը տալու քեր. պաշտօնի մասին ընդհանրապէս եւ առանց բացատրելու թէ հոգեբանական ի՞նչ պահանջի, իմացական յարաբերութեան ի՞նչ եղանակի կը համապատասխանէ քեր. իւրաքանչիւր պաշտօն. թէ ինչով կը տարբերին խնդիրն ու վերագրելը իրարմէ. թէ ի՞նչ առանձնատուր կ'իմացումներով կը պատրուէին խնդիրին եւ վերագրելին տեսակները. ի՞նչ կապ ունի քեր. պաշտօնը քեր. տեսակին եւ ձևին հետ, եւայլն. եւ վերջապէս այդ զբաղմունքը կ'անգիտման այդ բոլոր երեւոյթներուն ներքին կապը, լեզուին մեքենական միութիւնը:

Ըսինք նաեւ որ մեր դարուն ակնդրներէն ուսումնասիրական մասնաւոր հետաքրքրութեան առարկայ դարձաւ լեզուին շարահիւսակայ յօգնականքը, որ մինչ այդ դրեթէ անտեսուած կը մնար անոր կողմնակի երեւմբում. առժամանակ մինչդեռ տեսումներով ինչնեքու մէջ: Լեզուին զանազան կալուած-

ներուն յատուկ այդ հետազոտութիւններէն, այդ ուսումնասիրական մասնատումներէն վերջ անհրաժեշտ պիտի դառնար այլեւս այդ աշխատանքներուն արդիւնքները համադրել՝ կազմելու համար քեր. ամբողջական դրութիւն մը, որ, թէկուզ տուեալ լեզուի մը վրայ ձեւակերպուած, իր ընդհանրութեանը մէջ որեւէ լեզուի պատշաճելով՝ պիտի ներկայացնէր մարդկային լեզուին իմացական յօբինուածքը: Որովհետեւ՝ մտածումին արտայայտութեան հիմնական եղանակները նոյնն են բոլոր լեզուներուն համար՝ անկախաբար անոնց ձեւական մասնայատուկութիւններէն:

Քերականութեան գրքերուն անբաւականութենէն զգուշ լեզուաբան-իմաստաւէրներն էին դարձեալ որ այս առաջադրութիւնը իրագործելու պիտի ձգտէին՝ այս անգամ քննութեան առարկայ դարձնելով լեզուին իմացական խորքը, այսինքն՝ անոր էությունն իսկ: Ուսումնասիրուեցան, մտածումին կերպարանութիւններուն զուգահեռաբար, անոնց լեզուական տարադիւրիւր, խօսքի անդամներուն ներքին յարաբերութեանց զանազան եղանակները, շարունակական երեւոյթները՝ իրենց իմացական յատկին վրայ: Հեղինակներէն ոմանք մինչեւ լեզուին հոգեկան ընդերքը խորացան՝ առաջադրելով երեւան հասել մեր լեզուական արտայայտութիւնը վարդ իմացական մեքենային գործունէութեան հաստատուն օրէնքները:

Լեզուին իմաստասիրական այս հետազոտութիւնները բաւական բան բացատրեցին անոր ներքին երեւոյթներէն, ինչ որ կը նշանակէ ըսել նաեւ անոնց քեր. արտայայտութիւններէն: Կարգ մը շարահետական խնդիրներ իրենց ընդունելի լուծումը գտան արդէն: Եւ եթէ մինչեւ այսօր կարելի չեղաւ լեզուի հոգեկան մեքենային հիմնական օրէնքները վերջնականապէս ձեւակերպուած դիտական քերականութեան մը կազմութիւնը, քակած զէպի լեզուին ներքին աշխարհը փոստաբաժնի թափանցումները

այդ առաջադրութեան ճամբան հարթեցին:

Լեզուին ներքին կեանքը խուզարկող այդ գործերուն մէջ ուշադրաւ է մեր օրերու հեղինակներէն G. Galichet ի Eesai de grammaire psychologique-ը, որ կը ձգտի քերականական երեւոյթները հոգեբանական տուեալներով բացատրել՝ մեկնելով առարկայական աշխարհէն մեր իմացումին անդրադարձող անմիջական ծանօթութիւններուն սկզբնական կալուածէն:

Ներկայացնենք այդ երկը իր ընդհանուր դժեբով, իր ծրագրային համառօտ պատկերովը:

Անոր գլխաւոր բաժինը իր ներածականն է, որ լեզուի հիմնական արժէքներուն նուիրուած քննական ընդհանուր տեսութեամբ մը արդէն իսկ կը բացատրէ հետագայ բովանդակութիւնը: Այդ արժէքները երեք են. քերականական տեսակները (խօսքին բաղադրիչ տարրերը՝ մասունք բանի), քեր. կապերը (տեսակներուն յարաբերական մեծերը) եւ քեր. պաշտօնները կամ յարաբերութեամբ եղանակները: Այս երեք արժէքներուն մեքենական գործակցութեամբն է որ կը զեկավարուի մտածումին լեզուական արտայայտութիւնը: Գէթ թռուցիկ ակնարկ մը նետենք անոնցմէ իւրաքանչիւրին վրայ՝ բացատրական օրինակները տալով մեր լեզուէն:

1. Գեր. տեսակները կը համապատասխանեն մեր մտածումին տիպարային բաղադրիչներուն՝ մեր հիմնական գաղափարներուն, որոնք արտաքին աշխարհէն անդրադարձումներ են մեր իմացումին վրայ:

Երբ դիտենք մեզ շրջապատող առարկայական աշխարհը, կը գտնենք որ իրերու եւ երեւոյթներու յարաբերութեանց ցանցին մէջ երկու էական տարրեր. կը կազմեն տնոր կեդրոնական հանգույցը. ասոնք են ցոյալը (être) և գործը (procès) և քերականութեան այս երկու տարրեր տեսակները՝ տեղադրաբար չէ որ կը ներկայանան ար-

տաքին աշխարհին մէջ, այլ իրենց ան-
խղճելի դոյաւանդութեամբը։ Աւանց մեր
մտքին անջատողական՝ վերացական գոր-
ծողութեան (abstraction) կարելի չէ
դոյակը ըմբռնել եղելութեան ընթացքէն
գուր, եւ կարելի չէ եղելութիւնը ըմ-
բռնել առանց իրեն ծագման մեկնակէտ
հանդիսացող դոյակին։ Երբ կը տեսնենք
մարդու մը քալելը, մարդը եւ քալելը
ուրոյն իրականութիւններու պարզ ա-
ռելնթաղանթութեամբ մը չէ որ կը ներ-
կայանան մեր իմացումին, այլ կ'անդ-
րադաւան իրենց ձոյլ միասնութեամբը։
Բայց մեր լեզուական արտայայտութեան
վերլուծական եղանակով մտածումին
միտքիւնը խօսքի տարազին մէջ կը վե-
րածուի իր բազմաբնի տարբերուն եւ
մենք կ'աւանանք երկու ուրոյն եղբերու
քեր։ միութիւն մը՝ մարդը կը քալէ։ Այս-
պէսով քեր։ զեննի վրայ երեսուն կու
զան խօսքի քաղաքիչ տարբերուն երկու
վիճաւոր տեսակները։ Ընտել, որ կը
համապատասխանէ արտաքին աշխարհի
դոյակին եւ քայլը, որ կը համապատաս-
խանէ եղելութեան։

Արդ՝ համապատասխանելով դոյակի
զազափարին՝ անունը միջոցին մէջ տեղ
բանող կայուն իրականութիւնը կը նշէ։
խօսքին անջատարար, իր վերացական
դոյածեւով, ինքնարու, զազափար մը։
Անունը քեր։ զեննի վրայ կ'օժտուի դո-
յակին բոլոր առանձնայատկութիւննե-
րով։ Գոյակը, իր բոլոր ենթատեսակ-
ներուն վրայ, մեզի կը ներկայանայ ան-
հատական միութիւններով, ինչ որ կը
նշանակէ թէ ենթակայ է համարման եւ
կարգաւորման։ անունն ալ կ'աննէ, ու-
րեմն, թիւ եւ թուական կարգ (երեք
ծառեր, երրորդ ծառ)։ Գոյակը կ'ունե-
նայ յատկանիչ կամ կրնայ դատարարել,
մասնաւորութիւն իր շրջապատին մէջ։ Հա-
մապատասխանաբար անունն ալ կ'աննէ
որակական կամ որոշիչ վերադիր (վիթ-
խարի ծառ։ ու ծառը, մեր ծառերը)։
Գոյակը կ'ըլլայ եղելութեան ծագման
կամ յանգման առարկան, անունն ալ
խօսքին մէջ կ'աննէ ենթակայի կամ խըն-
դիրի պաշտօնն եւայլն։

Բայց համապատասխանելով եղելու-
թեան զազափարին՝ ժամանակին մէջ ըն-
թացող տեղային իրականութիւնը կը
նշէ։ Երբ այդպիսին՝ բայց քեր։ զեննի
վրայ կ'արտայայտուի ժամանակի, տե-
ւադութեան, արտայայտութեան եղանա-
կի եւ կերպի առանձնայատկութիւննե-
րով (թիւն եւ զէմքի յատկանիչներ կը
ստանայ ենթակայ անունն ներդրածուե-
լով)։

Շատ անգամ հարկ կ'ըլլայ որ այս
երկու հիմնական տեսակները նկատի
առնուին իրենց յատկանշուած կամ զա-
տրուշուած դոյածեւով։ այս պարագա-
յին երեսուն կու զան համապատասխան
քեր։ տեսակները՝ մակամուկը (ածա-
կան), որ կը յարի անունին (ինչպէս վե-
րի օրինակներն ալ ցոյց կու տան, հոյա-
կապ չէնք - միւս չէնք եւն)։ եւ մակ-
քայլը որ կը յարի բային (արագ անցաւ -
չաա յոգնեցայ, զեւ կը խօսի եւն)։
Այս երկու տեսակները առկա թովան-
դակութեամբ տարբեր են, որոնք առանց
իրենց հիմնական եղբին դոյութեան յե-
նարանէ կը զրկուին։ Գոյակն ու իր յա-
կանիչը, եղելութիւնն աւ իր յատկանիչը
արտաքին աշխարհի մէջ կան ձոյլ միտ-
քիամբ մը՝ իրեն իրականութեան մէջ
դոյածեւը, բայց հոս եւս մեր լեզուական
արտայայտութեան օրէնքը կը կատարէ
աւարադարձութիւն եւ վերամիտւորման իր
զերը յատկանիչն ու յատկանշուող իրա-
կանութիւնը ներկայացնելով անջատ եղ-
բերու քեր։ միութեամբ եւ այսպէսով
իրականութեան դոյածեւը ցայտուն զա-
ծելով։

Վերջապէս կան նաեւ վերոյիշեալ
տեսակներուն միջեւ օղակ ծառայող երկ-
րորդական տեսակներ, որոնք մեր լեզ-
ուական մտածողութեան վերացական
ստեղծումներն են՝ իբրեւ հանդայնիւր զա-
զափարներու յարաբերութեան ցանցին
մէջ։ Ընդհանրապէս (նախադրութիւն,
յնապարհութիւն) եւ շաղկապ։

Յնթ. ա) Դերմանը, ըլլալով միայն միւս
տեսակները փոխարինող եւ անոնց շարահետա-
կամ յարաբերութիւնները ստեղծող համարժէշ

Ասոնք են զեր. տեսակները կամ խոսքը կազմող տիպարային տարրերը:

Արդ՝ այս տարրերը իրարու կը յարին համաձայն տեսակային իրենց առանձնայատուկ բնոյթին, իրարու հանդէպ ունեցած յարաբերական հակումին: Գեր. դեանի վրայ անունն ու բայը միասնութիւն մը կը կազմեն ինչպէս գոյական ու եղելութիւնը արտաքին աշխարհի մէջ. մականունը անունին, մակբայը բային կը յարի, ինչպէս յատկանիշը գոյական կամ եղելութեան հետ: Իսկ տեսակներուն այս յարումը, եւ ասով խօսքին կազմութիւնը, կապ չունի բառերուն անհատական մասնաւոր նշանակութեան հետ: Հարկաւ տուեալ խօսքի մը մասնաւոր՝ պարագայական իմաստն է մեզ չափազորողը, սակայն խօսքին զեր. ձեւաւորումը անկախ է բառերուն անհատական բովանդակութենէն: Երբ կ'ըսենք ծառը կը շարժի, այս երկու տարրերը մտածման եւ խօսքի իրենց միութիւնը կը գտնեն, ո՛չ թէ որովհետեւ մասնաւոր գոյակ մը եւ եղելութիւն մը կը նշեն, այլ որովհետեւ ընդհանրապէս գոյակ եւ եղելութիւն կը նշեն: Եւրահիստութեան օրէնքները անտարբեր են բառերու պարագայական նշանակութեան նկատմամբ. լեզուին բաղադրիչ տարրերը իրենց տիպարային մնայուն բնոյթով է որ իրարու կը յարին կազմելու համար մտածութեան վերջնական տարադր. խօսքին միութիւնը:

Եւ ստիկա անտիտարինելի առաւելութիւնն է մեր լեզուին: Ենթոգիւ այս առանձնայատկութեան է որ մեր լեզուական մտածողութիւնը նոյն տիպարին վրայ մեքենականօրէն կը կարգաւորէ ի-

րարմէ այնքան այլիմաստ խօսքի միութիւնները, որոնք զերականօրէն համարժէք են իրարու՝ կազմուած ըլլալով նոյն տեսակներու նոյն յարաբերութեամբ: Այսպէս՝ Մուշեղը յաշիմ է՝ Մարկոսը ապուշ է՝ երկինքը պայծառ է՝ գետինը ազտառ է հեւային՝ զերականական համարժէքներ են վերը յիշուած պատճառաբանութեամբ: Դարձեալ՝ քանադայն՝ ժողովուրդը աւարտեց՝ փոքորիկը ծառը տապալեց՝ կատու մուկը քոնեց հեւային՝ համատարազ խօսքերը համարժէքներ են: Եւ երեւակային իսկ դժուար է թէ ինչ դժուար է ճիշդ պիտի պահանջէր մեր լեզուական արտայայտութիւնը, եթէ երբեք մենք բոլոր մասնաւոր պարագաներուն համար մասնաւոր տարազներ յօրինելու հարկին առի ըլլայինք:

Խօսքը կազմող երեք հիմնական արժէքներէն ամէնէն էականը զեր. տեսակն է անշուշտ, որուն առկայութեամբ պայմանաւոր է միւս երկու արժէքներուն գոյութիւնը:

2.- Մենք տեսնեք արդէն որ խօսքը բաղադրող տարրերը իրարու կը յարին, ամէնէն առաջ, իրենց տեսակային առանձնայատկութիւններով՝ համապատասխանելով արտաքին աշխարհի իրերուն եւ երեւոյթներուն յարաբերութեանց: Բայց լեզուին այդ տարրերը իրենց պարզ առընթերադրութեամբ ընդունակ չեն իրարու յարելու եւ զեր. կապակցութիւններ, այսինքն՝ գաղափարներու բաղադրութիւններ յառաջ բերելու: Կամ ուրիշ խօսքով՝ բառական բոլոր տեսակները իրենց սկզբնական գոյածեւով խօսք կազմելու վճռական զօրութիւնը չունին: Իրրեւ օրինակ առնենք բառերու հետեւեալ շարքը. սաւառնակ ա մեկնիլ՝ հայաստան: Այս օրինակով, մեր լեզուական ըմբռնումին համաձայն, կ'ունենանք ուրոյն բառերու անկապակից առընթերադրութիւն մը: Իսկ եթէ փորձենք այդ տարրերուն մէջեւ իմաստային միութիւն մը գտնել, բազմակերպ յարաբերութիւններ կ'ընան առնել անոնք՝ յաճախ նոյնիսկ իրարու ներհակ-Մաւառնակ

տարբ. մը, լեզուն իր շարահիւսակամ յօրինումովն մէջ գիտող էքրակամբու կողմէ առաջինն էր. ահապ մը չի համարուիր:

բ) Ձայնարկութիւնը, ըստ իմենամ ըլլալով մոխրաւորութեան համարժէք արտայայտութեան եզրմակ մը եւ չունենալով շարահիւսակամ ա՛րեւէ յարում էր. այլ տեսակի ետ, էր. առաջինն տեսակ մը չի ձկնաւոր:

կը մեկնեցաւ Հայաստան.— Սաւառնա-
կով պիտի մեկնին Հայաստանէն.— Սա-
ւառնակով մեկնիմ Հայաստան.— Սաւառ-
նակով մեկնէ Հայաստանէն, եւայլն։ Եւ
ասիկա անոր համար որ առննթերադրու-
ած այդ տարբերը, ինչպէս օրինակնե-
րը ցոյց կու տան, խօսքի մեքենական
կազմին մէջ տարբեր տարբեր ձեւերով
կրնան արտայայտուիլ։ Գոյակը նշող ա-
նոնք կրնայ թուական տարբեր կարգե-
րով ներկայանալ՝ ըլլալով եզակի կամ
յուզնակի, տարբեր պարագաներու պատ-
շաճող յարաբերական տարբեր ձեւեր ու-
նել։ Եզակութիւնը նշող բայը կրնայ որ-
տայայտուիլ եղանակի, ժամանակի, թի-
ւի, դէմքի եւայլն տարբեր-տարբեր թե-
քական ձեւերով։ Եւ հետեւաբար անմի-
բառերու վերոյիշեալ շարքը չի կրնար
խօսքի վճռական ժուլթիւն մը կազմել,
որով իմաստ մը արտայայտել։

Արդ՝ խօսքի տարբերումը քեր. կա-
պակցութեան ծառայող այն տիպարային
ձեւերը, որոնք բառերու զանազան թե-
քամերովը կ'արտայայտուին, կը կոչ-
ուին ֆերականակամ կարգիք։

Քեր. կարգերը նապէս յատուկ են
քեր. գլխաւոր տեսակներուն, որոնք մեր
մտածման առեւալ դրութեան համապա-
տասխան պարագայական ձեւերով՝ կը
հանդերձուին խօսքի մեքենական կազմին
մէջ (*): Կը հետեւի որ քեր. կարգի մը-

տած կամ, այլ բացատրութեամբ, քեր.
ձեւաւորումը ստացած տեսակը ո՛չ թէ վե-
րացական մեկուսի գաղափար մը կը նշէ,
այլ գաղափար մը, որ մասնաւորապէս է
իրբեւ առեւալ մտածման մը բաղադրիչ
մէկ տարրը, այսինքն գաղափար մը՝ այլ
գաղափարներու հետ իր առնչութեան
մէկ կերպովը։ Որով՝ քեր. ձեւով հան-
դերձուած բառական տեսակը ինքնիրեն
ապրող լեզուական ուրոյն տարր մը չէ
այլեւս, այլ քեր. կապակցութեան մը
մէկ հզրը, վերջին հաշուով խօսքի կազ-
մին գործօն մէկ անդամը։ Իր կապակ-
ցութենէն անջատաբար անհկառ ասկախ
տարր մըն է, որ իր տուեալ ձեւովն իսկ
խօսքէն ներս իրեն սահմանուած տեղը կը
պահանջէ։ Այսպէս՝ «ծառ», «շարժիչ»
գոյակի մը եւ եզակութեան մը վերացա-
կան ընդհանուր գաղափարները նշող սե-
րոյն տարբեր են, որոնք իրենց այդ ըս-
կըզնական գոյածեւով ընդունակ չեն
կապակցութեան մտնելու այլ տարբերու-
հետ։ Անոնք լեզուի բառարանին հում
տարբեր են տակաւին։ Սակայն ծառը,
ծառիմ, ծառերէմ եւն. — կը շարժի, շար-
ժեցաւ, շարժէ եւն.՝ իրենց թեքում
ձեւերով գործօն դրութեան մէջ մտած
(actualisé) տարբեր են, որոնք նոյն
գաղափարները կ'արտայայտեն մտած-
ման գրութեան մը մէջ անոնց օահման-
ուած յարաբերական դիրքով։ Քերական-
օրէն մշակուած այդ տարբերը խօսքի
չէնքին աւաղուած քարերն են, որոնք ա-
նոր սարքուածքէն դուրս գոյութեան ի-
րաւունք չունին։

Ինչպէս կը տեսնուի, քեր. կարգերը
վճռական դեր ունին լեզուի մը մեքենա-
կան յօրինուածքին մէջ՝ ըլլալով ամէնէն
dynameique ազդակը խօսքի կազմու-
թեան, որովհետեւ անոնք են որ քեր.
տեսակները գործօն դրութեան մէջ կը
դնեն յարաբերութեան որոշ եղանակե-
րով։ Անոնցմով է որ քեր. տեսակները
ընդհանուր գաղափարներու վերացական
ոլորտէն կը փոխադրուին մասնաւորին՝
թանձրացեալին (concret) քերական-
կան կալուածքը։ Անոնք են, մասնաւորապէս,

Ծնթ.— Խօսքի տարբերիմ մակամասնաւոր մակ-
բայը իրենց առկա թովմանկութեամբ արդէն
յարաբերակամ մերթիմ ընդունակութիւն ունեցող
տարբեր են եւ պէտք չունին մի փոխելու իրենց
յարաբերակից եզրիմ միասնալու համար։ Իսկ ա-
ռնմերբապէս աւ շաղկապը խօսքի եզրեքում մի-
ջեւ կապեր են միայն։ Առնմերբապէս խօսքի
կազմիմ մէջ ուրոյն տեղում մը չէ. իր յարաբե-
րակից եզրիմ հետ կապակցաբար կ'անդամակցի
անոնք։ Իսկ շաղկապը խօսքի օրկանակամ կազմիմ
չի մասնակցիր. անհկա խօսքի եզրերում միջեւ
տրամարանակամ կամ մերականակամ յարաբերա-
քեակ միջնորդ մըն է միայն։

որ տուեալ լեզուի մը առանձնայատուկ նկարագիրը կը շինեն (*):

3.— Խօսքը իր բաղադրիչ տարրերուն գումարը չէ, այլ անոնց մեքենական միութիւնը: Քեր. կարգով օժտուած տեղաւորութիւնը, առանց համակարգուելու խօսքի յարաբերական դրութեան մէջ, չեն կրնար այդ միութիւնը կազմել: Անոնք իրենց բառական գոյածուցումով խօսքին մեքենական կազմին մէջ է որ կրնան իրենց քեր. սահմանումները վերջնական նապէս իրադրծել եւ իրենց գործօն յարաբերութիւններով ժողովրդին աճող-լսական միութիւնը արտայայտել: Իսկ

Ծնթ.— ա) Մեր բացատրութիւններէն կը հետեւի արդէն որ քեր. կարգերը բառերում վրայ կ'ապտոյտայտին իրենց յատուկ ձեւերով: Արդ՝ քեր. ձեւ. մը ընդհանրապէս յարաբերութեան միակ նշանակի մը չէ որ կը համապատասխանէ մայր ձեւը (իմպլե արդի հայերէնի մայր ձեւ. համապատասխան է մեր յարաբերութեան զանազան նշանակներով կրնայ կիրառուիլ: Եւ այսպէս հանդերձ լեզուներու քեր. կարգերը դեռ շատ անբաւական են միշտ ճշգրտութեամբ արտայայտելու համար մեր գաղափարներուն յարաբերութիւնները, անոնց զանազան նշանակները: Ասկէ՛ յաճախ խօսքին մէջ յառաջ կու գան անբացատրելիներ կամ երկնայեղանակներ, այսինքն՝ «սառնամ» եւ խօսքի գրութիւններու անհամապատասխան յարաբերութիւններ:

բ) Լեզուի մը քեր. կարգերը կը ծագին ձայն լեզուն խօսող ժողովուրդին իրենց ու երեւոյթներէն: Սակայն լեզուի մը քեր. կարգը չէ միշտ եւ իրենց հետ ենթերցանելի ընդհանուր երեւոյթ է, սակայն, քեր. կարգերում կամապատասխանող բառական ձեւերում փոփոխութիւնը լեզուի հալովայրի ընթացքին: Բայց այս պարագային ձեւին փոփոխութիւնը չ'ազդեր: Անքին բովանդակութեամբ. ճար ձեւերում տակ իմացական յարաբերութեամբ մայր նշանակներն են որ կը պահուին (Խօսք համար Ակտիւ Խօսքի գրութիւնը գաղափարաբար աշխարհարարի հալովներում կիրառութիւնները):

Խօսքի տարրերուն յարաբերութեանց եւ զանազանները, այսինքն՝ անոնց քեր. պաշտօնները ո՛չ կամայական կանոններու պայմանադրականութեանց կը հպատակին, ոչ ալ լոկ տրամաբանական օրէնքներու կ'անթարկուին. անոնք տնտեսական եւ անոնց ձեւերուն յարաբերական պահանջներ կը ծագին՝ ասով իսկ համապատասխանելով արտաքին աշխարհի իրերուն եւ երեւոյթներուն բնական դրութեան:

Մենք տեսանք որ արտաքին աշխարհի մէջ գոյակն ու եղելութիւնը յարաբերական միասնութիւն մը կը կազմեն: Այս յարաբերականութեան մէջ գոյակը կը հանդիսանայ շարժառիթն ու մեկնակէտը եղելութեան, իսկ այս վերջինը դայն ժամանակին մէջ գոյածուցումը՝ ներկայացընելով դայն իրենց դերակատար կամ դրնելով կացութեան մը, դրութեան մը մէջ: Ասկէ՛ քեր. գեղ. գեղ. արտ. անունին եւ բային յարաբերականութիւնը ենթակայնի եւ ստորագիշի նախադրել պաշտօններով՝ հեղինակը կը յառաջանայ: — Ներկա եղբերու այս պարզ դրութիւնը կրնայ անհիշուի յոր յարաբերակիցներով: Եղելութիւնը մեկնելով գոյակէն՝ կրնայ յանգիլ յոր գոյակի մը կամ գոյակներու, որոնք այսպէս կամ ալ յանգիստ մասնակից են սկզբնական տուածին. ասկէ՛ առարկայական խնդիրները (սեռի խնդիր, բնութեան խնդիր): հեղինակը քանակ թ՝ ՈՒՄԱՐԵՐԸ. Ուսուցիչը ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ՏԵՍՈՒՋԻՆ յանձնեց: Կամ՝ չըլելով եղելութեան ընթացքը, այսինքն գայն դիտելով իր յանդման կէտէն՝ ներգործող խնդիրը, Թուական լեզուի լեզուն հետ, որոնք գործօն մասնակցութիւն մը չեն բերեր ներկայացուած տուածին, բայց որոնք իրենց արտաքին միջամտութեամբ իսկ դայն մասնաւորապէս, անհատականացնող պարագաներ են: Ասկէ՛ ալ պարագայական խնդիրները, Ուսուցչական խումբը աշխարհը կ'աշխատանք մեկնեցու: — Գոյակը կամ եղելութիւնը կրնան ներկայանալ յատկանշուած կամ

դատորոշուած գոյածեւով մը, ուրկէ՝
անուանական կամ բայական վերադիրի
պաշտօնները. վայրենի թուրքը տակա-
ւին կը շարունակէ զազամարաք յօշոտել
մեր պատմական յիշատակաբանները—
Գոյակը կընայ ներկայանալ նաեւ մամու-
նակին մէջ յատկանշուած գոյածեւով մը.
Թուրքը վայրենի է (էք, պիտի մնայ):
Այս է պատկերը, իր ընդհանրու-
թեան մէջ, քեր. պաշտօններուն, որոնք,
արուած քաղաքութիւններով, արտա-
քին աշխարհի մեր սկզբնական իմացու-
մին համապատասխանող քեր. տեսակնե-
րու առանձնայատկութիւններէն իսկ կը
ծաղին: (*):

Այսպէսով մենք կ'ունենանք երրորդը
երեք հիմնական արժէքներէն (քերական-
նական տեսակ, կարգ, պաշտօն), որոնց
գործակցութեամբ կը մշակուին լեզուին
հում տարրերը իրեն իօտքի անդամներ:
Ուրիշ խօսքով՝ այս երեք արժէքներուն
մեքենական գործակցութիւնն է որ կը
վարէ մեր մտածումին բոլոր լեզուական
արտայայտութիւնները:

Ահաւասիկ հալիլէի քեր. տեսու-
թեանց հասարակաց խարխալը իր ընդ-
հանուր դժերով: Ասկէ կը ծաղին քեր.
զանազան խնդիրներու մասին իր բացառ-
ութիւնները:

ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

(Շար. 2)

(*) Միթ.— Հօր հարկ է գիտել ապ, ապայմ,
որ մեր մտքին ճաշտար խաղերով (սքոլիմէ՝ ի-
րերն աւ հրեւոյթները դիտելու իր մտեմուտը՝
պատահական կերպերուն) իօտքի գրաւքեան մէջ
այս կամ այն էք.— տեսակը շատ անգամ պատա-
հականութիւնն աւ անտեմարար կրնայ հրաժարել իր
սկզբնական իմացութեանն աւ անտեմարարութեան
մը առանձնայատկութիւնն աւ անտեմարարութեան
պաշտօնը: Մեր մտքին այս ընդհանրաւորեմը
կրնանք, մանաւանդ, առարկայացնել բոլոր տե-

սակները, միայն անգամ էք.— խաղաղութիւն-
ներն աւ իօտքի միաւորութիւնները, գոյակային յա-
կարիւն ապով անոնց: Առնէ պատահական տե-
սակներն, որոնք իօտքի առեւտր զրաւքեանն
զուրա իրենց տեսակային բուն իմացութիւնը ու-
նին: Առնց կ'ընենք առաւ օրինակները, որոնք
այնքան յաճախեալ էն լեզուին մէջ: Բայց
ի վերջոյ հարկ է շնչեալ քեր այս պարագան տե-
սակի աւ պաշտօնի մնայուն յարաբերութիւնը չի
փոխեր:



ԲԱԳՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Կ. ԶԱՐԵԱՆԻ ՆԱԻՈՒՆ ԱՌԹԻԻ

Կոստան Զարեանի «Նաւը Լերան Վրայ» վէպին «մաքրաջրում» հայաստանեան տպագրութեան առթիւ, ինչպէս նաեւ Պօղոս Սնապեանի «Աւագախրած Նաւը» լախտահարող գիրքին աւելցնելու համար Պօղոս Սնապեանի գույքը սրբաւորութեամբ գրուած «Երկու Նամակ»ին առիթով, կատարեցի փոքր ու գրաւոր *անգլի* մը, քուղքերով տասը գրչեղբայրներու հարցներով՝ քէ ի՞նչ կը մտածեն: Ինչ նամակ ազգեցի Ֆրանսահայ գրչեղբայրներու, մէկ նամակ ալ Հայաստան գտնուող գրչեղբոր մը: Անուններ չեմ տար, ինչպէս խոստացած եմ գրողներուն: Եօթը գրողէ ընդունեցի պատասխաններ, որոնք ահա առիկ:

✱

– «Նաւը Լերան Վրայ» վէպին «մաքրաջրում» չե՞ս կարծիք որ պարտադրուած է քակարար ինչպէս *առաջ* – Զարեանի: Իրեն հաւանաբար մտածեցած կամ մտորտանշած են քէ վէպին ո՞ր մասերը հարկ է «մաքրաջրել»: Եւ Զարեան կատարած է, մտածելով որ մարդիկ չլիտի հասկնան որ ինք «մաքրաջրած» է ակամայ: Ինք վտակաբար պատրաստ է երդնուլ Խալիլի ըրած *ժառանգանքներուն* առջեւ, որ տարագրեալ մը մնալէն աւելի նախընտրուի խալիլեան խալիլեան խալիլեանը կը պատկանին սովետական վարչակարգին: Թէ ինչքան զրակամ մարտիրոս մըն է, եւ արժանի կոչուելու Սուրբ Եօթան, ինչպէս անուանած էիր զինքը ծաղրանկարով, իրեն նուիրուած: Իր ապագայ կենսագրի «Վարժ Սրբաջ»ին մէջ կարեւոր գլուխ մը պիտի աւելցնէ, հակառակ որ Սնապեան աւելի Պօղոսեան զինքը գետնիցէն են վարժ Սնապեանից մօտ մտածանքին մէջ:

✱

– Առաջ Զարեանի «Նաւը Լերան Վրայ» էր, իսկ հիմա չե՞ք իր տակ կը առաւ նաւը: Եւ անշուշտ նաւը ջախջախուած ընկալած է խորն անդրեւոյց: Զարեան Պետերասի կողմէ զիմակագրած ու մարքագրած է եղած: Պետերասն ալ իր կարգին մերկացած է մարքով: Պետերասն աւելի Զարեանը անարգութեան սիւնին վրայ բեռնուած են Սնապեանի ու Պօղոսեանի կողմէ:

✱

– Լերան վրայի նաւերը եակատագրականօրէն կը պատկանին Հայաստանի: Առաջինը Նոյ Նահապետի նաւն էր, լիքն անասուններով: Երկրորդը՝ Կոստան Զարեան եօթապետին նաւն է, որ ի վերջոյ, լեցունցաւ ամասնականներով: Շատ բան գրուած է Նոյի նաւում վրայ: Սնապեան աւելի Պօղոսեան ալ գրեցին Զարեանի նաւում վրայ: Դեռ ուրիշներ պիտի յիշեն այդ նաւը ու գրեն: Իսկ յիշուիլը անմահութիւն է:

✱

– Կոստան Զարեանի կիսմէջ եղած է շարք մը ուրացումներու: Յետք Օշական հրապարակով հարցուցած է. «Միմչեւ Ո՞ւր...» Ահա Կոստան Զարեանի կիսմէջն ու վերջնական պատասխանը. «Միմչեւ ինքնուրացում»: Եւ արդ ամէն ինչ կատարեալ է ուրացումի գետնին վրայ: Սնապեան աւելի Պօղոսեան ըսին պէտք էր եղածը: Կը սպասեմք Պետերասի պատասխանին, որ չէ

լուտամբ ըլլալու է, ոչ ալ լուսթիւն: Առաջինը (լուտամբը) տկարութիւն է, իսկ երկրորդը (լուսթիւնը) պարտութիւն է:

✽

– Լսեցի որ Երեսնակի մէջ, երկու նշանաւոր Զարեանները (Նայիրի Զարեանը եւ Կոստան Զարեանը) կը բնակին եղբր միեւնոյն տան մէջ, կողք կողքի: Այդպէս բարեկամացած են իրարու: Ասլա, գիրքնք բաժնազ պատը քանդելով՝ միացուցած են իրենց յարկաբաժինները, ու մտերմացած են իրարու: Վերջապէս, իրենց անկողինները միացնելով՝ եղբայրացած են իրարու: Ահա այդ մերձեցումէն ծնած է «Լաւը Լերան Վրայ»ի «մաքրաբարձ» տպագրութիւնը: Տակաւին ուրիշ մաքրաբարձներ կրնան պատահել անոնց եղբայրական մտերիմ մերձեցումէն: Սնապեանն ու Պոյանեանը պէտք է պատրաստ ըլլան, հարկ եղած ներառելումները կատարելու համար:

✽

– Կոստան Զարեան «մաքրաբարձ»ի հիմնադիրը չէ, մեր մէջ: Թէեւ փիմնադիրին հետեւող մըն ալ չէ: Զարեան լուր չունի անգամ որ առաջին մաքրաբարձը կ'աղբէր արտաստեմանի մէջ, Փարիզ, Դերասան Շ.ն, որ համադիսացաւ կարապետը մաքրաբարձի: Գիտես անշուշտ որ յիշեալ Դերասանը քատերագիր ալ եղաւ: Իր քիտած քատերախաղին վերջին արարը երկու տնակ էր. մին հակահամայնականն, միւսը համայնականն: Այսօր կողմնակա մարդոց կամ միութիւններու համար կը ներկայացնէր հակահամայնական վերջամասը, իսկ ձախակողմեան միութիւններու կամ մարդերու համար՝ համայնական վերջամասը: Իսկ այն անկախ անձները՝ որոնք երկու վերջաւորութիւններուն ալ հանդիսատես եւ ունկնդիր եղած էին, կոխուածաբար ժպտած էին միայն: Ո՛չ ոք գայթակղեցաւ: Պատճառը կամ հեղինակին Դերասան ըլլալն էր եւ կամ Սնապեանի մը, Պոյանեանի մը բացակայութիւնները:

✽

Եւ անուասիկ Հայաստանէն հասած պատասխանը.
– Եթէ ես ամէն ինչ ասեմ, իմ գլուխը կարող է ցաւել: Իսկ եթէ ոչինչ ասեմ, գոցէ քո գլուխը ցաւի: Կոստի Զարեանը մի Էմիլիոս արարած է որ կարող է բոլորի գլուխները ցաւացնել, բաւական է որ իմք իր գլուխը փրկի: Մի՛ գարմանաւ ու մի՛ գարեհորիք, եթէ լսէք որ Կ. Զարեանը խոնարհած լուացքի տաշտի առջեւ՝ համեստօրէն կատարում է «մաքրաբարձ»ները իր ներակնդէններին, ուզում եմ ասել իր գրութիւններին: Մաքրաբարձը մալութիւն է Զարեանի նրա մէջ: Դա կարող է լուսնալ ուրիշներին ներակնդէններն էլ, եթէ պատուէր ընդունի: Թէեւ նա «մաքրաբարձ»ի հազար անգամ կեղտոտում է, բայց իրա յոյսը դրել է Պօղոս Սնապեանի ու Քոյանայի Պոյանեանի վրայ, որոնք Զարեանի մաքրաբարձները սրբաբարձ են: Ի դէպ, Զարեանը շնորհակալ է Սնապեանից, որ մի խոշոր *«էջան»* է կատարած: Իրա մէջ առում է մի երկրորդ երախտագիտական երաժշտութիւն, համադէպ Նոյաւարդ Պոյանեանի: Դուք էլ չէ՞ք ցանկանում վայելել նրա երախտագիտական երրորդ *«էջան»*ին:

✽

Մենք արդէն սկսած ենք երրորդ համանուագին կայծակները տեսնել ու որոտումները լսել:

ՆՇԱՆ ՊԵՆԻՍՎԱՆԻԱ



ԴԵՃԲԵՐ

Ի Ր Պ Ե Մ Ք Ը

Վճարվելի առաջին տարւան առաջին թիւէն սկսելով ընթերցողները պարբերաբար կարգադրին Եղուարդ Պոյանեանի Վեճմբերը: Գրողներ եւ ընթերցողներ բազմիցս յայտնեցին իրենց գունաւաւորութիւնները աչք վերցունումներուն ինքնատիպ բնայթիւն մասին: Խանդավառութեամբ, դորովով, Գիրքով դրուած էջեր են անոնց եւ իրաւամբ եղովի՝ իրբեւ Ծրագիր, իրբեւ Գաւառ ու խորհրդ:

Պարագայաբար գրուած նրբաւորու հաւաք զանց ընելով՝ միտները, աճիւնն ալ, անտաճոր զէմքով են: Անոնց կը կողմեն հայ գրականաւթեան լեռնապարը՝ իրենց հրաբխային յառկութիւններով, բաշտաւորաց զաղաթներով, աղբիւրներով, մշտադաւար կտակութեամբ: Գիր: Եւսնչ: Վերք: Փոխք: Սուղում: Պատանշա: Պոյանեանի ստորագրած իւրաքանչիւր գրութիւն ուսումնասիրուած գրողին անկորնչելի մասհարուն խաւթիւնն է, մայր երակներուն տնիթիւնի զուժարը:

Հիմա արձակուրդի մէջ է Պոյանեան: Խառնացած էր Վեճմբերի այս թիւին համար պատրաստել ու զրկել նարեկացիին Վեճմբեր: Ուշացաւ: Ատիթն է, մասնեցիկ, իր գրութեան սուրմանուած էջերը լեցնել աչս անշամ իր զէմքով: Ենդում մը կատարուած է՝ ըլլար այս փորձով, ընդհակառակն, կ'ըլլայ լրացում մը, որովհետեւ մեր գրական լեռնաշղթային անպայման մէկ օղակն է ինք, իր անհնարաւթեամբ, հաւատարմութեամբ, ինքնատիպ իրադրութեամբով:

Եւ արդէն, Պոյանեանի ընտրած զէմքերը հաւարակաց գիր մը ունին իր մշտադաւար փառնութեան հետ: Անգամ մը փայլփլած եւ արագորին հանգաններուն զրիթէ չէ մտնցած ինք, հեղ մը հասած ու այլեւս ցածքած աղբիւրներուն չէ զիման, տեղում մը հարակուսած աւ անհոյսով ներկայութիւններուն քով կանգ չէ առած: Ընտրած է իր փառնութեան ճիւղ հետ հաւաք եւ հոգիին լիւր-

թիւն առող զէմքերը, բարդը, կայտառը, կարկառը, կեանքին մէջ ու մահին ետք կարկառը անցամաքելին:

Ո

Միւսկաքի գրականութիւնը վերջնական գիմազեով նրեք սերունդ կը հաւուէ: Վերապրող սերունդը, ասոնց անմիջական յաջորդը եւ պատերազմէն անմիջապէս առաջ հրապարակ իշտեր:

Օշակտի սերունդը:

Սարաֆեանի սերունդը:

Պոյանեանի սերունդը:

Պատահական ձեւով մը չէ որ այս անունները կու գան մեր լրթներուն: Իւրաքանչիւրը իր սերունդին ներկայացուցական զէմքն է, ջանի մը կողմերով, մանաւանդ քրենց աստիճանական տեւումով, տաքութեամբ, առաջգութեամբ, աւխտութեամբ:

Իր սերունդին առաւելագոյն տաքը Օշակտի եղաւ:

Սարաֆեանը՝ իր սերունդին առաւելագոյն առաջը:

Պոյանեանը՝ իր սերունդին առաւելագոյն աւխտը:

Թիւ մը եւս եւ արդէն Պոյանեան կը թեւակոխէ յիսունը, բայց յիսունին կէտը հաղիւ հաւուող էրիտաւարդի մը խոտնուածքին պէս ետան կը մնայ ինք, երիտաւարդ՝ իր գրիւքը, գրականութեան թանաքութեան մը կը պատմութեան մը կը յաջորդէ փիլիսոփայական ցուղում մը, զիբք մը՝ ուրիւ գրիբք մը, ալ քոլոր պարագաներուն, բոլոր գրութիւնները կը նպատաւարութիւն ներգրէ մըննաւորութի մը տաք բարիքով:

Մենք սերեր ապրած եւ մենք ձիւտեր կրած մարդ մըն է Պոյանեան, ճող աննքան եւ հող կորսնցուցած հոգեկոտով հաղիներուն պատմիչը,

զուտակ թանկացած խաճողուհուր հայր մը: Մին շաղկապութիւններով կազմուած ցնորեալ մը տա-
կաթն եւ տեւաբար փոքր ներկայութիւններու
դժժ յանդիման նկատ տեսական իշխանութիւն մը:

Ամենէն առաջ ու ճշմարիտ բոլոր խառնը-
ւածքներուն պէս՝ բան մը պահանջներու եւ ուրիշ
բան մը աւելցնելու տենչով ազդող խառնուածք
մէջ է անիկա: Ասով կը քաջատարութիւն իր անհան-
գարատութիւնները, պոռթկումները, վիճելու բուռն
ցանկութիւնը: Վէճ՝ իր հոգիին հետ, յետոյ լըր-
կապութիւն հետ, մարդկութեան հետ, մարդկու-
թեան նախատաղբը մարդ ծանօթ եւ անծանօթ
ուժերուն հետ, Աստուծոյ հետ:

Որով տարբեր մը եւ կենսոյի տրեւ պայման-
ներու մէջ յարաբերած պարզապէսական վիճակ
մը չի բան մը քանդելու եւ ուրիշ բան մը վե-
րադասելու: Եւս կէրքը, այլ կու գայ հինէն,
պարզան հրապարակ իշխան առաջին մէջ վայր-
կեանէն կը սկսի, կը բխի արեւելէն, տեղաւոր
մարդու բաղադրական արդիւնքէն:

Շարժել տնջարժութիւնը, տեղափոխել,
Մղել, համել, շրջել, բանգել
Ու վերադառնալով տմէն բան,
Հոգի, երեսոյք, ըմբռնում,
Անյի բուռն սասկուքեամբ տեղէ տեղ:

Իր բովանդակ դրականութիւնը, աւելի ճիշդը
դրականութիւն ընկելու իր ստալը շարժառիթը՝
մէջընդմիջեալ այս հաստատութիւն մէջ է՝ զեմակել ու
վերադառնալով տմէն բան, հոգի, երեսոյք եւ ըմ-
բռնումն եւ ապա մեկնել, ի հարկէ, ի խնդիր
նոր քանդումներու եւ նոր վերադասումներու:

Սուսուպի մասնուած երեսոյքով ներդաշնակ
մարդն է ան, կենսոյին մէջ ու գրականութեան
մէջ: Մեր աշխարհէն է ու մեր աշխարհէն է՝
Երկրի վրայ կեցած, այլ երկրէն դուրս ազդող
տարբերակ ազդարը կը յիշեցնէ յաճախ, ինքն
իրմէ քաջակայ տեղը: Երազամբը, իր զբաղա-
նութեան, յատկապէս բանաստեղծական վառա-
կին ծանօթները զիտին թէ ո՛ր մեկնած է,
ի՛նչ կը փնտէ, ի՛նչ կ'աղերտէ, կը տանջուի ի՛նչ
բանի համար, վերադարձին ի՛նչ կ'ընայ բերել
հետը: Այս ցնորեական վիճակը նորոյայտ երե-
ւոյթ մը չէ իր մէջ, սկսած է այն օրէն, երբ
վնդամազաւեցայ Թանուկ աւ Մին Բաներու, -

Թանառեղծութեան,

Փանթելով տնջարժութիւնը երկնաւորներու շէնք
կապարձակել:

Անծանօթէն կախարդուելու այս բուռն ար-
ժադրութիւնը կ'անցնէ իր էլիքուն ուժը, կը
վկայէ դրողին ստեղծողութեան երեսակայութեան
մասին, որ նորին, խորանկին, մաքուրին հաշ-
ւոյն նոր հարստութիւններ կը հաղորդէ ընթեր-
ցողին: Պայմանաւ փոխադրուելով դիմէ, փոխ-
կերպուելով դիմէ ու փոխակերպուելով Ազա՝ հաղը-
քալ, որանէ, դուրդուրալ: Այսինքն անի տեղ-
եւադարձ հոգիներուն յատուկ՝

Գաղտնիք, կարգաւորիւնը, կամքը ու Յան
զուրք:

Հոգին հետ, հայուն հետ, մարդուն հետ ու
կնոջ հետ, որանք տաքալայական աշխարհէն իր
հոգիին անցած հրաշալի նիւթերը կը կազմեն՝
իր էլիքուն մէջ կը տնջանէ զլիազգրտան Անու-
նը, տարածութիւնը, փոխարկելը, Արարիչը: Ու
անհունը պղպտ տանն հուսալ հեռաքրքրական
չէ, քան հոգին կազմուած մարդոց հոգիներուն
մէջ կատարած իր պղտաւորութեան մասնաւոր: Տա-
րածութիւնը լուսնու փոքրէր նոյնքան զեղեցիկ
նէ, որքան հայուն հոգիին անլուսնի տարածու-
թիւնները խմբազուր իր հիւսանիք դրութիւննե-
րը: Փոքրիկի մը նկարագրութիւնը փոքրիկան
հոգիով մարդու մը պատմութեան հաստատ դը-
րաւութիւն մը ունի, ու ինքի է, մաթ է, ա-
ւերի է ու արարիչ իր Աստուծոյ, ինչպէս թերի
է, մաթ է, տեղի է ու արարիչ կինը, որուն մա-
սին աշխարհ շատ, աշխարհ բարդ ու նուրբ բա-
նէր պատմած է մեղի:

Եւ կը տրեմ իր զեր արեւելէն փոխող ու
լիքըող տնջ իր մէջ, զեղեցիկութեան ու կոր-
ծանման տարբերակ նախադասաւոր, որ կինը
հղաւ իր մօտ եւ կազմեց իր զեւրադույն առկը:
Անհունին պահողը շունը, որ ինքն է նորէն,
զնարանութիւն դաշտամուկը, որ ինքն է դարձ-
եալ, իր ներքին կենսազարկանքին մէջ այլ երե-
սին չեղ յարստութիւնը:

Թերեւս պէտք չկայ մեր լեզուին վերածելու
ի՛ր լեզուն եւ նախադասութիւններուն անմուտ-
րած դործան ուժերը պարզ բառերով արտելու:
Այսուհանդերձ քանի, կրկնութեան դնով, որ ա-
րեւելին կանչին անմաստաւոր հայն է, ստաղաւտ
զեւթապատեալը կրնն է, Վարժարարին գալտա-
մուկը մարդն է, եւ Անհունին պահողը շունը՝
բանաստեղծը:

Հայը՝ իր կործանումներով եւ անկործանելի
մասերով:

Կինը՝ իբր գոթային ներկայութեամբ եւ ժողովուն մէջ առեղծան դժբաղք բարեխառնելու ճանապարհը գտնուեցաւ:

Մարդը՝ իբր քանդիլ բնազդներով եւ արտքիլ կարողութիւններով:

Ու բանաստեղծը՝ այդ ամէնուն կտան աւ շանջը գաղտնիչիւ: Կերքով ապրող գաղտնիքը, աշխարհի ու կը արքայազնի ու կը արքայի մերթ, կը խորանայ ու կը խանգաղաւորի, կը համազէ եւ իմանալու նոր ծարաւով մը կը միկնի տարիլ ուժերէ բնական ուրիշ աշխարհ մը, հոն՝ ուր օր մը:

Նո գոցած, ճոյնացած, ամբողջարարած եւ փոքրիկներու մեծամասնով ոգիին:

Ժառանգարող իրեն փոխանցուած հարցերուն առեղծմէր, անմիջական ներկան փոթորիկի խնդիրները իբր իրողութիւն անցնելէ ետք, դժբաղքի նուաճումներուն ի տես հրճուելէ եւ ապահովաւոր բառեր արտասանելէ յետոյ, Պոյանեան յաճախ մեծանալու հետքեր հետազնայ համարողութիւններու ու թափառած ընդհանրական բնազդաւորներու բարդ խորհուրդին մէջ:

Շրջան եւ ցարգ քառսից մէջ,
Ո՛վ Բացարձակ,
Չկախուած լոյսի մեծում,
Չարտաբանուած քառի ճիւղ,
Նրգի մեծում քեզ լծողուն:

Մանօթիւն անմահութեան բանի բերել եւ անմահութիւն նոր ծանօթութիւններ հաղորդել: Այսպէս կարելի է սահմանել Պոյանեանի գրական հիգը: Այս չէ՞ արդէն գրադէպին բուն կոչումը: Հեռանալ, սուղաւել, բնաբերել եւ յատկապէս՝ աւելի մոտենալու համար մարդուն, մարդը մօտեցնելու: Համար իբր ճակատագիրը լուսաւորող յուսատու հրապի մը, իբր որոնումներուն պատկերն, Գրականութեան առաքելական եղանակութիւնը ա՛յս է եւ Պոյանեան մէկն է անոր բազմառանգ սպասարկուներէն:

եւ

Իբր մեկնումներուն ու սուղումներուն ընթացքին, Թերեւս անոնց խի պատճառով՝ Պոյանեան կը գործածէ բառամթերք մը, որ ինք իբր մէջ ուղարկու է ու կը բացատրէ իբր հոգին: Օրինակ՝ չ'ըսեք ակար, չ'ըսէ անգալ, չ'ըսեք մեղի, չ'ըսէ անպատար, չ'ըսեք ախիւ, չ'ըսէ անգեղեցիկ: Տկարին, մեղիին, ախիւին բնութեամբ

գրուած շահեկան ընկ իրեն համար, քաջութեան, ապստամբ խառնուածքէ, գեղեցկութիւններէ զուրկ ապրող մարդոց ու հաւաքականութիւններուն հանդէպ զգացած փոխադրութիւնն է իբր բերածը: Պոյանեանի գործութիւնը յիշեցնելու, ապրումնաբան կորութիւնը յիշեցնելու, գեղեցկութեան զգումնաբան յիշեցնելու հրամայականն է իբր առաջնահերթ խնդիրը:

Պոյանեանի ստեղծագործութիւնը չկայ ուրիշ դեմք մը, որ սպասելէ ետք մեր լեզուին ճախ մթերքը, իրեն չափ բառին կարգը զգացած ըլլալ, զգացած ըլլալ նոր բառեր կերտելու ստատիկ անհրաժեշտութիւնը, իբր խառնուածքը, ծաւալելու, խորանալու բուն տենչը՝ ստատիկ եւ զիջող իբր հոգիին բարդութիւնները լուսաւորող նոր բարդութիւններ, նոր անմեղներ ու բարդանմաններ, կերտել աւելի լուսայորդը, աւելի տաքը, Թերեւս աւելի սեւը, խառնաթափաղանքներ: Անիկա խոստով է ընթերցողին հետ մեր լեզուով, իբր լեզուով, աշխարհագրական մոտեցող կազմած երբոր լեզուով մը: Ատոր համար իբր հոգին եղած է երբեմն զննանքով միջոցառում, զննանքով ներկայութեան, մերթ Սիպրիոյ ցաւաւոր դիպած է հոն, մերթ Սահարայի տօթը, Ալաբաթի ճահիլները: Բնութեան ամէն մէկ երեւոյթ, մարդկութեան ստեղծած կամ որդեգրած ամէն մէկ խնդիր՝ բա՛ն է Պոյանեանին համար, բացարձակութիւն է, յայտնակերպուելու իւրաքանչիւր օմ: Գիրքերուն անհրաժեշտ կերպերով, միայն իրեն յատուկ եղանակներով: Իբր գաղտնիքն ու զննողական պահերուն եւ զննաւնասագոյնն ու զննողականը յայտնութիւններուն տանն՝ ընթերցողը անուշաւ կը յիշէ պահ մը նարեկացին, բայց լուսով կը վերադառնայ իրեն եւ կը կլանուի իբր զննումներն ու զննողականը քանդակով, իբր զգոյնկեղծութիւնն մէջ անգի անեցած զերարտալուստիւնն զգողութեան անմասնութիւն:

Թերեւս լատ խոսեցանք այս մասին: Թերեւս լատ քիչ խոսեցանք այս մասին: Թերեւս բառէն առաջ՝ անոր պէտքը զգացող հոգիին հոգեբանականութեան շարունակութիւնը աւելի շահեկան էր, այսուհանդերձ չի՞նք կերպ զանց ընել բառերուն հանդէպ ցայց արուած վարժանքը, որ ընդհանուր, ինչ խօսք, իրաւ խառնուածքներուն մօտ բառը հոգեվերժանքն ինչ է, Թերեւս է, լոյսը, բանաստեղծութիւնը: Նարեկացիին ճանճանքիւնը, Դուրեանի ճիւղը, Սայաթ-Նովայի ճիւղը, Օլախի ճիւղը, Օլախի ճիւղը, Օլախի ճիւղը, Օլախի ճիւղը:

համը: Հռչակվեալ է նոյնպէս Պոյսնեանի բա-
ռը, խորք է, բանաստեղծութիւն:

Ճ

Երկու Եղեղութիւններ ունի Պոյսնեան, մէ-
կը կրկնութիւններով անելու պարագան է եւ մի-
ւր՝ կառուցողական թերութիւնը: Կը պատահի
երբեմն որ տեսիլքը շարունակէ աւելի զորաւոր
թուիլ իրեն, քան ձեռք բերուած իրացումը, բա-
ռին սրացածը թուի զիլ, պատկերները յազուադ
լսան իր Ժարակին: Նման պահերու կը շարուն-
ակէ որոնումը, բայց մայր զաղափարը առաւել
եւս նպատակաւոր դարձնելու փոխարէն՝ կը
ստացուի առաջիններէն պղտիկ տարբերութեամբ
նոր պատկերներ: Արեւիկայ կրկնութիւնն է, ճիշդ
է, թոյց կարելի չէ բոլոր պարագաներուն ա-
ռադաշտութեամբ խոցելի դարձնել զայն, երբեմն
նոյնիսկ շահեկան են այդ կրկնութիւնները, առ-
նչեալն կը բերեն լեզուական ու սեռային նորու-
թեան մը փաստը:

Շւ. ապա միւս ինդիքը, կառուցումը, ինչի
համար սիրելի է բացատրել կեանքը, ինչպէս
նաեւ դրականութիւն կոչուած միւս կեանքը, առ-
պատուր Ժողով մը նախապայման, անոր լինե-
լաթեամբ եւ աւարական պոսիով: Բեղմնաւոր
հոգի մը մէջ միմեկուան աւանդ, Եւրոպական-
մը, պոզաւորումը: Պոյսնեանի հոգին բեղմնա-
փռլին զորաւոր է ու ունի մէջ միմեկուան իր առ-
մատը խոր, բայց Ժողով Ժողովումը եւ պոզա-
ւորումը օրինական ձեւով տեղի չեն ստեղծար:
Դասակարգումի ուշադիր աշխատանք մը, ըսած
ենք ուրիշ անգամ, աւելի ամբողջական պիտի
զարմեկը ընթերցողին վախճել:

Յ

Եղեղութիւն Պոյսնեան ցարգ հրատարակած է
«Սէր եւ վիշտ», «Հնար», «Թուրք գաւազներու»,
«Տնայար տարաբնի հատորները եւ առանձին եր-
կու ուրիշ թուոյթներ: Առաւել՝ առաջ հատոր լե-
ցընող հետ հոն սպասած գրութիւններ ունի եւ
կենսայորդ գրիչ մը: Իր մէջ կայ բանաստեղծ
մը, պատմող մը եւ դպրող մը: Մեղանեղ անմի-
ջական, որ ո՛չ բանաստեղծը նախորդող մը ունի,
ո՛չ պատմողը վարպետ մը եւ ո՛չ ալ պատմողը գրող-

մը: Իր մը օտանդակ օրէնքները, ի՞նչն է, իր ան-
հասարակութիւնը՝ ամէն էլի մէջ, ամէն տողի
մէջ:

Պոյսնեան առաջ իջաւ հրատարակ եւ մեր նոր
գրականութեան առաջին գրիչն զրոյց կը զանուի
այսօր, երբ յիշուին կը թեւակոխէ: Սկսաւ ու
չգաւահանեց իր կոչումին: «Տնայար տարաբնի
քիւ լուսնեղ թուոյթները» իր առաջին երկրորդ-
դարձեան ու հասուն տարիքին, երբե՛կ ու գրեց:
Հայտնուեցաւ, տեղահանուեցաւ՝ գրեց: Դասա-
նախուցաւ հազար անգամ՝ բայց գրիչը ձեռքէն
վաղ չէր: Համաձայն իր անիւթներուն՝ շա-
րունակեց մեղակերպել մարդը եւ դաւաճուելը,
անհունը եւ փողոցը, կենը եւ փոթորիկը, գի-
նետունը եւ Արարչութիւնը: Մտերմացաւ մահ-
ուան հետ ու նետուեցաւ կեանքին վրայ: Արդա-
րին, իրաւին, արեւ. զեղեղութիւններուն օտ-
մահադարձութիւնը պաշտպանող եւ օտմահադրողը
եղաւ: Սկսեցին: Արարչեց: Հուսադրեց: Սի-
րեց սուրը, թէ՛ մը, ալիկոնը, հեղեղայինը, առ-
բերայինը: Ասեց հաղթելէին եւ ուրիշ պոստա-
նաներուն ու պայծառութիւններուն թշուա՛ր
Թուրքը, Թուրքութիւնը, համայնալուրը, բոլոր
մեկի բնութիւնները, մանր ու միջին բանական-
ները, ստաթեան ասպետը, խորհրդը, դաս-
դիրը, իր հոգիին բովանդակ թափով, յարուան
բաներուն կիզիչ բանաստեղծութեամբ:

«Նաեւ կիզեղ սրիկայ» մը լեզու բնաւ,
իր անշահախնդիր պեղումներուն վկայութեամբ:
Երանքրու քիթիկազարծն մը լեզու, սրբահեռե-
ղեցաւ: Սիրտ դնել ու զաղ բաներուն խորքը,
զարուեստի չարաչան մը լեզու, սրբահեռե-
մաթ ու թանկ բաներու համար գիշերները չը-
րաւ: Մնաց հասարակութիւն ինչն իրեն, ասանկե-
ցաւ, երկնեց: Եղա՛ւ:

Պոյսնեան առաւ է արդէն մէկ մասը զրո-
գում բանաստեղծներու: Անքիւն տեղադրու կլիմա-
ներու մէջն սպասուած գեղեցկութիւններին եւ
անտարակոյտ ընթերցողին պիտի որոնէ միւս մա-
սը՝

Տղայի մը՝ որ ե՛ս եմ,
Բանաստեղծի մը. որ ե՛ս եմ նորէն,
Նուիրեալի մը Անգրիին,
Որ ե՛ս եմ գարնանալ...

Գ. Ս.

ԶԵՆՈՒՆԵՐ

ՄԱՌԴՋԵԴՈՒՆԱԿԱՆՆԵՐԸ . . .

Համայնավար Ռուսաստանի եւ Համայնավար Զինաստանի ղեկավարութեանց միջեւ ստեղծուած աւարակարծութիւնները կը շարունակեն լայն մեկնաբանութիւններու առիթ տալ, միջազգային մամուլին հետ ոգոյզելով նաեւ Հայաստանի մամուլը։ Ստորագրուած կամ անստորագիր յօդուածներու տակ առնէ մը ի վեր կը կարդանք յարձակողականները։

«Զինակամ մերկայացուցիչները սկսեցին քայքայիչ, պատակաւորական գործունէութիւն ծաւալել եզրայրական կամկատակցութիւնների դէմ՝ օգտագործելով կոմունիստական շարժման եւ յեղափոխութեան գործի բոլոր գոյնի դաւաճաններին։

«Զինակամ ղեկավարները հռչակեցին իրենց յատուկ գիծը, որի մէջ միաձուլուեալ են մամբրուրժուական արկածախնդրութիւնը եւ մեծապետական շովինիզմը։ Նրանք ըստ էութեան գործուել են տրոցկիստական գիրքերը եւ Սարգս-Լենինեան կուսակցութիւնների դէմ պայքարում են տրոցկիստական մեքստներով»։

Հայաստանի թերթերէն կ'իմանանք դարձեալ, որ այս պայքարին իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ «Արիւնքահայ առաջաւոր լրագրերը»։

«Անտառմէլը - կը գրէ յօդուածագիր մը - որով սփիւռֆանայ առաջաւոր լրագրերն սկզբում արտայայտում էին չինական ղեկավարների յայտում եւ վնասակար բնթացքի մասին, յուսալով, որ մագդոյդունականները վերջիվերջոյ ուշքի կը գան, յանգեց ցատումի ու խարամման»։

Ըստ երևոյթին կացութիւնը բաւական յուսահատական է եւ Պեկինի «Վայ տեսարանները» դեռ պիտի շարունակեն իրենց պատակաւորական գործունէութիւնը։ Երեւոյթը մեզ կը մտահոգէ այլապէս։ Մագդոյդունականները իրենց տրոցկիստական բնթացքով կ'որբացնեն քանի մը քեզ՝ ըստ նաստեղծութիւնների, կը պղտորեն մեր տրոյտն ներդաշնակ զգացումները։ Ի՞նչ որոտով պիտի երգենք հիմա։

Զինը
Զնչիմ չի հիմի,
Փշքուող ու մութք
չիմի չի,

Զինը
հիմը չի հիմի...

ԱՋԱՏ ՎՇՏՈՒՆԻ

Կամ՝ որո՞ւ պիտի յղենք սա օրտարո՞ւնը եւ երաժշտական ողջոյնը.

Ողջոյն քեզ Զինատում:
Շողում է քեզ վրայ մի հարազատ արեւ:
Մառ-Տէ Դուռն է դա:
Ձեզ հեռա հմ ես:
Նոր Զինատում կառուցողներ՝
Վան Յի, Վան Զան Խուլէյ,
Խուռն Խո եւ Մօ Այուն կուն:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Յւ վերջապէս ուրիշ մը, մրցանակներուն ու կուսակցական մոմիա-
ներուն տուրք վճարելը հեշտանքի վերածած էմինի զեղումը.

Ուզո՞ւմ ես Ելնեմ ու գնամ Պեկին,
Մառ-Յզէ-Դուռնն ձեռք կը տայ շեմքին.

Ո՞վ պիտի առնէ հիմա մեր ողջոյնը եւ սեղմէ կարկառած ձեռքը:
Կրնա՞ն հիմա այս բանաստեղծները Մառ-Յզէ-Դուռնը Զինատումի վրայ իր-
րեւ հարազատ արեւ տեսնել ու շողացնել կրկին, երբ

Զինը	Ունկնդիր չի»,
Զնչին չի հիմի	Զինը
«Կրեմլի գամգիմ	Հինը չի հիմի

Աւօրեան գրականութեան մէջ խառնելու ստրկտեմն այս աճողա-
րանքը որքա՞ն սուղ արժած է մեզի: Նայիրի Զարեան, ստրկահամբերուն
դրօշակի՛րը, շարքային գինուորներու կը նմանցնէր պատերազմի ընթացքին
դրած իր ոտանաւորները: Շարքային գինուորներու պէս կատարեցին իրենց
պարտքը եւ մեռան շարքային գինուորներու պէս, Կ'ըսէր: Երջանի մը հա-
մար միայն ճիշդ չէ այս հաստատումը: Տասը տարին անգամ մը՝ քաղա-
քակա՛ն Նոր անցուղարձի մը հետ՝ ականատես կը դառնանք ուրիշ մարդե-
րու շարքայիններու կարգին՝ նաեւ շարքային բանաստեղծութիւններու նա-
հատակութեան: Անխուսափելի է այս վախճանը, երբ բանաստեղծը թի՛ր
նշմարտութիւնը որոնելու եւ հաղորդելու փոխարէն՝ ուրիշներու հաշիւնե-
քուն կը փորձէ արձագանգել: Երեւոյթը կուսակցական պարտադրանքով
միայն չի բացատրուիր, պարտադրուելու փութկոտութիւնը նուազ դեր մը
չունի այս աղէտին մէջ: Ի հարկէ, կարելի չէ նոյն թերութեամբ ամէնքը
մեղադրել: Փաստը այն է, որ ամէնքը չինական բաներ չեն գրած, կը նշա-
նակէ թէ միւսներն ալ կրնային գերծ մնալ չինական բերքերէ: Ժամանա-
կավէպով դրադողը առանձին խումբ մըն է, թոյլերն են, որոնք ծառայա-
կան իրենց խառնուածքին բերումով իրենց պատկերը տուած են գրակա-
նանութեան: Աղախինի դեր մը:

Հազար անգամ ըսուած է իրենց, որ քաղաքական այս դաւաճան խըն-
դիրներուն ձեռք մի գրենէք եւ «Պրաւտայի խմբագրականները բանաստեղ-
ծութեան համար հաստատուն ներշնչարաններ համարելէ զազրեցէ՛ք այլ-
եւս: Նոյն բաները դեռ երկար պիտի կրկնուի՞ն արդեօք:

«ԱՍՏՈՒԱԾ ԵՐԿԻՆՔՆ Է, ԼԵՆԻՆ ԼԷ՝ ԹՈՒՍԱՍՏԱՆ»

Վերի խորագիրը վերցուցած ենք «Նահապետը» վէպէն, որուն մասին խոսուած է մեր այս թիւին մէջ։ Այդ գրութեան տեղեակ ընթերցողը հանդիպեցաւ հարկաւ հոն ներկայացուած կոապաշտ Նոյնի եւ իր կնոջ, Նհոն Ֆիդայի եղած է եւ կինը՝ Վարսոն՝ «Հրացանով Նեոյի կողքին կը կռուէր քուրքերի եւ քոյրերի դէմ...» աւելին՝ «Վարսոն ֆիդայիներու պահապան օգնականն էր երկիր...»։ Իր ֆիդայական անցեալին հետ՝ Նհոն ծանօթ է նաեւ իր կոապաշտութեամբ։ Պարզ են նոյնպէս ինքզինքը կոապաշտ հռչակելու յարժաոյթները։ «Որ Աստուած Նահապետի պէս արդար մարդու աչքով չմայլէ, Աստուած քուրք է»։ Ուրիշ տեղ մը՝ «Թէ որ Աստուած պիտի եայ ազգին չօգնէ, ես լէ ճրամ կ'ուրանամ, կոապաշտ կ'էլ-նիմ»։

Այս ըմբոստ ու յեղափոխական մարդը, Նհոն, հւ Ֆիդայիներու պահապան իր կինը, Վարսոն թող մը կ'ունենան։ Այդ թռռան մասին է՝

«Աստուած տուեց, թէ Լենին տուեց, — կամեց մէկը կատակով։

Վարսոն խօսքի տակ մնացող չէր։

«Աստուած երկինքն է, Լենին լէ՝ Ռուսաստան։ Ենթիւ որ կայ՝ իմ տղի շնորհքն է...»։

Մեզի համար կարեւոր չէ, թէ ի՞նչ մթնոլորտի մէջ եւ ի՞նչ շնորհքով արտասանուած է այս խօսքը։ Կարեւորը այն է, որ կը ծառայէ ընդհանրացման եւ ուրիշ ճշմարտութիւններու բացայայտման։ Կարելի է միշտ կրկնել զայն, առանց տարակուսանքի ու խղճախայթի, զաւելի մը ծնունդ տալու ասոն, զեղեցիկութիւն մը վեր խոյացնելու ժամանակ, նոր Հայաստանի գոյութեան պատճառը ստուգելու ասոն, մի՛շտ, անառարկելի ճշմարտութեան մը պէս։ «Աստուած երկինքն է, Լենին լէ՝ Ռուսաստան։ Ենթիւ որ կայ՝ իմ տղի շնորհքն է...»։

Այս հաստատումը որքա՞ն ճիշդ էր մանաւանդ Հայաստանի անկախութեան (1918) ժամանակ։ Աստուած իրապէս երկինքն էր եւ Լենին փաստօրէն Ռուսաստան կը գտնուէր, երբ «իմ տղին», մեր տղոց, մեր կտրիններուն շնորհքով ու հրաքրքր արիւնով ետ մղուեցաւ դարաւոր թշնամին ու անկախութիւն հռչակուեցաւ մեր շարժարուած հողերուն վրայ։ Աստուած չկա՞ր ու Լենին չկա՞ր այդ պահուն։ Առնուազն մեզի ի նպաստ գոյութիւն մը չէր Լենինի գոյութիւնը։ Իմպերիալիզմի դէմ պայքարելու պատրուակին տակ՝ բռնի եւ գործով կը քաջալերէր մեր հայրենիքին ու ժողովուրդին դէմ արշաւող թուրք ու թաթար հորդանները։ Այդ պայմաններուն մէջ գոյատեւար պիտի ըլլար, ըսուած ու հաստատուած է հազա՛ր անգամ, երեւակայն Հայաստանի մը գոյութիւնը, եթէ գործի անցած չըլլար «իմ տղին», այսինքն հայ ժողովուրդին առնական շնորհքը։ Անհուն գոհողութիւններով ստեղծուած եւ ահաւոր պայմաններու մէջ իր իրականութիւնը այլոց պարտադրելու սկսած հայրենիքը բռնադրաւոր մարդուն գովք հիւսել տալով՝ Հրաչեայ Գոյար, ըսած ենք արդէն անգամ մը, առնուազն արգահատելի կացութեան մը կը մատնէ իր հերոսները։

Որքա՞ն լաւ կ'ըլլար, եթէ Լենին, գոնէ՛ մէկ անգամ եւ հոս, Հայաստանի եւ հայ ժողովուրդի դիմաց՝ հետեւէր Աստուծոյ եւ տեղէն չջարժող Աստուծոյ պէս մնար ի՛ր տեղը, Ռուսաստան, եւ խնայէր միզի իր մտանգաւոր «փրկութիւնը», հեռու պահէր մեզ իր ստրկաբեր «ազատութիւնէն...»։

Cinéma - dynamisme

Հայաստանի երիտասարդ եւ ամէնէն աւելի անհատական շեշտ ունեցող քննադատներէն մէկը, Հրանդ Թամրազեան, «Սովետական Գրականութիւն» ամսագրերի Յունիսի Համարին (1964) մէջ, երեսունըւորս էջոց ծաւալուն յօդուած մը ոտորագրած է Սիւսմանթոյի մասին: Մեծ դիւցազներգակին ամբողջական վաստակէն բխած ամբողջական վերլուծման մը երաշխիքը չի բերեր թէեւ յօդուածը, այսուհանդերձ կը մնայ Հայաստանի քննադատներուն կողմէ Սիւսմանթոյին նուիրուած ամէնէն ուշադրաւ դրուածութիւնը:

Թամրազեանը իր յօդուածին մէջ միայնութեան կանչած է ծանօթ եւ կէս ճամբան մնացած ժամանակակից բազմաթիւ դրաղէտներ եւ Սիւսմանթոյի մասին մէջբերումներ կատարած է ի մասնաւորի Վարուժանի արտայայտութիւններէն: Հետեւեալը մէկն է Վարուժանէն մէջբերուած կարծիքներէն.

«Եւրոմանանը կարծես հրաշէկ երկաթով մարմարիումի վրայ պատկերներ կը դրոշմէ իր մէջ մի տողին, մէկ մի բառին մէջ: Այս պատկերաւոր տողերը յաճախ իրարու հետ զատական աղերս չունին: Իմաստը զանոնք չի կապեր, անոնք պատառին վրայ բառերով մետուած գոյներ են, արոնք Շոքատ-ի շարժականութիւն ունին: Անոնք մտածումէ աւելի միտմոյն տեսին պատկանող տպագրութիւններ են, որ հետզհետէ, տալ տա տալ կ'երթան ռատամտրին ամբողջութիւն մը տալու. այդ ամբողջութիւնը տըպագրութեան համադրութիւնն է, — բանաստեղծին ուժականութիւնը, (dynamisme) մտածումներուն մտաբանումը:

Վարուժան իր այս մտածումները յայտնած է Կոստան Մանուկ Միտիթեան կողմէ Սիւսմանթոյին նուիրուած ասուլիսի մը ընթացքին: Մանուկ Միտիթեան կողմէ տրուած ասուլիսը մէկ հաս չէր, շարք մըն էր, որոնք հետագային «Ասուլիսներ» խորագիրը կրող հատորով մը լայն տեսան: Մինք մեր տրամադրութեան տակ չունինք «Ասուլիսներ» հատորը, բայց խիստ կը կասկածինք, որ Թամրազեան հաւատարմարար կատարած ըլլալ իր արտագրումը: Ճիշդ չեն մանաւանդ Փրանսերէն բառերը: Ընդամէնը Փրանսերէն երկու բառ կայ եւ երկու բառին մէջ կան երեք սխալներ: **Cinéma**-ն Փրանսացիները աֆամ(ք) կրաւով (') չեն գրեր, կը գրեն աֆամ(ք) էկլիւզ ('): Երկրորդ՝ **dynamisme**-ի առաջին վանկի ի հնչիւնը **y**-ով կը գրեն, իսկ երկրորդ վանկի **i**-ին վրայ կը գնեն մէկ կէս եւ ոչ թէ երկու կէս (**tréma**):

Փրանսացիները, մեզի պէս երկու լեզու եւ երկու ուղղագրութիւն չունին: Լեզուական խնդիրներու մէջ ո՛չ մեզի չափ քննադատներ են, ո՛չ ալ մեզի չափ էվոլյուցիայի կողմնակից: Յեղափոխութիւն կ'ընեն, քանի մը տարին անգամ մը կը հռչակեն նոր հանրապետութիւն մը ու կը խմբագրեն նոր օրինագրքեր, բայց կը պահեն լեզուին հին օրէնքները: Փրանսացիները կատաղի պահպանողականներ են այս մարդէն ներս: Կ'արժէ բացառաբար բարեկամ ըլլալ այս «պահպանողականներուն» հանդէպ եւ խնայել իրենց մէք քննադատները... կամ յայտնաբերութիւնները...



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՑ ՎԱՐՃԱՐԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Գալիֆորնիայ Սան Ֆրանցիսկոյում Հովիտի Ս. Նախատակաց Հայց. Առաքելական եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, Յուլիս ամսուամ հերթական ժողովին մէջ միաձայնաբար որոշած է 1964 Սեպտեմբրին բաժնայ Հայկ. Երկրորդական ամենօրեայ վարժարան մը, Եկեղեցւոյ կից շէնքին մէջ, իրականացնելու համար Ամերիկացիներու տարիներու փափագը:

1964-65 տարեշրջանին երկրորդական վարժարանը պիտի ունենայ 7-րդ, 8-րդ եւ 9-րդ կարգեր:

Պնասական վարժարաններու հրքական ծրագրի կողմէն, որ պիտի կիրարկուի մայմարեան, ամենօրեայ դաստանդութիւն տեղի պիտի ունենայ մօտ հայերէն լեզուի եւ մշակոյթի, համաձայն ուսումնական կարգաւորում:

Դպրոցի ուսուցչական կազմը պիտի բաղկանայ կարգ եւ վկայեալ ուսուցիչներէ, համաձայն պետական կրթական օրէնքի:

Վարժարանի տնօրէն մշտնկալուած է Պրմ. Գաբրիէլ Իմեկեկեան:

ԱՆԳԼԻԱՑԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԼՈՐԵՆՍ ՊՐԵՏՇՕ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Վերջերս Երևան այցելած է անգլիացի ծանոթագրութ Լորենս Պրեսչօ, իր կնոջ հետ: Երևանին մեկնելու առթիւ Պրեսչօ յայտարարած է.

— Մենք կը հետեանք հայկական կիշիչ տարեկէն շնորհացած ու հիանալի ստանդարտ Զորէն Թարմացած: Մեր յիշողութեան մէջ ընդմիջում լաւագոյն յուշեր պիտի մնան մեր ժողովուրդին, անոր որոտարացութենէն եւ հիւրընկալութենէն:

Լորենս Պրեսչօ եւ իր կինը Հայաստանի մէջ մնացած են երեք օր: Անոնք դիտած են ժողաքը եւ այցելու՝ էջմիածնի, Զուարթնոցի, Գառնիի եւ Գեղարքի պատմական վայրերը:

Անգլիացի հիւրերը բանի մը ժամեր անցուցած են Մարտիրոս Սարգսնի տան մէջ:

— Մենք երկուքս ալ, ըսած է Պրեսչօ, համարուած ենք որ Մարտիրոս Սարգսնի մեղի ծանօթ Նկարիչներուն մէջ տմէնէն հիանալի վարպետներէն մէկն է: Անոր արուեստանոցը վայր մըն է, ուր բնութիւնը կը դառնայ անընդգրկելի:

Լորենս Պրեսչօ հմեծ վարպետ անուանած է ճանաչագործ Արա Սարգսեանը, որուն աշխատանքներուն ծանօթացած է այս վերջինի տարուեստանոցին մէջ:

Պատկով Երևանէն ստացած իր տպաւորութեան ժառն, անգլիացի ճանաչագործը դիտել տուած է, թէ իր կարծիքով, Հայ Հարաւարպետները յաջողութեամբ լուծած են ժամանակակից ճարտարապետութեան մեկնէն դժուարին հարցերէն մէկը՝ նոր մեծ եւ ազգային ուսումնականներուն զուգորդումը:

ՇՈՒԷՏԱՑԻ ԳՐԱԳԷՏ ՄԷ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

— Շատ իս, հայկական պատմութեանը շատ հետաքրքրական եւ շատ լաւ են՝ կը հաստատէ Շուէտի մէջ վերջերս լոյս տեսած «Ժամանակակից արեւելեան պատմութեանը» հատման յի հեղինակը՝ բանաստեղծ Քալ իլոն Սվեմլին: Վերալիշեալ հատմանը կը պարունակէ մօտ հայկական պատմութեանը:

Շուէտացի գրագետը կը յայտարարէ մօտ որ 1964-ին կամ 1965-ին առաձիգ հատորով լոյս պիտի ընծայէ հայկ. պատմութեանը փուլը մը, շուէտերէն լեզուով: Քալ Սվեմլին, որ հիւսնումով կ'արտայայտուի Յովհ. Թումանեանի մասին, կը գրէ ի միջի այլոց, որ հայ բանաստեղծին «մեծ ընկեր Նեոս» անուն պատմութեանը աշխատեսնէ պիտի գտնուի շուէտական դասագիրքերու մէջ:

ՍՏԱՑԱՆՔ

Գ. ՄԵԼԻՏԻՆԵՑԻ

Ա Պ Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Հայ Կեանքի Մարդու Կուսակցութեան
Գրականութիւններուն հետ

Գին՝ 3 ՏՈԼԱՐ

Հեղինակին հասցէն՝
K. TOPALIAN
12813 Gay Ave.
Cleveland Ohio
44105 U. S. A.

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԱՇԼԵԱՆ

ԲԺԻՇԿՆԵՐ ԵՒ ՀԻՒԱՆԴՆԵՐ

Ստանալու համար դիմել՝
Réd. «PEJICHK»
P. B. 4176
Beyrouth - Liban

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ

Վարչութեան հասցէն՝

DIKRAN KOUYOUMDJIAN
B. P. 587, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@

Ք Ե Ն Թ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՆՈՒԱԶ ԿՈՒՊՐ

ՆՈՒԱԶ ՆԻՔՈԹԻՆ

ՆՈՒԱԶ ՖԵՆՈԼ

ՔԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ ԾԱԽՈՒՈՂ
ՈՐԵՒԷ ՈՒՐԻՇ ՍԻԿԱՐԷԹ

ՄԻԱՅՆ

Ք Ե Ն Թ

ՈՒՆԻ

ՆՇԱՆԱՒՈՐ

ՄԱՔՐՈՆԱՅԹ

ԶՏԻԶ



ԶՏԱԼՈՒ ԲԱՐՁՐ

ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ՈՒՆԵՑՈՂ

ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ՄԷՋ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

ԱՄԷՆԷՆ ԱՒԵԼԻ

ԾԱԽՈՒՈՂ

ՍԻԿԱՐԷԹԸ

ԱՅՍՕՐ՝ ԻՆԶՊԷՍ ՄԻՇՏ
« Ք Ե Ն Թ » ԻՐ ԶՏԻԶՈՎ
ԼԱԻԱԳՈՅՆԸ ԿԸ ԶՏԷ

ՎԱՅԵԼԵԹԷՔ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ԾԽԱՅՈՏՆԵՐՈՒ ՀԱՄԵՂ ՆԻ

ՔԱՂՅՐ ԲՈՅՐԸ ՈՒ ՕԳՏՈՒՆԵԹԷՔ

ՄԱՔՐՈՆԱՅԹ [ԶՏԻԶԻ

ԱՆՆՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵՆԷՆ

Առաջին՝ լաւագոյն սիկարէթներու կարգին
Շնորհիւ Լարիլարտի Հետազոտութեանց